«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2022

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի (այսուհետ՝ ԵԹԿՊԻ կամ ինստիտուտ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (այսուհետ՝ ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԵԹԿՊԻ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 14

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 14

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 14

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵԹԿՊԻ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 18

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 20

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 20

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 23

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 30

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 37

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 44

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 49

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 54

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 60

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 64

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 69

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 75

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 76

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 76

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 77

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 81

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 84

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 85

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 86

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի (ԵԹԿՊԻ) ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձագիտական խումբը գնահատումը իրականացրել է ԵԹԿՊԻ-ի՝ որպես ոլորտային բուհի առանձնահատկությունների դիտարկմամբ: ԵԹԿՊԻ-ի եզակի առաքելությունն է Հայաստանի Հանրապետությունում թատրոնի, կինոյի և պարարվեստի ոլորտների մասնագետների պատրաստումը բակալավրական, մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի իրականացմամբ:

2016թ.-ին առաջին հավատարմագրումն անցնելուց հետո ԵԹԿՊԻ-ն քայլեր է ձեռնարկել փորձագիտական զեկույցից հետո մշակված բարելավման ծրագրի իրականացման ուղղությամբ: Բարելավման գործողությունների պլանում էական տեղ էր հատկացված բուհի կառավարման տարբեր ոլորտները կանոնակարգող փաստաթղթերի մշակմանը, ինչը հետևողականորեն իրականացվել է 2018-2022թթ. ընթացքում: Այդուհանդերձ, բուհի գործունեության ուսումնասիրությունը, ներկայացված ինքնավերլուծությունը և հաշվետվությունները ցույց են տալիս, որ բուհի կողմից ներկայացված ծրագրի ոչ բոլոր ոլորտներն են ամբողջովին բարելավվել, ինչը հիմնականում պայմանավորված է ֆինանսական ռեսուրսների սահմանափակությամբ:

ԵԹԿՊԻ-ն ունի թատրոնի, կինոյի և պարարվեստի ոլորտներում կրթական ծրագրերի իրականացման երկարամյա փորձ: Կրթական ծրագրերի իրականացման համար ձևավորվում են արվեստանոցներ, որտեղ յուրաքանչյուր խումբ ունի իր ղեկավարը, որը տվյալ ոլորտի հայտնի և փորձառու մասնագետ է: Կուրսի ղեկավարը սերտորեն համագործակցում է մասնագիտական դասընթացների մյուս դասախոսների հետ՝ մեթոդների ընտրության նպատակահարմարությունը և ուսանողներին անհատական մոտեցման անհրաժեշտությունը քննարկելու նպատակով: Կրթական ծրագրերում մշակվել է նաև գնահատման միասնական համակարգ, թեև դասընթացների առանձնահատկությունները հաշվի առնելով՝ գնահատման բաղադրիչների տեսարարար կշիռը վերջնական գնահատականում կարող է փոխվել: Գնահատման թափանցիկությունը ապահովում է նաև բանավոր քննությունների անցկացումը հանձնաժողովի կողմից, սակայն փորձագիտական խումբը նշում է, որ բանավոր քննության գնահատականի հստակեցման համար առավել արդյունավետ կլինի կոնկրետ սանդղակների ու ռուբրիկների մշակումը: Ընդհանուր առմամբ, փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումները և դասալսումները փաստում են, որ բուհը որդեգրել և իրականացնում է ուսանողակենտրոն ուսուցում: Այս համատեքտում կարևոր է նշել նաև թիմային աշխատանքների խրախուսումը, ինչը նպաստում է ոչ միայն ուսանողների

ստեղծագործական հմտությունների, այլև ստեղծագործական խմբերում աշխատելու կարողությունների զարգացմանը:

Որպես դրական փաստ պետք է արձանագրել նաև որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը կրթական ծրագրերի բարելավման նպատակով: Պարբերաբար վերանայվում են ուսումնական պլանները, մասնավորապես կամընտրական դասընթացների կառուցամասը՝ հիմնվելով արտերկրի ծրագրերի հետ համեմատական վերլուծությունների, փոխանակման ծրագրերով արտերկրից ժամանած մասնագետների, ինչպես նաև գործատուների հետ խորհրդակցությունների, ներամբիոնային քննարկումների արդյունքների վրա: Հարկ է նշել, սակայն, որ այդ գործընթացները դեռևս հստակ կանոնակարգված չեն, և դրանց արդյունավետության գնահատումն էլ լիարժեք չի իրականացվում:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԿՊԻ-ին ունի համապատասխան որակավորում և մասնագիտական հմտություններ ունեցող ՊԴ կազմ, որն ունակ է արդյունավետորեն իրականացնել առաջարկվող կրթական ծրագրերը: Բուհը հրավիրում է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչների, ոլորտի ականավոր մասնագետների դասավանդելու և ղեկավարելու արվեստանոց: Այդուհանդերձ, բուհում առկա է սերնդափոխության խնդիրը, և փորձագիտական խումբը գտնում է, որ բուհի որդեգրած քաղաքականությունը՝ ներգրավելու մագիստրոսական ծրագրերի ուսանողներին որպես ասիստենտներ բակալավրական կրթական ծրագրերի դասընթացներում, կարող է ապագայում տալ դրական արդյունք: Փորձագիտական խումբը նշում է, որ գործատուների ներգրավվածությունը որպես դասախոսներ նպաստում է արդի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստմանը:

ԵԹԿՊԻ մասնաճյուղի նյութատեխնիկական ռեսուրսների դիտարկումը փաստում է, որ դրանք բավարար են առաջարկվող կրթական ծրագրերի իրականացման համար: Շենքերում առկա են պարասրահներ, բեմով լսարաններ, գրադարան, ֆիլմադարան և կինոսրահ, ռեկվիզիտների սենյակ, ձայնագրման սրահ, տեսա և ձայնամոնտաժային կաբինետ՝ համապատասխան համակարգչային ծրագրերով, տեսախցիկներ և այլն: Բուհը պարբերաբար թարմացնում և համալրում է նյութատեխնիկական ռեսուրսները, սակայն դրանց արդիականացման համար պետական ֆինասական աջակցության կարիք կա:

Այսպիսով, վերոնշյալ փաստերի համադրմամբ կարելի է եզրակացնել, որ ԵԹԿՊԻ-ն ունի կրթական ծրագրերի իրականացման համար համապատասխան որակավորում ունեցող ՊԴ կազմ, տրամադրում է անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ՝ ապահովելու շնորհվող որակավորումների արժանահավատությունը:

Բարձրորակ կրթություն ապահովելու հիմնանպատակից բացի ԵԹԿՊԻ-ն իր 2018-2022թթ Ռազմավարական ծրագրում սահմանել է ևս յոթ նպատակ, որոնք նախանշում են բուհի գործունեության բոլոր ոլորտները՝ հետազոտություն, միջազգայնացում, որակի ապահովում և այլն: Թեև գործող ՌԾ-ի ժամկետը լրանում է 2022թ.-ին, 2022թ.-ի սեպտեմբերին տեղի ունեցած փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ բուհը դեռևս ՌԾ-ի կատարման ամփոփում՝ թերացումների բացահայտման և վերլուծության ուղղությամբ չի իրականացրել: Փորձագիտական խումբը գտնում է, որ նման վերլուծությունը խիստ անհրաժեշտ է նոր ՌԾ-ի մշակման համար: Ստորաբաժանումների տարեկան պլանների և հաշվետվությունների

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում չեն արտացոլում ՌԾ գործողությունների պլանը, հետևաբար չեն նպաստում դրա արդյունքների վերլուծությանը, ինչի արդյունքում ՌԾ-ում սահմանված ԳԱՑ-երը դառնում են ինքնանպատակ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՌԾ-ի վրա հիմնված տարեկան պլանների և հաշվետվությունների ձևաչափի մշակումը կնպաստի հաշվետվողականության համակարգի, գործունեության արդյունքների վերլուծության և գնահատման բարելավմանը, և արտաքին և ներքին շահակիցների համար դրանց թափանցիկության բարձրացմանը: Այն կնպաստի նաև բուհի կառավարման ընթացակարգերի բարելավմանը: Բուհի կառավարման գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք իրականացվում են որոշումների կայացման կոլեգիալ սկզբունքի հիման վրա՝ բուհի ֆակուլտետների, գիտական և կառավարման խորհուրդներում: Առաձին դեպքերում որոշումների կայացումը իրականացվում է միանձնյա՝ ռեկտորի կամ ստորաբաժանումների ղեկավարների իրավասությունների շրջանակում: Այդուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կառավարման գործընթացում ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք կիրառում տեղի չի ունենում, մասնավորապես որոշումների արդյունավետության գնահատման և բարելավման առումով::

Վերոնշյալը փաստում է, որ ԵԹԿՊԻ-ում որակի ապահովման մշակույթը դեռևս լիարժեք ձևավորված չէ: Առաջին հավատարմագրումից հետո ներկայացված բարելավման գործողությունների պլանով բուհը հանձն էր առել Որակի ապահովման կենտրոնը համալրել ևս մեկ մասնագետով, մինչդեռ նախորդ հավատարմագրումից հետո ՈԱԿ-ի աշխատակիցները կրճատվել են, և այժմ բոլոր գործառույթները իրականացնում է միայն կենտրոնի ղեկավարը: ԵԹԿՊԻ ՈԱԿ-ը կիրառում է որոշ գործիքներ բուհի գործունեության գնահատման համար, այդուհանդերձ կատարված հարցումների, քննարկումների արդյունքները, ներկայացված հաշվետվությունները մանրամասն չեն վերլուծվում, և դրանց հիման վրա բարելավման ծրագրեր չեն մշակվում: Փորձագիտական խումբը գտնում է, որ որակի ապահովման գործընթացում անհրաժեշտ է ներգրավել ոչ միայն բուհի ղեկավար կազմին: Բոլոր ներքին շահակիցները՝ ՊԴ կազմը և ուսանողները պետք է տեղեկացված լինեն և ներգրավված բոլոր գործընթացներում, որպեսզի բուհում ձևավորվի որակի մշակույթ:

Փորձագիտական խմբի համոզմամբ որակի ապահովման համակարգի բարելավումը էապես կբարձրացնի կառավարման արդյունավետությունը, հաշվետվողականությունը և թափանցիկությունը:

Ինչ վերաբերում է ուսանողների ներգրավվածությանը կառավարման համակարգին, ապա նրանք, ինչպես և ՊԴ կազմի ներկայացուցիչները ընդգրկված են ֆակուլտետների խորհորդներում, գիտխորհրդում և կառավարման խորհրդում: Բուհում կրթության կազմակերպման ձևը, որտեղ, ելնելով ոլորտային առանձնահատկություններից, մեծ տեղ է հատկացվում անհատական խորհրդատվություններին, մեծապես օգնում է վերհանել ուսանողների կարիքները, և դրանք լուծում են ստանում նախքան կբարձրաձայնվեն խորհուրդներում: Բուհում գործում է ուսանողների իրավունքները պաշտպանող մարմին՝ ուսանողական

խորհուրդը, որը նաև ակտիվ հասարարական գործունեություն է ծավալում՝ կազմակերպելով միջոցառումներ, այդ թվում նաև բարեգործական:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև բուհի աշխատանքը ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց կարիքների վերհանման ուղղությամբ: Այս համատեքստում հատկապես գնահատելի է խուլուհամր ուսանողների խմբի կազմավորումը 2022-2023 ուստարում: Անհրաժեշտ է նաև քայլեր ձեռնարկել հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց կարիքների բավարարման ուղղությամբ:

Հարկ է նշել, որ նախորդ հավատարմագրումից հետո ԵԹԿՊԻ-ն առաջընթաց է արձանագրել երկու ռազմավարական ուղղություններով՝ հետազոտություն և միջազգայնացում: Ակտիվացել է բուհի մասնակցությունը միջազգային շարժունության ծրագրերին և միջազգային փառատոններին:

Գնահատելով բուհի ձեռքբերումները, այդուհանդերձ, փորձագիտական խումբը համարում է, որ ԵԹԿՊԻ-ի ՌԾ-ում և միջազգայնացման քաղաքականության մեջ դրվել են բուհի համար ոչ իրատեսական խնդիրներ՝ հաշվի առնելով բուհի մարդկային և ֆինանսական ռեսուրսները, ինչպես օրինակ՝ կրթական ծրագրերի միջազգայնացումը: Փորձագիտական խումբն առաջարկում է կրթական ծրագրերի միջազգայնացումը սկսել ավելի փոքր քայլերով՝ սկսելով միջազգային փոխանակման ծրագրերով ուսանողների ներհոսքի հնարավորությունից, ինչի համար անհրաժեշտ է ապահովել առնվազն մի քանի դասընթացի օտար լեզվով իրականացում:

ԵԹԿՊԻ-ի հետազոտական գործունեությունը գնահատելիս փորձագիտական խումբը հաշվի է առել բուհի ոլորտային առանձնահատկությունները և կրթական ծրագրերի վերջնարդյունքները, որտեղ կարևորված են ստեղծագործական հմտություններն ու կարողությունները: Ռազմավարական ծրագրում հետազոտությանը և նորարությանը վերաբերող նպատակի ներքո սահմանված խնդիրների և քայլերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բուհը հետազոտական և ստեղծագործական բաղադրիչները դիտարկում է մեկ միասնության մեջ: Այնուամենայնիվ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհում կարևորվում է ստեղծագործական բաղադրիչը: Ընդունելով այն փաստը, որ, բուհի կրթական ծրագրերի առանձնահատկություններից ելնելով, ոչ բոլոր ամբիոնները կարող են զբաղվել գիտահետազոտական գործունեությամբ, և այդ առաքելությունը իրականացնում են Արվեստի պատմության և տեսության ու Հումանիտար գիտությունների ամբիոնները, փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտական և ստեղծագործական բաղադրիչների՝ ՌԾ-ով սահմանված միասնությունը ապահովելու նպատակով պետք է կրթական ծրագրերի որոշ դասընթացներում, պրակտիկայի հանձնարարականներում, ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում հստակ սահմանել հետազոտական-վերլուծական բաղադրիչը՝ որպես գնահատման սանդղակի բաղկացուցիչ մաս:

ԵԹԿՊԻ-ին իր ուրույն տեղն է զբաղեցնում ոչ միայն ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում՝ պատրաստելով արվեստի ոլորտի մասնագետներ, այլև առանցքային դեր ունի նաև ՀՀ մշակութային կյանքում, քանի որ ՊԴ կազմը, ուսանողները և շրջանավարտները ակտիվ մասնակցություն ունեն մշակութային միջոցառումների կազմակերպման գործում: Փորձագիտական խումբը առանձնակի կարևորում է ԵԹԿՊԻ-ի մասնաճյուղերի հանրային նշանակությունը: Դրանք ոչ միայն ակտիվ մասնակցություն ունեն մարզերի մշակութային

կյանքում և ապագա մշակութային գործիչների ստեղծման օրրան են, այլև կարևոր դերակատարում ունեն մարզերից երիտասարդների հոսքը նվազեցնելու առումով:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. կառավարման մարմինների և ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի առկայությունը,
2. համապատասխան որակավորմամբ պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավումը կրթական ծրագրերի իրականացման համար,
3. բուհ-գործատու կապի ապահովումը ՊԴ կազմում արվեստի ոլորտի անվանի մասնագետների ներգրավմամբ,
4. ուսանողակենտրոն մեթոդների կիրառումը ուսումնական գործընթացում,
5. կրթական-ստեղծագործական միջավայրը,
6. որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը կրթական ծրագրերում,
7. ՊԴ կազմի և ուսանողների շարժունությունը խթանելու քաղաքականությունը,
8. մասնաճյուղերի դերը ՀՀ մարզերի մշակութային կյանքում:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ՌԾ ԳԱՑ-երի ոչ լիարժեք կիրառումը հաշվետվությունների գնահատման գործընթացում,
2. որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլի մասնակի իրականացումը կառավարման և վարչարարության բոլոր գործընթացներում,
3. կրթական ծրագրերի բովանդակության թերի ներկայացումը ՄԿԾ մասնագրերում և առարկայական նկարագրերում,
4. կրթական ծրագրերի և առարկայական նկարագրերի մշակմանն ու բարելավմանն ուղղված ՊԴ կազմի վերապատրաստումների պակասը,
5. ստեղծագործական գործունեությունում հետազոտական բաղադրիչի ոչ հստակ սահմանումը,
6. դրամաշնորհային ծրագրերի և ֆինանսական այլընտրանքային աղբյուրների բացակայությունը,
7. ՊԴ կազմի և ուսանողների՝ օտար լեզուների իմացության ոչ բարձր մակարդակը,
8. տվյալների հավաքագրման մեխանիզմների անկատարությունը,
9. ներքին շահակիցների ներգրավվածության ցածր մակարդակը որակի ապահվման գործընթացներում:

Խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Իրականացնել 2018-2022 թթ. Ռազմավարական ծրագրի կատարողականի մանրամասն վերլուծություն՝ մասնավորապես թերությունների և չիրականացված քայլերի ու դրանց պատճառների ուղղությամբ ռազմավարական նոր ծրագրի մշակումից առաջ:
2. Վերամշակել տարեկան պլանների և հաշվետվությունների գործող ձևաչափերը՝ համապատասխանեցնելով ՌԾ գործողությունների իրականացման պլանին և գնահատել դրանք ըստ ԳԱՑ-երի:

Կառավարումն ու վարչարարությունը

3. Կատարելագործել տվյալների հավաքագրման մեխանիզմները՝ կառավարչական որոշումների կայացումը տվյալահենք դարձնելու նպատակով:
4. Կիրառել Որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը կառավարման բոլոր գործընթացների լավարկման նպատակով:
5. Հաջորդ ռազմավարական ծրագրում կարևորել սահմանվող գործողությունների իրատեսականությունը և բյուջե-ռազմավարական ծրագիր փոխկապակցվածությունը:
6. Ներգրավել այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրներ բուհի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ նոր կրթական ծրագրերի մշակում և ներդնում, միջազգային կապերի ընդլայնում:

Մասնագիտության կրթական ծրագրերը

7. Ներգրավել ուսանողներին և արտաքին շահակիցներին կրթական ծրագրերի վերջնարդյունքների լրամշակման գործընթացներում:
8. Տարբերակել առարկայական նկարագրերի բովանդակությունը՝ ըստ արվեստանոցների և ղեկավարների դասավանդման առանձնահատկությունների ու մեթոդների:
9. Հստակեցնել հետազոտական բաղադրիչը որոշ դասընթացների, պրակտիկաների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շրջանակում:
10. Իրականացնել ԵԹԿՊԻ-ի և արտերկրի բուհերի համանման ծրագրերի կրեդիտների համահնչեցմանն ուղղված քայլեր:
11. Ապահովել ՄԿԾ-ների մշտադիտարկման մեխանիզմների հետևողական իրականացում:

Ուսանողները

12. Կատարելագործել ուսանողների հավաքագրման մեխանիզմները՝ կրթական ծրագրերի մասին տեղեկատվությունը հասանելի դարձնելով դիմորդների ավելի մեծ շրջանակի:
13. Բազամազանեցնել ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու մեխանիզմները՝ սահմանելով խրախուսման մեխանիզմներ:
14. Ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել ուսանողների ստեղծագործական թիմերի ձևավորման գործընթացները:
15. Համակարգել ուսանողների կրթական, ստեղծագործական և հետազոտական կարիքների գնահատման գործընթացները՝ հստակեցնելով դրանց նպատակներն ու պարբերականությունը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

16. Կազմակերպել ՊԴ կազմի վերապատրաստումներ ՄԿԾ-երի մշակման ու բարելավման ուղղությամբ:

17. Ներդնել ՊԴ կազմի կատարելագործմանն ուղղված միջոցառումների արդյունքների գնահատման մեխանիզմներ:
18. Ներդնել երիտասարդ դասավանդողների ներգրավման և խրախուսման մեխանիզմներ՝ ապահովելու ՊԴ կազմի սահուն սերնդափոխությունը:

Հետազոտությունը և զարգացումը

19. Սահմանել ամբիոնային հետազոտական ուղղություններ՝ հիմնվելով բուհի ռազմավարական առաջնահերթությունների և ռեսուրսների վրա:
20. Հետազոտական-ստեղծագործական կարողությունների ձևավորմանը միտված հանձնարարականները որպես պարտադիր պահանջ սահմանել կրթական ծրագրերում:
21. Սահմանել հետազոտական և ստեղծագործական ուղղվածությամբ ամբիոնների համատեղ գործունեության շրջանակներ:
22. ՊԴ կազմի վերապատրաստումների շրջանակում ներառել հետազոտական մեթոդներին, ինչպես նաև միջազգային գիտական հանդեսներում հրապարակումներին առնչվող դասընթացներ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

23. Մշակել և ներդնել այլընտրանքային ֆինանսական միջոցների հայթայթման մեխանիզմներ՝ պարբերաբար արդիականացնելու նյութատեխնիկական բազան:
24. Ապահովել համագործակցությունը ԵԹԿՊԻ գրադարանի և ՀՀ ու միջազգային այլ գրադարանների, էլեկտրոնային շտեմարանների միջև:

Հասարակական պատասխանատվությունը

25. Ներդնել բուհի գործունեության մասին տեղեկատվությունը հասարակության առավել լայն շրջանակներին հասանելի դարձնելու գործուն մեխանիզմներ:
26. Իրականացնել ԵԹԿՊԻ-ի և նրա գործունեության վերաբերյալ հրապարակվող և հեռարձակվող նյութերի մշտադիտարկում՝ գնահատելու հայաստանյան տպագիր մամուլում, էլեկտրոնային և լրատվական կայքերում բուհին վերաբերող նյութերի բովանդակությունը և վերլուծելու այդ նյութերի քանակական ցուցանիշները:
27. Ապահովել ԵԹԿՊԻ-ի կայքէջի եռալեզու բովանդակությունը՝ միջազգայնացման գործընթացները խթանելու նպատակով:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

28. Մշակել օտար լեզուներով դասընթացների համախումբ՝ շարժունության ծրագրերով օտարերկրյա ուսանողների ներհոսք ապահովելու նպատակով:
29. Իրականացնել օտար լեզուների իմացության կարիքների վերհանում և դրա հիման վրա իրականացնել լրացուցիչ դասընթացներ՝ ՊԴ կազմի և ուսանողների համար:
30. Զարգացնել ՊԴ կազմի և ուսանողների՝ դրամաշնորհային ծրագրերին դիմելու և միջազգային փառատոներին հայտեր ներկայացնելու կարողությունները:

Որակի ներքին ապահովման համակարգը

31. Ներգրավել համապատասխան նյութական և մարդկային ռեսուրսներ որակի ապահովման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով:

32. Ապահովել արտաքին և ներքին շահակիցների ակտիվ ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում:

33. Մշակել և ներդնել ռազմավարական բոլոր ուղղություններով բուհի գործունեության գնահատման մեխանիզմներ:

34. Իրականացնել գնահատման տարբեր գործիքների միջոցով ստացված տվյալների համապարփակ վերլուծություններ և դրանց հիման վրա համապատասխան առաջարկներ ներկայացնել բուհի ստորաբաժանումներին:

35. Ներդնել որակի ապահովման համակարգի կողմից կիրառվող գործիքակազմի արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Լիլիթ Բաղալյան
Փորձագիտական խմբի ղեկավար

Դեկտեմբերի 15, 2022 թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԵԹԿՊԻ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում հիմնական չափանիշներից մեկը տեղական և միջազգային բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ ամուր գործընկերությունն է, փորձի ձեռքբերումն ու փոխանակումը, համատեղ գործունեությունը, այդ թվում՝ հետազոտությունների և շարժունության ոլորտում: Այս ռազմավարական նպատակին հասնելու համար մշակվել է արտաքին կապերի ընդլայնման և միջազգայնացման ծրագիր, որի համար սահմանվել են հետևյալ ենթանպատակները.

ա) արտաքին կապերի և միջազգային ծրագրերի ընդլայնում,

բ) պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների շարժունության ակտիվացում:

Կինոարտադրության միջազգայնացման հեռանկարային ուղիներից մեկը միջազգային համալսարանների և կազմակերպությունների հետ համատեղ աշխատելն է: Համագործակցության հուշագրեր են ստորագրվել եվրոպական և ռուսական մի շարք առաջատար բուհերի հետ: Տեղի է ունենում գործընկերների հետ համատեղ գիտաժողովների կազմակերպում, ապահովվում է միջազգային գիտաժողովներին և փառատոներին մասնակցությունը: Ինստիտուտն այս ոլորտում ունի առաջընթաց, քանի որ 2018 թ. առաջին անգամ առաջատար Սորբոնի համալսարանի հետ համատեղ անցկացվել է Սերգեյ Փարաջանովին նվիրված միջազգային գիտաժողով:

Անձնակազմի և ուսանողների համար կա հնարավորություն մասնակցելու փոխանակման տարբեր ծրագրերին, միջազգային դրամաշնորհային ծրագրերին, ինստիտուտի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ միջազգային ծրագրերին, փառատոներին, մրցույթներին: Կան Erasmus+ շարժունության ծրագրեր եվրոպական հինգ երկրների (Իռլանդիա, Ավստրիա, Լեհաստան, Մալթա, Խորվաթիա) համալսարանների հետ: Այս բուհերի հետ համագործակցության ծրագրեր են մշակվել:

Այնուամենայնիվ, չկա դասավանդողների և ուսանողների մեծաթիվ ներգրավվածություն միջազգային ծրագրերին:

Ինստիտուտի միջազգային կապերի աշխատանքը բարելավելու և դրանք ավելի բարձր մակարդակ տեղափոխելու համար անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հիմնախնդիրներին.

- միջազգային դրամշնորհների ստացում,
- միջազգային ծրագրերին, մասնավորապես՝ Erasmus+ CBHE նախագծերին մասնակցության ակտիվացում,
- արտասահմանյան կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում,
- արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման շնորհիվ ուսանողների շարժունության ակտիվացում,
- միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակների ընդլայնում՝ ուղղված օտարերկրացի ուսանողների ներգրավմանը. այս պահին կինոյի և հեռուստատեսության ֆակուլտետի

բակալավրիատի կրթական ծրագրով միայն 1 արտասահմանցի ուսանող է սովորում,

- ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժնի աշխատանքի որակի բարելավում։

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

1. **Լիլիթ Բաղալյան՝** բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Նազիրա Մուկուշևա՝** արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր, Ղազախստանի արվեստի ազգային համալսարանի Արվեստագիտության ֆակուլտետի դասախոս, փորձագիտական խմբի միջազգային անդամ:
3. **Տիգրան Սիմյան՝** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի Արտասահմանյան գրականության ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
4. **Հայկուհի Մուկոյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կերպարվեստի ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
5. **Լիլյա Գրիգորյան՝** Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ և նշանակվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ **Մերի Բաբսեղյանը**:

Թարգմանությունը կատարել են **Աննա Խիզանցյանը** և **Քրիստինե Օհանյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, թարգմանիչներն ու համակարգողը ստորագրել են անկախության և գաղտնիության պահպանման համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ԵԹԿՊԻ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Առկա են եղել որոշակի տեխնիկական և բովանդակային թերություններ, ինչի պատճառով ինքնավերլուծությունը վերադարձվել է հաստատությանը: Սահմանված ժամկետներում ինստիտուտը ներկայացրել է ինքնավերլուծության վերանայված տարբերակը, որը համապատասխանել է սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել համապատասխան հիմքերը և ձևաչափով պահանջվող հավելվածները: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, ինստիտուտի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ինստիտուտի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
3. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
4. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան ու տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խմբի անդամները իրականացրել են նաև դասալսումներ ու ռեսուրսների դիտարկում: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]:

Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախապատրաստական այց

2022 թվականի սեպտեմբերի 19-ին տեղի է ունեցել հանդիպում ինստիտուտի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ ինստիտուտի ղեկավար կազմի հետ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2022թ. սեպտեմբերի 26-ից 29-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետ Նազիրա Մուկուշևայի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը: Միջազգային փորձագետը և թարգմանիչը այցին մասնակցել են առցանց տարբերակով:

Փորձագիտական այցը սկսվել է համալսարանի ռեկտորի պարտականությունները կատարող Լ. Արզումանյանի հետ հանդիպմամբ և ավարտվել հաստատության ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, դեկանները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են բուհի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Փորձագիտական խումբը նախատեսված այցի ընթացքում իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[3] և ռեսուրսների դիտարկում[4]:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների ու ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում՝ նախատեսելով գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար** և **անբավարար**:

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է համալսարանի լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, իրականացված դասալսումների, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է ինստիտուտին:

Փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ բուհն իր դիտարկումները ներկայացրել է նոյեմբերի 18-ին: Հաշվի առնելով բուհի դիտարկումները՝ փորձագիտական խմբի անդամները պատրաստել են զեկույցի վերջնական տարբերակը:

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

Դեկտեմբերի 15, 2022 թ.

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵԹԿՊԻ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Երևանի թատրոնի և կինոյի պատական ինստիտուտը պետական ոչ առևտրային կազմակերպություն է, ազգային և համազգային նշանակության և դերակատարության կրթական, գիտառուսումնական և մշակութային հաստատություն, որի հիմնական առաքելությունը թատերարվեստի, կինոարվեստի և հարակից մասնագիտությունների բնագավառում գիտելիքի, հմտության ու կարողության միջոցով բակալավրի, մագիստրոսի, հետազոտողի կրթական ծրագրերով որակյալ մասնագետներ պատրաստելն է՝ ուսանողակենտրոն կրթական միջավայրի ապահովմամբ, ազգային և համամարդկային նշանակության մշակութային արժեքների պահպանման ու զարգացման միտվածությամբ՝ աշխատաշուկայի ժամանակակից պահանջմունքներին համահունչ:

Երևանի թատերական ինստիտուտը հիմնադրվել է 1944 թվականին և ունեցել է երեք բաժիններ՝ դերասանական, ռեժիսորական, թատերագիտական: 1952թ. միավորվել են Թատերական և Գեղարվեստի ինստիտուտները, և ստեղծվել է Գեղարվեստաթատերական ինստիտուտը, որը 1994թ. բաժանվել է 2 առանձին բուհերի՝ Գեղարվեստի պետական ակադեմիայի և Թատերական արվեստի ինստիտուտի: 1999 թվականին բուհի մասնագիտական ուղղվածությունն ընդլայնվել է և այն ստացել է «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» անվանումը:

Կրթություն. ԵԹԿՊԻ-ում ուսուցման գործընթացը իրականացվում է

ՀՀ օրենսդրության և Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան: Ներկայումս ինստիտուտում ուսուցումը ընթանում է 6 մասնագիտությունների, 11 մասնագիտական կրթական ծրագրերի և բազմաթիվ մասնագիտացումների գծով: Ինստիտուտը մասնագետներ է պատրաստում թատերական արվեստի, պարարվեստի ռեժիսուրայի, կատարողական արվեստի, կինոարվեստի, տեսալսողական արվեստի, կերպարվեստի, ինչպես նաև արվեստի տեսության, պատմության և կառավարման ոլորտներում:

ԵԹԿՊԻ-ի ուսումնական գործընթացները կազմակերպվում են մասնագիտացված և հոսքային լսարաններում, արվեստանոցներում, պարասրահներում, կինո և տեսասրահներում, տաղավարներում:

Բուհում դասավանդում են հանրապետության մշակույթի և արվեստի լավագույն գործիչներ, ովքեր ունեն նաև միջազգային համարում՝ ժողովրդական և վաստակավոր արտիստներ, միջազգային փառատոնների հաղթողներ, պետական մրցանակների դափնեկիրներ.թվով 39 պրոֆեսորներ, 38 դոցենտներ, 102 դասախոսներ:

Հետազոտություն. Հետազոտական ոլորտում ինստիտուտի հետաքրքրություններն ու հավակնություններն ամրագրված են ԵԹԿՊԻ-ի 2018-2022թթ զարգացման Ռազմավարական ծրագրում: Հետազոտական և նորարարական աշխատանքների բնագավառում ԵԹԿՊԻ-ի քաղաքականությունն ուղղված է գերակա գիտամշակութային ուղղությունների ֆինանսական, կադրային, ենթա- կառուցվածքային, տեղեկատվական աջակցությանը, հետազոտությունների և ստեղծագործական-կիրառական մշակումների համադրմանը, գիտաժողովների պարբերաբար անցկացմանը, ինստիտուտի

պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնառողների ներգրավվածությանը հետազոտական և ստեղծագործական ծրագրերում, հետազոտական-ստեղծագործական ծրագրերի ֆինանսավորման համար հայտարարված մրցույթներում ֆակուլտետների ամբիոնների անձնակազմի մասնակցության ապահովմանը:

Միջազգայնացում. ԵԹԿՊԻ-ի 2018-2022թթ. Զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված ինստիտուտի առաքելության կարևոր բաղադրիչ է «ձևավորել ամուր գործընկերային հարաբերություններ տեղական ու միջազգային մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ՝ ԵԹԿՊԻ-ի միջազգայնացման, փորձի ձեռքբերման, փոխանակման, համատեղ գործունեություն իրականացնելու, այդ թվում՝ հետազոտությունների ու շարժունակության ապահովման նպատակով», որի իրականացման համար սահմանվել է գերակա նպատակ «Արտաքին կապերի ու միջազգայնացման ընդլայնում»-ը, ինչի ապահովման համար սահմանվել են նաև ենթանպատակները՝ արտաքին կապերի ու միջազգային ծրագրերի ընդլայնում և ՊԴ կազմի ու սովորողների շարժունության ընդլայնում:

Որակի ապահովում. Ինստիտուտը կարևորում է իր տեսլականի և առաքելության իրագործմանը միտված որակի ներքին ապահովման մշակույթի ամրապնդմանը՝ նպաստելով Բուհի բոլոր գործընթացների շարունակական բարելավմանն ու որակի մշակույթի ձևավորման ապահովումը: Որակի ապահովման ուղղությամբ ԵԹԿՊԻ-ի որդեգրված սկզբունքներին և մոտեցումներին համապատասխան՝ ինստիտուտի ռազմավարական ծրագրային բոլոր միջոցառումները որակի ապահովման համակարգի բաղադրիչներ են: Դրանք նպատակաուղղված են բուհի առաքելությանը համապատասխան գերակայությունների իրագործմանը, որի արդյունքում ակնկալվում է կրթական գործունեության շարունակական համապատասխանության ապահովում՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման համար սահմանված չափանիշերին և չափորոշիչներին:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր. ՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ԵԹԿՊԻ-ի 2018-2022 թթ. Ռազմավարական ծրագրում ձևակերպված է բուհի առաքելությունը, ըստ որի բուհը բակալավրական, մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրեր է իրականացնում՝ պատրաստելով թատերարվեստի, կինոարվեստի և հարակից ոլորտների մասնագետներ՝ ՀՀ ՈԱՇ-ի 6, 7 և 8-րդ մակարդակներին համապատասխան: Կարևոր է նշել, որ բուհը ունի մասնաճյուղեր Գյումրիում և Վանաձորում, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Դրանք ոչ միայն բարձրագույն ուսումնական հաստատություններ են, այլև կատարում են նաև յուրօրինակ մշակութային կենտրոնների գործառույթ և նվազեցնում մարզերից դեպի մայրաքաղաք երիտասարդների հոսքը:

Ռազմավարական ծրագրում ձևակերպված են նաև բուհի զարգացման տեսլականը և գործունեության սկզբունքները: Բուհի նպատակները ներկայացված են 8 ուղղություններով, դրանք են՝ 1. բարձրորակ կրթություն, 2. կողմնորոշված դիմորդներ և ուսումնառողներ, 3. բարձրորակ դասախոսական կազմ և կադրային ներուժ, 4. հետազոտություն և նորարարություն, 5. արդյունավետ կառավարում, ֆինանսական կայունություն, ժամանակակից ենթակառուցվածք, 6. հանրային ներգրավվածություն, սոցիալական համագործակցություն, 7. միջազգային և արտաքին կապեր, մշակութային հաղորդակցություն, 8. ՈԱ գործունեության ընդլայնում:

Վերոնշյալ յուրաքանչյուր նպատակի ներքո ձևակերպված են դրանց իրականացմանը միտված մի շարք խնդիրներ և անհրաժեշտ քայլեր, ինչպես նաև առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցիչները (ԳԱՑ):

Հիմնվելով 2016թ.-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում տրված խորհրդատվությունների վրա՝ ԵԹԿՊԻ-ն մշակել է նաև ՌԾ-ի գործողությունների կատարման պլան, որում ներկայացված են ծրագրային յուրաքանչյուր գործողության պատասխանատուները, անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները, ժամկետները, վերջնարդյունքները և ԳԱՑ-երը: Բուհը իրականացրել է նաև ՌԾ մշակման ընթացակարգ հաստատելու մասին փորձագիտական խմբի խորհրդատվությունը: Ըստ հաստատված ընթացակարգի նախանշվել է ՌԾ մշակման մի քանի փուլ՝ հանձնաժողովի և աշխատանքային խմբերի կազմում, բոլոր ռազմավարական ուղղություններով ներկա իրավիճակի վերլուծություն, ռազմավարական նոր ուղղությունների սահմանում, յուրաքանչյուր ուղղությամբ նախագծերի մշակում,

վերլուծություն և գնահատում, ՌԾ նախագծի մշակում, հաստատում և ներդրում, այնուհետև մշտադիտարկում և գործողությունների իրականացման բարելավում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ գործող ՌԾ-ն մեկ անգամ վերանայվել է՝ մասնավորապես հետազոտության և նորարարության ռազմավարական նպատակին առնչվող խնդիրները և քայլերը: Բուհի ներկայացուցիչները բացատրում են այս փոփոխությունը այն հիմնավորմամբ, որ դրանք կրկնել են ավելի լայն գիտական ներուժ և ֆինանսական միջոցներ ունեցող բուհերի առջև դրված խնդիրները և իրատեսական չեն եղել ԵԹԿՊԻ-ի համար: Անհրաժեշտ է նշել, որ ոչ բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման համար իրականացված ինքնավերլուծության մեջ, ոչ էլ այլ փաստաթղթերով չեն ներկայացվել, թե հատկապես որ քայլերն ու գործողություններն են ոչ իրատեսական համարվել:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ԵԹԿՊԻ-ի 2018-2022 թթ. ՌԾ-ի 8 ռազմավարական նպատակներից երկուսը՝ «բարձրորակ դասախոսական կազմ և կադրային ներուժ», «հետազոտություն և նորարարություն» ուղղությունները մասնավորապես արտացոլում են ներքին շահակիցներից ՊԴ կազմի կարիքները, ինչպիսիք են ՊԴ կազմի վերապատրաստումները, մասնագիտական կատարելագործմանը ուղղված քայլերը, ՊԴ կազմի վարկանիշավորումը, կառավարման համակարգում ներգրավումը, ստեղծագործական-գիտահետազոտական գործունեության աջակցությունը և այլն: ՊԴ կազմի կարիքները արտացոլված են նաև մի շարք այլ ուղղություններում, ինչպես օրինակ՝ միջազգայնացման շրջանակում դասախոսների շարժունության ապահովումը:

2018-2022 թթ. ՌԾ-ում ուսանողների կարիքները ներկայացված են մի քանի ռազմավարական նպատակների շրջանակում, մասնավորապես «բարձրորակ կրթություն» նպատակի ներքո, ինչը ենթադրում է որակյալ կրթական ծրագրերի տրամադրում, միջազգայանցման խնդիրների շրջանակում ուսանողների շարժունության ծրագրերի ապահովում, վարպետության դասերի կազմակերպում, փառատոնների մասնակցություն և այլն:

«Արդյունավետ կառավարում, ֆինանսական կայունություն, ժամանակակից ենթակառուցվածք» ռազմավարական նպատակի շրջանակում ձևակերպված մի շարք խնդիրներ արտացոլում են բոլոր ներքին շահակիցների կարիքները:

Արտաքին շահակիցների կարիքները ևս արտացոլված են Ռազմավարական ծրագրի մի շարք ուղղությունների ներքո, ինչպիսիք են «բարձրորակ կրթություն» (գործատուներ, դիմորդներ), «կողմնորոշված դիմորդներ, ուսումնառողներ» (դիմորդներ), «հանրային ներգրավվածություն, սոցիալական համագործակցություն» (շրջանավարտներ, դիմորդներ, գործատուներ և այլ արտաքին շահառուներ):

1.3.ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԵԹԿՊԻ-ի 2018-2022 ռազմավարական ծրագրում, ինչպես նաև ծրագրի գործողությունների իրականացման պլանում ձևակերպված են գործունեության

առանցքային ցուցիչները (ԳԱՑ): Մշակվել և հաստատվել է ՌԾ մշակման ընթացակարգ, ըստ որի նախատեսվում է ՌԾ-ի իրականացման մշտադիտարկում՝ ըստ արդյունավետության ցուցիչների:

Ռազմավարական ծրագրի խնդիրների իրականացումը հիմնականում ներկայացվում է տարբեր ստորաբաժանումների հաշվետվություններում, որոնք հաստատվում են ինստիտուտի գիտխորհրդում և ամփոփվում են ռեկտորի տարեկան հաշվետվությունում: Անհրաժեշտ է նշել, որ ստորաբաժանումների հաշվետվությունները կազմված չեն ըստ ՌԾ-ի գործողությունների իրականացման պլանի: Դրանք ներկայացնում են ֆակուլտետի, ամբիոնների և այլ ստորաբաժանումների տարեկան ուսումնամեթոդական, գիտահետազոտական, կազմակերպչական աշխատանքների ամփոփում, սակայն դրանցում չեն վերլուծվում տվյալ ուստարում ՌԾ-ով սահմանված քայլերի չիրականացման, թերացումների հնարավոր պատճառները: Ռազմավարական ծրագրի գործողությունների իրականացման պլանով նախատեսված տվյալ ուսումնական տարվա խնդիրների իրականացման վերլուծություն ներկայացված չէ նաև ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ:

Փորձագիտական խմբին տրամադրվել է ՌԾ կատարողականի վերլուծության միայն մեկ փաստաթուղթ, որը ներկայացվել է 2020թ.-ին ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Այն ներառում է 4-ից 8-րդ ռազմավարական ուղղություններով սահմանված խնդիրների իրականցման ուղղությամբ տարված աշխատանքների վերլուծություն, որի համաձայն ՌԾ-ում սահմանված մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են «ԵԹԿՊԻ-ի գիտահետազոտական գործունեության զարգացման ծրագրի» հաստատումը, գիտաժողովների կազմակերպումը, «Հանդես» գիտամեթոդական հոդվածների ժողովածուի հրատարակումը, վարպետության դասերի կազմակերպումը, պրակտիկայի կազմակերպման նպատակող գործատուների շրջանակի ընդլայնումը և այլն, իրականացվել են: Տվյալ փաստաթղթում նշված են նաև մի քանի խնդիրներ, մասնավորապես հետազոտությանը և միջազգայնացմանը առնչվող քայլեր, ինչպես օրինակ՝ գիտական հոդվածների տպագրումը միջազգային գիտական շտեմարաններում, համատեղ կրթական ծրագրերի իրականացումը, որոնք բուհի կողմից գնահատվել է այդ պահի դրությամբ դեռևս անիրատեսական՝ պայմանավորված ինստիտուտի ֆինանսական հնարավորություններով, օտար լեզվի իմացության մակարդակով կամ գործող գիտահետազոտական և միջազգային ծրագրերի բացակայությամբ:

Դատողություններ: Հիմնվելով ԵԹԿՊԻ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի, այդ թվում նաև ինքնավերլուծության, ինչպես նաև փորձագիտական այցի ընթացքում ձեռք բերված տվյալների և դիտարկված գործընթացների վրա՝ կարելի է փաստել, որ բուհը իրականացնում է իր առաքելությունը համաձայն ՀՀ ՈԱՇ բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի:

ԵԹԿՊԻ-ի 2018-2022 Ռազմավարական ծրագրում սահմանված 8 ռազմավարական ուղղությունների ներքո արտացոլված են ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Փորձագիտական խմբի կողմից հավաքագրված փաստերը

թույլ են տալիս եզրակացնելու, որ բուհին հաջողվել է իրականացնել ռազմավարական ծրագրով սահմանված քայլերի զգալի մասը:

Գովելի է նաև, որ, հետևելով նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացից հետո տրված խորհրդատվություններին, բուհում մշակել են ՌԾ մշակման ընթացակարգ և ՌԾ գործողությունների իրականացման պլան: Մասնավորապես, կարևոր է գործունեության առանցքային ցուցիչների սահմանումը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ այդ ցուցիչները չեն կիրառվում ինստիտուտի ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների գնահատման համար: Բուհում գործող հաշվետվությունների, այդ թվում նաև ռեկտորի տարեկան հաշվետվության ձևաչափը հնարավորություն չի կարող տալ ռազմավարական ծրագրի իրականացումը համակողմանի գնահատելու, և վեր հանելու այն խնդիրները, որոնց ուղղությամբ բավարար քայլեր չեն արվել, ինչը կօգներ վերլուծել հնարավոր պատճառները և անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել: Եթե նշված գործընթացները իրականացվում են, ապա դա, ըստ երևույթին, կատարվում է բանավոր քննարկումների ընթացքում, և փաստաթղթավորված չէ: Հաշվի առնելով, որ Ռազմավարական ծրագրի ժամկետը 2022թ.-ին ավարտվում է՝ փորձագիտական խումբը կարևորում է ինստիտուտի կողմից դրա կատարողականի վերլուծության իրականացումը՝ մասնավորապես չիրականացված քայլերի առումով, ինչը հիմք կդառնա նոր ռազմավարական ծրագրի մշակման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհը գործում է 2018-2022թթ. Ռազմավարական ծրագրում սահմանված առաքելությամբ, ունի ՌԾ-ում հստակ ձևակերպված տեսլական, 8 ուղղություններով ռազմավարական նպատակներ, որոնք ընդգրկում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, ինչպես նաև քայլերի իրականացման գնահատման կողմնորոշիչ ցուցիչները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԿԹԻ-ն բավարարում է 1-ին չափանիշի պահանջները:

Եզրակացություն: ԵԹԿՊԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԵԹԿՊԻ-ում առկա են մի շարք կանոնակարգեր, որոնցով բուհի ղեկավարությունը առաջնորդվում է որոշումներ կայացնելիս՝ ԵԹԿՊԻ կանոնադրություն, ԵԹԿՊԻ կառավարման և վարչարարության քաղաքականություն, ԵԹԿՊԻ ակադեմիական

ազնվության կանոնակարգ, ԵԹԿՊԻ ՊՈԱԿ-Ի ներքին կարգապահական կանոններ, ԵԹԿՊԻ-ի էթիկայի կանոնակարգ և այլն: Վերջին հինգ տարում մշակվել և վերամշակվել է 23 փաստաթուղթ, որոնցով կանոնակարգվում է բուհի գործունեությունը տարբեր ոլորտներում և կառուցվածքային ստորաբաժանումներում:

Բուհում որոշումները կայացվում են ֆակուլտետների խորհուրդներում, գիտական խորհրդում և կառավարման խորհրդում: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ կառավարման խորհրդի նոր կազմը 2022 թ.-ի հունվարին է հաստատվել, և բոլոր անդամները չէ, որ լիարժեք տեղյակ են բուհում իրականացվող գործընթացներից և թե ինչ նախաձեռնություններով կարող են հանդես գալ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ բուհի փոքր լինելու շնորհիվ խնդիրների քննարկումը իրականացվում է ամենօրյա ռեժիմով, և որոշումները կայացվում են միանձնյա և կոլեգիալ կառավարման ձևերի զուգակցմամբ:

Ըստ ԵԹԿՊԻ-ի ինքնավերլուծության՝ նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո իրականացվել են կառուցվածքային փոփոխություններ՝ Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնը տարանջատվել է Միջազգային հարաբերությունների բաժնի և Լրացուցիչ, շարունակական կրթության և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի, կրճատվել է ֆինանսատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնը, բացվել է Ստեղծագործական և հեռանկարային զարգացման գծով պրոռեկտորի պաշտոնը: Փորձագիտական այցի ժամանակահատվածում առկա էր երեք պրոռեկտորների հաստիք՝ Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, Միջազգային և արտաքին կապերի գծով պրոռեկտոր և Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր:

Կրթական ծրագրերն իրականացվում են երեք ֆակուլտետներում՝ Թատրոնի, Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի, Արվեստի պատմության, տեսության և կառավարման, որոնց ներքո գործում են 8 ամբիոններ: Գյումրիում և Վանաձորում տեղակայված մասնաճյուղերը կառավարվում են մասնաճյուղերի ղեկավարների կողմից, որոնք հաշվետու են ԵԹԿՊԻ-ի ռեկտորին և կառավարման խորհրդին: Երևանի գլխամասում գործող ամբիոնները պատասխանատու են նաև մասնաճյուղերում կրթական ծրագրերի իրականացման համար:

ԵԹԿՊԻ-ն ապահովված է համապատասխան ուսումնաօժանդակ կազմով ֆակուլտետներում և ամբիոններում, ինչպես նաև այլ ստորաբաժանումներում, բացառությամբ Որակի ապահովման կենտրոնի և Կարիերայի և պրակտիկայի կենտրոնի, որոնք ունեն միայն ղեկավար:

Բուհի ֆինասական հնարավորությունները սահմանափակ են: Թեև բուհն ունի կրթական ծրագրերը իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, և հաշվետու ժամանակահատվածում վերջինս համալրվել է, կատարվել են վերանորոգման աշխատանքներ, այն պարբերաբար արդիականացնելու համար բավարար ֆինանսական ռեսուրսներ չկան: ԵԹԿՊԻ-ն գործատուների հետ համագործակցության շրջանակում օգտվում է նաև նրանց ռեսուրսներից, անհրաժեշտության դեպքում դիմում է նաև պետությանը աջակցություն ստանալու համար:

Հարկ է նշել նաև, որ ըստ Ռազմավարական ծրագրի նախատեսվում էր «Բուհի տարեկան բյուջեն կազմել ըստ ՌԾ-ի առանձին նպատակների իրականացման համար նախատեսված գործունեությունների», ինչը սակայն չի իրականացվում:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ԵԹԿՊԻ կանոնադրության և ԵԹԿՊԻ կառավարման և վարչարարության քաղաքականության համաձայն ներքին շահակիցները՝ ՊԴ կազմի և ուսանողների ներկայացուցիչները ներգրավված են կառավարման բոլոր օղակներում՝ ֆակուլտետի խորհուրդ, գիտական խորհուրդ և կառավարման խորհուրդ:

Փորձագիտական այցի ընթացքում ուսանողները փաստեցին, որ իրենց մասնակցությունը ձևական բնույթ չի կրում և նրանք հաճախ բարձրաձայնում են իրենց հուզող հարցերը: Ուսանողներն իրենց խնդիրները հիմնականում քննարկում են կուսղեկների և դեկանների հետ, և դրանք լուծում են ստանում նախքան ֆակուլտետի խորհուրդ կամ գիտական խորհուրդ հասնելը: Նման հարցերից են եղել պրակտիկային, ավարտական աշխատանքների կամզակերպմանն առնչվող հարցերը:

Կառավարման խորհուրդներում ներկայացված է նաև ՊԴ կազմը: Ելնելով բուհի առանձնահատկությունից՝ ՊԴ կազմի որոշ անդամներ միաժամանակ և ներքին և արտաքին շահակիցներ են: ՊԴ կազմի խնդիրները, ռեսուրսների վերաբերյալ պահանջները ևս նախնառաջ բարձրաձայնվում և լուծում են ստանում ամբիոններում:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ԵԹԿՊԻ-ի գործունեության երկարաժամկետ պլանավորումը ներկայացված է Ռազմավարական ծրագրում, որը միտված է ինստիտուտի տեսլականի իրականացմանը: ՌԾ գործողությունների կատարման պլանում սահմանված են ՌԾ-ի ռազմավարական 8 ուղղություններով հաստատված միջնաժամկետ քայլերը և ԳԱՑ-երը, որոնք կարող են մշտադիտարկման գործիք դառնալ:

Կարճաժամկետ պլանավորումն իրականացվում է ստորաբաժանումների մակարդակում՝ դրանց տարեկան աշխատանքային պլանների միջոցով: Ֆակուլտետների և ամբիոնների տարեկան պլանների համեմատությունը ցույց տվեց, որ դրանք տարեցտարի նույնական են, դրանցում ներկայացված են միայն հիմնական գործառույթները և թույլ է կապը ՌԾ-ի հետ:

Ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններն ամբողջությամբ չեն արտացոլում ՌԾ գործողությունների կատարման պլանը, և չկան փաստեր, որ հաշվետվությունները գնահատվում են ըստ գործողությունների կատարման պլանում սահմանված ԳԱՑ-երի:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

ԵԹԿՊԻ-ում տվյալների հավաքագրումը հիմնականում իրականացում է հարցումների միջոցով: Սակայն այդ հարցումների համապարփակ վերլուծության, կամ այդ վերլուծությունների հիման վրա կայացված որոշումների արձանագրություններ առկա չեն: Ինքնավերլուծությունում որպես հարցման տվյալների վրա հիմնված որոշման օրինակ է ներկայացվել համակարգչային հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացը: Դրա անհրաժեշտությունը ՊԴ կազմի շրջանում ծագել է Covid-19 համավարակի պայմաններում, երբ դասընթացները իրականացվել են առցանց ձևաչափով: SS վերապատրաստման դասընթացը ևս անցկացվել է առցանց, տեսանյութերը դրվել են Google Classroom-ում, կազմվել ու տպագրվել են նաև ուղեցույց-բրոշյուրներ:

2022-23 ուստարում, հիմնվելով ֆիզիկական խնդիրներով դիմորդների կարիքների վերլուծության վրա, ԵԹԿՊԻ-ում բացվել է խուլուհամր ուսանողների 6-հոգանոց խումբ «Դերասանական արվեստ» կրթական ծրագրով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ որոշումները երբեմն կրում են փորձարարական բնույթ և կայացվում են ռեկտորատի անդամների քննարկումների արդյունքում: Օրինակ՝ «Կինոարվեստ» կրթական ծրագրում կատարվել են փոփոխություններ, մասնավորապես որդեգրվել է այնպիսի մոտեցում, որ յուրաքանչյուր կուրսում խմբերը ըստ հաջորդականության կանցնեն խաղարկային, վավերագրական և հեռուստատեսային ֆիլմերի ռեժիսուրա[5], իսկ 4-րդ կուրսում կորոշեն, թե դիպլոմային աշխատանքը որ ուղղությամբ են ցանկանում իրականացնել: Տվյալ որոշմանը նախորդել են քննարկումներ, այդուհանդերձ դրա հիմքում դրված չէ մանրամասն համեմատական վերլուծություն՝ բենչմարքինգ:

Որոշ կրթական ծրագրերում դիմորդների թիվ բարձրացնելու նպատակով վերանայվել են վարձավճարները բակալավրական կրթական ծրագրերում՝ 600.000 ՀՀ դրամի փոխարեն սահմանվել է 500.000 ՀՀ դրամ «Պարարվեստ» և 400.000 ՀՀ դրամ «Սցենարադրամատուրգիական արվեստ» և 450.000 ՀՀ դրամից նվազեցրել է 400.000 ՀՀ դրամ «Կինոգիտություն» և «Թատերագիտություն» մասնագիտությունների համար[6]: Այնուամենայնիվ, այս որոշումը «Կինոգիտություն» և «Թատերագիտություն» բակալավրական կրթական ծրագրերով դեռևս արդյունք չի տվել, քանի որ արդեն մի քանի տարի է բուհը այդ ծրագրերով ընդունելություն չի ունենում:

Կրթական ծրագրերի իրականացման համար բուհի ղեկավարությունը որդեգրել է մի շարք մոտեցումներ, որոնք հնարավորություն են տալիս միաժամանակ մի քանի կարևոր խնդիր լուծել: ՊԴ կազմը համալրելու նպատակով հրավիրվում են ոլորտի առաջատար մասնագետներ՝ ռեժիսորներ, դերասաններ, օպերատորներ, որոնք ապահովում են ուսանողների գործնական հմտությունների և կարողունակությունների ձևավորումը և զարգացումը: Տվյալ մոտեցումը օգնում է լուծել նաև ուսանողների պրակտիկայի, իսկ հետագայում նաև շրջանավարտների զբաղվածության հարցերը:

[5] Միտքը վերաձևակերպվել է բուհի դիտարկումների հիման վրա:
[6] Միտքը վերաձևակերպվել է բուհի դիտարկումների հիման վրա:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ԵԹԿՊԻ-ի ինքնավերլուծության համաձայն ինստիտուտում բոլոր գործընթացների համար ներդրվել է ՊԻԳԲ շրջափուլը, մասնավորապես որպես օրինակ մատնանշվում է ՄԿԾ-ների մշակման, իրականացման, գնահատման և բարելավման գործընթացը:

Վերջին հինգ տարիների ընթացքում, հիմնվելով փորձագիտական զեկույցում տրված խորհրդատվությունների, ինչպես նաև բուհի կարիքների վրա մշակվել և հաստատվել են կառավարման և վարչարարության գործընթացները համակարգող մի շարք փաստաթղթեր, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նկատելի չէ դրանց կիրառումից հետո գնահատման ու բարելավման փուլերի իրականացումը: Բացի այդ, հարկ է նշել, որ անցկացվում են բուհի մասին հարցումներ շրջանավարտների շրջանում, սակայն տվյալներ չկան, թե ինչպես են դրանք վերլուծվել և ինչ քայլեր են դրանից հետո ձեռնարկվել:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Բուհը կարևորում է մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկումը և գործընթացն առավել կանոնակարգելու նպատակով մշակվել է «Մասնագիտական կրթական ծրագրերի զարգացման և մշտադիտարկման ընթացակարգ»:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված ինքնավերլուծության մեջ նշված են մի շարք մեխանիզմներ, մասնավորապես՝ հարցումներ, դասախոսի գնահատում, դասընթացի գնահատում, կրթական միջավայրի գնահատում, շրջանավարտների հարցում, ներքին կառույցների գործունեության գնահատում, միջոցառումների արդյունավետության գնահատումներ, ֆոկուս խմբեր: Կրթական ծրագրերի արդյունավետության մասին տեղեկատվություն է ստացվում նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների միջոցով: Այնուամենայնիվ, վերոնշյալ հարցումների վերլուծություն և առաջարկներ ներկայացված չեն որակի ապահովման կենտրոնի կամ ամբիոնների կողմից: Օրինակ՝ տվյալներ չկան, թե ամբիոններում ինչպես են քննարկվում ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, որոնք բավականին հակասական պատկեր են տալիս:

ԵԹԿՊԻ-ում վերոնշյալ մեխանիզմների բացակայությունը բացատրում են այն փաստով, որ բուհի ՊԴ կազմում ներգրավված են գործատուները՝ որպես կուրսղեկներ, որոնք էլ ապահովում են կրթական ծրագրերի արդյունավետության մասին տեղեկատվությունը, համագործակցում են իրենց ղեկավարած կուրսում դասավանդող մյուս դասախոսների հետ, քննարկում և ընտրում տվյալ կուրսում դասավանդման նպատակահարմար մեթոդները, ինչպես նաև յուրաքանչյուր ուսանողին անհրաժեշտ մոտեցումները: Կուրսղեկները խնդիրները քննարկում են նաև ուսանողների հետ և կատարում փոփոխությունները: Նման պարագայում հարցումները շահակիցների կողմից չեն դիտարկվում որպես կարիքների վերհանման կարևոր մեխանիզմ:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

ԵԹԿՊԻ-ում կրթական ծրագրերի մասին տեղեկատվությունը հրապարակվում է ինստիտուտի կայքէջում: Կրթական ծրագրերում սովորող ուսանողների քանակի, նրանց միջին գնահատականների և ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին տեղեկատվությունը ներկայացվում է ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ, որը ևս հրապարակվում է կայքում և էլեկտրոնային տարբերակով ուղարկվում կառավարման խորհրդի անդամներին:

Շնորհվող որակավորումների որակի գնահատում կարելի է համարել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

Ըստ Ինքնավերլուծության՝ բուհը քանակական ցուցանիշ է համարում իր շրջանավարտների զբաղվածության բարձր աստիճանը, ինչի մասին վկայում են շրջանավարտների շրջանում վերջին տարիներին իրականացված հարցումները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԵԹԿՊԻ-ում առկա բոլոր գործընթացները կանոնակարգելու միտումը՝ համապատասխան կանոնակարգերի և ընթացակարգերի մշակմամբ և հաստատմամբ: Գովելի է նաև որոշումների կայացման կանոնակարգված համակարգը՝ կառավարման, գիտական և ֆակուլտետների խորհուրդներում՝ կոլեգիալ սկզբունքով:

Գովելի է նաև այն փաստը, որ վերոնշյալ խորհուրդներում ներգրավված են ներքին շահակիցները՝ ՊԴ կազմի և ուսանողների ներկայացուցիչները, և նրանց ձայնը լսելի է որոշումների կայացման հարցում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ մի շարք որոշումներ հիմնված են կարիքների վերլուծության վրա: Օրինակ՝ Միջազգային հարաբերությունների բաժնի՝ որպես առանձին ստորաբաժանման ստեղծումը կարելի է արդարացված գնահատել, քանի որ բուհում սկսել են ակտիվանալ միջազգայնացմանն ուղղված միջոցառումները: Մյուս կողմից նկատելի են փորձարարական որոշումներ, ինչպես օրինակ՝ «Կինոարվեստ» ՄԿԾ-ի բովանդակային փոփոխությունը, ըստ որի խաղարկային, վավերագրական և հեռուստատեսային ֆիլմերի ռեժիսուրան միավորվել է մեկ ծրագրում: Հաշվի առնելով այն փաստը, որ փորձագիտական այցի ընթացքում շահակիցներն ունեին հակասական ընկալումներ տվյալ փոփոխության վերաբերյալ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ շրջափուլի ավարտից հետո ամբողջական գնահատումը կնպաստի ՄԿԾ-ների հետագա արդյունավետ պլանավորմանը: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ բուհի կառավարման համակարգում և վարչարարական գործընթացներում դեռևս լիարժեքորեն չի գործում որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև հարցումների անցկացումը ներքին և արտաքին շահակիցների շրջանում: Անշուշտ, այդ գործընթացը ավելի արժեքավոր և արդյունավետ կլիներ, եթե իրականացվեին տվյալների մանրամասն վերլուծություններ, որոնց հիման վրա կարվեին առաջարկներ, և կընդունվեին

որոշումներ: Այցի շրջանակում հիշատակվեց միայն նման մեկ օրինակ՝ SS վերապատրաստման դասընթացը ՊԴ կազմի համար: Մյուս կողմից պետք է նշել, որ բուհը չունի համապատասխան ֆինանսական ռեսուրսներ որոշ վերհանված խնդիրներին լուծումներ տալու համար, օրինակ՝ նոր կրթական ծրագրեր ներդնելու համար, հետևաբար հարցումները երբեմն ինքնանպատակ են: Այս առումով փորձագիտական խումբը նպատակահարմար է համարում բուհի կողմից ֆինանսավորման այլ աղբյուրների որոնման ուղղությամբ քայլերի ձեռնարկումը:

Ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը հնարավորություն չի տալիս նաև բուհի բյուջեն կազմել ըստ ռազմավարական նպատակների, ինչպես նաև մտածել բոլոր ուղղություններով երկարաժամկետ պլանավորման մասին: Ինչ վերաբերում է միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորմանը, ապա այստեղ ևս առկա են խնդիրներ: Փորձագիտական խումբը համարում է, որ միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների կազմումը ըստ Ռազմավարական ծրագրի, դրանց համապարփակ գնահատման հնարավորություն կտա:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԵԹԿՊԻ-ի ստորաբաժանումները ունեն իրենց կանոնադրությունը և ապահովված են մարդկային և նյութատեխնիկական համապատասխան ռեսուրսներով: Այնուամենայնիվ, Որակի ապահովման կենտրոնն ու Կարիերայի և պրակտիկայի կենտրոնը չունեն բավարար մարդկային ռեսուրսներ՝ տվյալ ստորաբաժանումների բոլոր գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար:

Գովելի է, որ կրթական ծրագրերի մշտադիտարկումը բուհի համար առաջնահերթություն է: Այս գործընթացը անընդհատ բնույթ է կրում, քանի որ, ելնելով բուհի յուրահատկությունից, մասնագիտական դասընթացները վարող կուրսղեկները հիմնականում նաև գործատուներն են, որոնք ապահովում են հետադարձ կապը ՄԿԾ-ների պատասխանատուների, ամբիոնների վարիչների և իրենց ղեկավարած խմբում դասավանդող դասախոսների հետ, ինչի շնորհիվ էլ անհրաժեշտության դեպքում փոփոխվում է դասընթացների բովանդակությունը, կամընտրական դասընթացները և այլն: Գնահատելով դրական կողմերը, փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել բազմապիսի հարցումների արդյունքների վերլուծությանը և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվություններում մատնաշված խնդիրներին, քանի որ դրանք շնորհիվող որակավորումների որակի գնահատման հիմնական մեխանիզմն են՝ գործատուների շրջանում հարցումների հետ մեկտեղ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհում որոշումները կայացվում են միանձնյա և կոլեգիալ կառավարման համակարգի զուգակցմամբ, առկա են կառավարման և վարչարարության գործընթացները կարգավորող կարգեր և ընթացակարգեր, ստորաբաժանումները գործում են ըստ իրենց կանոնադրությամբ սահմանված գործառույթների, դրանց մեծ մասը ապահովված է մարդկային և նյութական ռեսուրսներով, ներդրված են բուհի գործունեության տարբեր ոլորտների պլանավորման և գնահատման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԿՊԻ-ն բավարարում է 2-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: ԵԹԿՊԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Ըստ ինքնավերլուծության՝ ԵԹԿՊԻ 2018-2022թթ. զարգացման Ռազմավարական ծրագրով բուհի առաքելության իրականացման համար սահմանված գերակա նպատակներից է «Բարձրորակ կրթություն»-ը: Այս համատեքստում հատկապես բուհի կողմից կարևորվում են առաջարկվող կրթական ծրագրերի համապատասխանությունը աշխատաշուկայի առկա պահանջներին, ինչպես նաև դրանց բովանդակային և կառուցվածքային պարբերական կատարելագործման՝ Որակավորումների ազգային շրջանակին և փոփոխվող արտաքին պահանջներին համահունչ:

2014 թվականի օգոստոսին հաստատվել է «Մասնագիտական ծրագրերի մշակում, հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում» ընթացակարգը, որում ներկայացվում են նոր ՄԿԾ-երի պահանջները, ուսումնառության վերջնարդյունքների մշակման և հաստատման ընթացակարգը, ինչպես նաև կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգն ու ձևաչափը:

Բուհը 3 ֆակուլտետներում և 2 մասնաճյուղերում իրականացնում է ընդհանուր 22 մասնագիտական կրթական ծրագիր՝ 11-ը բակալավրիատում և 11-ը մագիստրատուրայում: Ինստիտուտը նաև իրականացնում է կրթական ծրագրեր հետբուհական կրթության մակարդակում:

ԵԹԿՊԻ-ն ՀՀ-ում թատրոնի և կինոյի ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է: Ինստիտուտը ոլորտի համար պատրաստում է դերասաններ, ռեժիսորներ, օպերատորներ, պարարվեստի ռեժիսորներ, թատերագետներ, կինոգետներ, սցենարիստներ և այլն), որոնք զբաղեցնում են թատրոնի և կինոյի ոլորտում աշխատաշուկայի հիմնական աշխատատեղերը:

Ըստ ինքնավերլուծության՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու և արտաքին ու ներքին շահակիցների կարիքներին առավելագույնս համապատասխանեցնելու նպատակով: Վերամշակված ՄԿԾ-ների նախագծերի դրույթները քննարկվել են համապատասխան ամբիոնների նիստերում, Ռեկտորատում և Գիտխորհրդում, գործատուների, ուսանողների հետ և սկսել են իրականացվել 2020-2021 ուստարվանից:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրությունը կատարվել է սահմանափակ թվով գործատուների հետ հանդիպումների միջոցով: Ուսանողները ակտիվ մասնակցություն չեն ունեցել ՄԿԾ-երի մշակման գործընթացին:

Կրթական ծրագրերի մասնագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսումնառության վերջնարդյունքների համադրում ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչների հետ արված չէ, բացակայում է համապատասխան քարտեզագրումը:

ՄԿԾ-ներում հիմնականում պահպանված է առարկաների բովանդակային հաջորդականությունը, որոնք բաժանված են ըստ կառուցամասերի (առարկաների փոխկապակցվածությունը): Մյուս կողմից, փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՄԿԾ-ների վերջնարդյունքերի ու առարկայական նկարագրերի վերջնարդյունքերի քարտեզագրման մեջ որոշակի անհամապատասխանություններ են նկատելի:

ՄԿԾ-ներին առնչվող մեկ այլ կարևոր փաստ է դասընթացների առարկայական նկարագրերում դասընթացի նպատակների, խնդիրների, վերջնարդյունքների և բովանդակության ոչ լիարժեք ներկայացումը: Օրինակ՝ մասնագիտական դասընթացների նկարագրերում չի երևում վերջնարդյունքների զարգացման դինամիկան տարբեր կուրսերում: Նույնը վերաբերում է նաև բովանդակությանը և հանձնարարությունների բազմազանությանը: Փորձագիտական այցի շրջանակներում իրականացված դասալսումներից պարզ դարձավ, որ այդ դասընթացները և բովանդակային, և մեթոդական առումով շատ ավելի հագեցած են, քան ներկայացված է առարկայական նկարագրերում: Բացի այդ միևնույն դասընթացներ դասավանդող դասախոսները ունեն յուրովի մեթոդներ և մոտեցումներ, որոնք չեն արտահայտված իրենց նկարագրերում: Անհրաժեշտ է նշել նաև, որ օրինակ՝ բակալավրիատի և մագիստրատուրայի «Կինոարվեստ» մասնագիտության կրթական ծրագրերում ներկայացված է միևնույն նպատակը, մինչդեռ մյուս կրթական ծրագրերում նպատակները հստակ տարանջատված են:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ԵԹԿՊԻ-ի 2018-2022 թթ. ՌԾ-ում, ինստիտուցիոնալ հավատագրման ինքնավերլուծության մեջ, ինչպես նաև ՄԿԾ-ներում շեշտվում է ուսանողակենտրոն ուսուցման կարևորությունը: Դասավանդման և ուսումնառության մեթոդները ձևակերպված են ՄԿԾ-ներում՝ ըստ առանձին վերջնարդյունքների, մեթոդները տարբերակված են՝ ըստ գիտելիքի, կարողության և հմտության: Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման գործընթացը կազմում է ինստիտուտի ռազմավարական պլանավորման կարևոր խնդիրներից մեկը: Ինքնավերլուծության համաձայն՝ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունն իրականացվում է «ԵԹԿՊԻ-ում ՄԿԾ-ների մշակման և նախագծման ուղեցույց»-ի պահանջներին համապատասխան՝ դասախոսություններ, գործնական պարապմունքներ,

խմբային աշխատանքներ, ուսանողի անհատական աշխատանք և այլն: Ուսանողներին տրվող հանձնարարականների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանց բազմազանությունը պայմանավորված է դասընթացների առանձնահատկություններով՝ սկսած տեսական գրականության մշակումից մինչև տարբեր բարդության էտյուդների ներկայացում, բեմադրություններ՝ սեփական սցենարի հիման վրա և այլն:

Փորձագիտական այցի շրջանակում անցկացված դասալսումները ցույց տվեցին, որ դասախոսները կիրառում են դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդներ՝ ինտերակտիվ, նախագծային, նաև թիմային աշխատանքներ: Բուհի վարչակազմը, ինչպես նաև ՊԴ կազմը խրախուսում են թիմային աշխատանքները ոչ միայն մեկ խմբի, այլև բուհում իրականացվող մի շարք կրթական ծրագրերի ուսանողների միջև՝ բեմադրությունների և ֆիլմերի նկարահանման շրջանակում: Տարբեր բաժիններում սովորող ուսանողներ համագործակցում են իրենց իսկ նախաձեռնությամբ՝ աշխատելով միևնույն նախագծի վրա: Օրինակ՝ չորրորդ կուրսի ուսանողը սցենար է գրում ռեժիսորի համար: Արդյունքում՝ ձևավորվում են ուսանողների և շրջանավարտների ստեղծագործական խմբեր: Հարկ է նշել, որ տվյալ գործունեությունը բուհում դեռևս ինստիտուցիոնալացված չէ:

Կարևորվում է նաև անհատական մոտեցման ցուցաբերումը ուսանողների անձնային առանձնահատկությունների և ունակությունների հաշվի առմամբ, ինչը իրականացվում է խորհրդատվությունների ձևով, կամ, որոշ դասընթացների դեպքում, օրինակ՝ բեմերգ, բեմական խոսք, անհատական պարապմունքների միջոցով: Հարկ է նշել, որ վերոնշյալը մեծ մասամբ արտացոլված չէ դասընթացների առարկայական նկարագրերում:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ԵԹԿՊԻ-ում ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումը կատարվում է «Ուսանողների գիտելիքների գնահատման» կարգի համաձայն (2019 թ.), ըստ որի ինստիտուտում գործում է գնահատման բազմագործոնային համակարգ, որտեղ անցումային շեմը 20-ից 8-միավորն է՝ արտահայտված նաև տառային սանդղակով: Գնահատման բաղադրիչներում ներառված է հաճախումներ (20%), միջանկյալ ստուգում (40%), եզրափակիչ ստուգում (40%): Եզրափակիչ ստուգումները կազմակերպվում են (քննություն-ստուգարք) ձևաչափով:

Մասնագիտական կրթամասի դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը ձևավորվում է ֆակուլտետի խորհրդի կողմից սահմանված ստուգման ձևով, առարկաների տեսակարար կշռի համամասնությամբ՝ առարկաների արդյունարար գնահատականների հաշվարկներով:

Ուսանողների ամփոփիչ ատեստավորման արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար» և «անբավարար»՝ գնահատման բնութագրիչների հաշվառմամբ, գնահատականի թվային համարժեքով: Առկա է նաև միջանկյալ և եզրափակիչ ստուգումների ու ավարտական աշխատանքի գնահատման բողոքարկման համակարգ:

Գիտելիքի ստուգումը և գնահատումը անցկացվում և ամրագրվում է դասընթացի առարկայական նկարագրում ներկայացված գնահատման բաղադրիչների հիման վրա: Փորձագիտական խմբի կողմից փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ առարկայական նկարագրերում բանավոր քննությունների համար մշակված չեն գնահատման հստակ ռուբրիկներ: Գործնական դասընթացների գնահատումը, օրինակ՝ Բեմական խոսք, իրականացվում է ամբիոնի կողմից կազմված հանձնաժողովի կողմից:

Եզրափակիչ ստուգման հարցաթերթիկների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հիմնականում բացակայում են առանձին հարցերի գնահատման համար սահմանված միավորները: Հարկ է նշել նաև, որ որոշ դասընթացների շրջանակում միջանկյալ և եզրափակիչ քննությունների հարցաշարերում ընդգրկված հարցերը ենթադրում են միայն տեղեկատվության վերարտադրում, մինչդեռ կան դասընթացներ, որտեղ ընդգրկված է նաև ուսանողի անհատական վերլուծություն պահանջող հարց, օրինակ՝ «Ֆիլմի տեսություն» դասընթացը: Անհրաժեշտ է նշել նաև, որ ամբիոններում պարբերաբար վերանայվում են դասընթացների գնահատման բաղադրիչներն ու դրանց կշիռը վերջնական գնահատականի ձևավորման մեջ:

Պրակտիկաների գնահատման համար ուսանողները լրացնում են օրագրեր, որոնք ներկայացնում են կուրսղեկին: Այդ օրագրերում թվարկված է ուսանողների մասնակցությունը տարբեր միջոցառումների՝ ըստ օրերի, սակայն չկան կոնկրետ հանձնարարականները, որ պետք է գրավոր կերպով հանձնել: ՄԿԾ-ների պատասխանատուների հետ հադիպումների ժամանակ պարզ դարձավ, որ, օրինակ, ներկայացումների քննարկումները և վերլուծությունները իրականացվում են բանավոր: Պրակտիկայի կազմակերպում կարող է իրականացվել նաև պրակտիկայի ժամանակացույցից դուրս, ըստ անհրաժեշտության՝ կախված այն փաստից, թե երբ է պրակտիկայի ղեկավարի ստեղծագործական խումբը նոր ֆիլմ նկարում կամ ներկայացում բեմադրում:

Ըստ «Ավարտական կիսամյակում ստուգաշրջանի անցկացման և ամփոփիչ ատեստավորման կազմակերպման կանոնակարգի» ավարտական աշխատանքներ պահանջվում են բոլոր կրթական ծրագրերում[7]: Օրինակ՝ Ռեժիսուրա ՄԿԾ-ի շրջանակում ավարտական աշխատանքները բեմադրություններն են, սակայն պահանջվում է ներկայացնել նաև գրավոր էքսպլիկացիա: Փորձագիտական այցի շրջանակում իրականացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ավարտական աշխատանքների գրավոր ներկայացմանը մեծ ուշադրություն չի դարձվում, քանի որ դրանք գրված են տարբեր ձևաչափերով, կրում են հիմնականում տեղեկատվական բնույթ, անդրադարձ է կատարված նաև աշխատանքի ընթացքում ծագած խնդիրներին, դրական և բացասական կողմերին, սակայն թույլ է արտահայտված վերլուծական բաղադրիչը:

2017թ. ՄՈՒՀ-ում ներդրված «Ակադեմիական ազնվության կանոնակարգ»-ը սահմանում է ակադեմիական ազնվության սկզբունքները, չափանիշները, ակադեմիական ազնվության դրսևորումները և դրանց կանխարգելման կարգը, ամրագրված են

[7] Միտքը վերաձևակերպվել է բուհի դիտարկումների հիման վրա:

գրագողության կանխարգելման մեխանիզմները, սակայն դեռևս հստակ չեն գրագողության դեմ պայքարի գործնական քայլերը:

Հեռավար ուսուցման պայմաններում (2019-2020 ուս. տարի) ՄՈՒՀ-ը մշակել է առցանց եղանակով ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության կարգ, ուշադրություն է դարձվել գործընթացի օբյեկտիվության և թափանցիկության ապահովմանը:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

Ըստ Ինքնավերլուծության՝ ինստիտուտը 2020-2021 ուսումնական տարվանից սկսած իրականացրել է ՄԿԾ-ների բարեփոխումներ՝ դրանք համապատասխանեցնելով Որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչներին, նախնական իրականացրել է բենչմարքինգ Հայաստանյան բուհերի հետ: Հարկ է նշել նաև, որ իրականացվել է արտերկրի մի շարք բուհերի կրթական ծրագրերի՝ «Կինոարվեստ», «Տեսալսողական արվեստ», «Կերպարվեստ» ուսումնասիրություն և միջազգային բենչմարքինգ: Օրինակ՝ Ադամ Միցկևիչի ինստիտուտի (Վարշավա) աջակցությամբ Լոձի (Լեհաստան) կինոդպրոց այցելության ընթացքում դասալսումների արդյունքում իրականացվել է «Կինոարվեստ» կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխություն. III-րդ կուրսի առաջին և երկրորդ կիսամյակում ներառվել է «Կինոպատկերի գեղագիտական ընկալում» առարկան՝ 2 կրեդիտ: IV-րդ կուրսի առաջին կիսամյակում «Կինոխմբագրի աշխատանք» առարկան (2 կրեդիտ) փոխարինվել է «Կինոպատկերի համակարգչային մշակում» դասընթացով:

Իռլանդիայի Դան Լաէրի արվեստի և դիզայնի տեխնոլոգիաների ինստիտուտի անիմացիայի դասախոս Դեյվիդ Քուինի այցելության ընթացքում քննարկվել են ուսումնական պլանները և «Կինոարվեստ» ՄԿԾ-ում ներառվել է «Անիմացիոն գրաֆիկա» (2 կրեդիտ) դասընթացը՝ «Կերպարվեստի պատմություն-3» 4 կրեդիտի հաշվին:

Մոսկվայի Գերասիմովի անվան կինեմատոգրաֆիայի համառուսական պետական ինստիտուտի Օպերատորություն մասնագիտության ուսումնական պլանների ուսումնասիրության արդյունքում, ԵԹԿՊԻ-ի «Օպերատորություն» մասնագիտության ուսումնական պլանի կամընտրական առարկաների ցանկը համալրվել է «Համակարգչային գրաֆիկա», «Ֆիլմի վերլուծություն» դասընթացներով:

Փորձ է արվել նաև բենչմարքինգ իրականացնել «Ռեժիսուրա» կրթական ծրագրի շրջանակում, սակայն չկան կոնկրետ տվյալներ: Հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ համեմատական վերլուծության արդյունքում ներդրվել են կամընտրական դասընթացներ, ինչպես օրինակ՝ «Բիոմեխանիկա», որը ներկայումս չի իրականացվում դասախոսի՝ արտասահման մեկնելու պատճառով:

Ընդհանուր առմամբ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բենչմարքինգը ոչ բոլոր կրթական ծրագրերի համար է փաստաթղթավորված: Ըստ բուհի ներկայացուցիչների՝ ուսանողների՝ երկարաժամկետ փոխանակման ծրագրերի իրականացմանը երբեմն խոչընդոտում է այն հանգամանքը, որ առկա են ԵԹԿՊԻ-ի և գործընկեր բուհերի կրթական ծրագրերի կրեդիտների անհամապատասխանություններ:

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ԵԹԿՊԻ-ն մշակել և հաստատել է մի շարք ընթացակարգեր, որոնք հիմք են ՄԿԾ-ների մշակման, վերանայման և հաստատման գործընթացներն իրականացնելու համար, այդ թվում՝ «ԵԹԿՊԻ ՄԿԾ-ների մշակում, հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում» կարգը: Ինստիտուտը մշակել է «ԵԹԿՊԻ հետադարձ կապի մեխանիզմներ» կրթական ծրագրերի և ծառայությունների զարգացման և մրցունակության բարձրացման նպատակով:

ԵԹԿՊԻ-ի ինքնավերլուծության համաձայն՝ 2018-2019 ուստարվա ընթացքում շահակիցների հետ իրականացված քննարկումների, ֆոկուս-խմբերի, հարցումների, ամբիոնների նիստերում իրականացված քննարկումների արդյունքներում, ինչպես նաև ԵԹԿՊԻ 2018-2022թթ. զարգացման Ռազմավարական ծրագրով սահմանված «Բարձրորակ կրթություն» գերակա նպատակի իրականացման, միջազգայնացման ընդլայնման նպատակով, ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի ժամանակացույցին համապատասխան մշակվել և 2019թ. մարտին հաստատվել են փոփոխված՝ ուսանողակենտրոն, վերափոխված վերջնարդյունքներով մասնագիտական կրթական ծրագրերը, ուսումնական պլանները:

Կրթական ծրագրերի վերանայման և նմանատիպ ծրագրերի համեմատության արդյունքում նոր կամընտրական դասընթացներ են ընդգրկվել ուսումնական պլաններում:

Կրթական ծրագրերի մշտադիտարկման և գնահատման նպատակով բուհը կիրառում է մի շարք գործիքներ և մեխանիզմներ: Առաջին հերթին դրանք հարցումներն են ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջանում: Թեև տվյալներ, թե այդ հարցումների արդյունքում կոնկրետ ինչ բարելավումներ են իրականացվել կամ պլանավորվում, տեսանելի չեն:

ԵԹԿՊԻ-ի ինքնավերլուծության համաձայն՝ ՄԿԾ-երի որակի գնահատման նպատակով բուհում յուրաքանչյուր կիսամյակ իրականացվում են դասալսումներ: Դասալսումների իրականացման, գնահատման, խնդիրների բացահայտման, լուծման ընթացակարգերը ԵԹԿՊԻ-ում կարգավորվում է համաձայն «ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի»: Փորձագիտական խմբին տրամադրված դասալսումների մասին արձանագրություններում կոնկրետ թերությունների մասին հիշատակումներ չկային:

Գնահատման կարևոր գործիք են նաև գործատուների կողմից արված առաջարկները և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները: Փորձագիտական այցի շրջանակում շահակիցների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ աշխատաշուկայում շրջանավարտները չեն հանդիպում դժվարությունների: Սրա մասին է փաստում նաև այն, որ շրջանավարտների մեծ մասը՝ մոտավորապես 70%-ը աշխատում է իրենց մասնագիտությամբ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում այն, որ ռազմավարական ծրագրին համահունչ ԵԹԿՊԻ-ն փորձել է իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային բարեփոխումներ՝ ուղղված

բակալավրիատի և մագիստրոսական ՄԿԾ-ների վերջնարդյունքների հստակեցմանը: Միևնույն ժամանակ կարևորում է, որ ինստիտուտը թատրոնի և կինոյի ոլորտում բարձրագույն կրթություն իրականացնող միակ մասնագիտացված ուսումնական հաստատությունն է, որը աշխատաշուկայում զբաղեցնում է գերակա դիրք:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ գործող ՄԿԾ-ները վերանայելիս բուհը փորձել է իրականացրել տեղական մակարդակում ազգային աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրություն: Այդուհանդերձ, դրանք համապարփակ վերլուծության չեն վերածվել:

Կարևոր է նշել, որ բուհն իրականացնում է կրթական ծրագրերի ուսումնական պլանների պարբերաբար թարմացում՝ մասնավորապես բազմազանեցնելու կամընտրական դասընթացների ցանկը՝ հիմնվելով արտերկրի բուհերի համանման կրթական ծրագրերի համեմատական վերլուծության, արտերկրից հրավիրյալ մասնագետների հետ քննարկումների վրա: Փորձագիտական խումբը կարևորում է, որ բուհը քայլեր իրականացնի այլ համալսարանների համանման կրթական ծրագրերի կրեդիտների համապատասխանության ուսումնասիրության ուղղությամբ՝ ընդլայնելու ուսանողների շարժունության հնարավորությունները:

Փորձագիտական խմբի կողմից կարևորվում են նաև բուհի կողմից ՄԿԾ-ների վերամշակման գործընթացում արտաքին շահակիցներին ներգրավելու փորձերը, մասնավորապես՝ ՊԴ կազմում նրանց ընդգրկմամբ: Այս քայլերը որոշակիորեն ապահովում են բուհ-գործատու երկխոսություն, ինչը հնարավորություններ է ստեղծում կրթական ծրագրերի բարելավման, աշխատաշուկայի կարիքների համապատասխան շրջանավարտների թողարկման և դիմորդների թվի աճի մեծացման:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում, որ ԵԹԿՊԻ-ն իրականացրել է աշխատանքներ դասընթացների վերջնարդյուքների և ՄԿԾ վերջնարդյունքների համապատասխանեցման ուղղությամբ: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄԿԾ-ների վերջնարդյունքները դեռևս պետք է հստակեցվեն՝ ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչների հետ համապատասխանեցմամբ և քարտեզագրմամբ:

Փորձագիտական խումբը խրախուսում է, որ բուհը կարևորում է ուսանողակենտրոն ուսումնառության միջավայրի ստեղծումը, և փորձ է արվել ներմուծել նորարարական մեթոդներ, որոնք, սակայն նկարագրված չեն ՄԿԾ-ում և առարկայական նկարագրերում: Դրանցում բովանդակության մանրամասն նկարագրումը հնարավորություն կտա պլանավորելու ուսանողի առաջընթացը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսական կազմն արդյունավետորեն կիրառում է դասավանդման և ուսումնառության ուսանողակենտրոն մեթոդներ: Գովելի են նաև բուհում գիտելիքների և հմտությունների գնահատման օբյեկտիվությունը մեծացնելուն ուղղված քայլերը, մասնավորապես գործնական դասընթացների գնահատումը ամբիոնների կողմից ձևավորված հանձնաժողովով: Այդուհանդերձ, գնահատման համակարգում ռուբրիկների ու սանդղակների մշակումը և ներդրումը կապահովի միջանկյալ և եզրափակիչ ստուգման գործընթացի օբյեկտիվությունն ու թափանցիկությունը:

Առարկաների դասավանդման և գնահատման մեթոդների ընտրության արդյունավետության գնահատմանն ուղղված հարցումների ու դասալսումների

արդյունքների հետևողական վերլուծությունը մեծապես կնպաստի կրթական ծրագրերի բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵԹԿՊԻ-ում իրականացվող կրթական ծրագրերը համապատասխանում են առաքելությանը, բուհը ապահովում է կապը աշխատաշուկայի հետ ՊԴ կազմում գործատուների ներգրավմամբ, վերանայել ու արդիականացրել է ՄԿԾ-ները՝ վերջնարդյունքներին համապատասխանեցնելով դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդները, բենչմարքինգի արդյունքում ՄԿԾ-ներում ներմուծել է նոր կամընտրական դասընթացներ, ներդրել է կրթական ծրագրերի մշտադիտարկման որոշ գործիքներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԿՊԻ-ն բավարարում է 3-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵԹԿՊԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3–ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ԵԹԿՊԻ 2018-2022 թթ. զարգացման Ռազմավարական ծրագրին և ԵԹԿՊԻ կանոնադրությանը համապատասխան ինստիտուտում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմներ: Ուսանողների հավաքագրման քաղաքականության շրջանակներում բուհը համագործակցում է արվեստի քոլեջների, իսկ մասնաճյուղերում՝ դպրոցների հետ: Կազմակերպվում են ապագա դիմորդների ճանաչողական այցեր, բաց դռների օրեր, ինչպես նաև նախապատրաստական դասընթացներ:

ԵԹԿՊԻ-ի պաշտոնական կայքը հնարավորություն է տալիս դիմորդին հստակ պատկերացում կազմել ընդունելության կարգի ու կազմակերպման մասին: Պաշտոնական կայքի «Դիմորդ» բաժնում տեղադրված է տեղեկատվություն բակավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուիրայի ընդունելության, կրթական ծրագրերի, քննական առաջադրանքների և գնահատման չափանիշների վերաբերյալ: Բուհ ընդունելության մասին տեղեկատվությունն առկա է նաև dimord.am կայքէջում:

Առկա և հեռակա ուսուցման ընդունելությունն իրականացվում է ՀՀ կառավարության հաստատած պահանջներին և չափանիշներին համապատասխան՝ «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ ու ինտեգրված կրթական ծրագրերի)», «ՀՀ բուհերում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման», «ՀՀ-ում ասպիրանտուրայի ընդունելության» կարգերի համաձայն: Ելնելով բուհի

առանձնահատկությունից՝ դիմորդները ԵԹԿՊԻ ընդունվում են՝ մասնակցելով ներբուհական քննություններին: Ինստիտուտում ամեն տարի մշակվում և Գիտխորհրդում քննարկվում ու հաստատվում են բոլոր ՄԿԾ-ների գծով ընդունելության ծրագրերն ու գնահատման չափանիշները, օրինակ՝ «Թատերական արվեստ» մասնագիտության համար փոխվել են էտյուդին պատրաստվելու ձևերը: Նախկինում դիմորդները ներկայացնում էին նախապես պատրաստված էտյուդներ, ներկայումս թեման տրվում է քննության ժամանակ, և ուսանողները պատրաստվում են էտյուդներին տեղում:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ վերջին տարիներին ուսանողների համակազմը հիմնականում կայուն է. դիմորդների թվի նվազման միտումներ չկան:

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Ինստիտուտը կարևորում է ուսանողների կրթական կարիքների վերհանումը՝ դրա համար ուսանող-դասախոս, ուսանող-վարչական աշխատակազմ ամենօրյա շփման և քննարկումների հնարավորություն ընձեռելով: Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումները ևս փաստեցին, որ ուսանողները միշտ հնարավորություն ունեն դասախոսների հետ անհատական շփման միջոցով բարձրաձայնել իրենց հետաքրքրող խնդիրները և ստանալ լուծումներ:

ԵԹԿՊԻ-ում մասնագիտական դասընթացները անհրաժեշտության դեպքում իրականացվում են անհատական պարապմունքների միջոցով և բոլոր կուրսերն ունեն իրենց ղեկավարները, որի միջոցով ուսանողները քննարկում են դասավանդման մոտեցումները: Յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը, խնդիրներն ու բացթողումները պարբերաբար քննարկվում են մասնագիտական ամբիոններում, արվում եզրակացություններ և առաջարկներ:

Փորձագիտական այցի շրջանակներում պարզվեց, որ հաշվի առնելով ուսանողության կարծիքը՝ ավելացվել են դասընթացներ, որոնք առավել հետաքրքրություն ունեն ուսանողների համար, մասնավորապես ներդրվել է «Երաժշտությունը կինոյում» դասընթացը, ինչպես նաև կամընտրական դասընթաց՝ «Աշխատանք տեսախցիկի հետ»:

ԵԹԿՊԻ-ն ուսանողների կրթական կարիքների մեխանիզմ է դիտարկում նաև իրականացվող հարցումները բուհի, դասախոսների, դասավանդվող առարկաների գնահատման նպատակով: Այդուհանդերձ, փորձագիտական հանդիպումները փաստեցին, որ ուսանառողները չեն դիտարկում հարցումները որպես իրենց կարիքների վերհանման գլխավոր մեխանիզմ, ինչպես նաև երբեմն թույլ է կապը իրականացված հարցումների և պլանավորվող փոփոխությունների միջև:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ԵԹԿՊԻ-ի ուսումնական միջավայրը հնարավորություն է տալիս ուսանողներին անհատական խորհրդատվություններ ստանալ կուրսերի ղեկավարներից, ինչպես նաև

դասավանդող դասախոսների կողմից: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ որոշ ամբիոններ սահմանել են նաև խորհրդատվության ժամեր, այդուհանդերձ անկախ սահմանված ժամերից՝ դասախոսները հասանելի են ուսանողների համար՝ նաև առցանց հաղորդակցման միջոցով:

Այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ ուսումնական տարվա սկզբին հանդիպումներ են կազմակերպվում առաջին կուրսեցիների հետ՝ ծանոթացնելու բուհում ուսումնառության կազմակերպման առանձնահատկություններին:

ԵԹԿՊԻ-ն վճարովի հիմունքներով իրականացնում է նաև լրացուցիչ նախապատրաստական դասընթացներ դիմորդների համար: Օտարերկրյա դիմորդների համար հնարավորություններ են ստեղծվում հայերենի ուսուցման համար:

Լրացուցիչ և շարունակական կրթության և SS կենտրոնին կից ստուդիան կազմակերպում է եռամյա լրացուցիչ դասընթացներ («Դիմահարդարում-գրիմ», «Բեմական հագուստի մոդելավորում» և «Ռեկվիզիտների պատրաստում»), որոնք համակարգում է ԱՄՆ Կալիֆոռնիայի համալսարանի դասախոս Մարո Փարյանը: Յուրաքանչյուր դասընթացի տևողությունը կազմում է համապատասխանաբար 64 և 128 ժամ (2 և 4 կրեդիտ): Դասընթացիներին ամբողջական քննաշրջանը հաջողությամբ ավարտած ընդհանուր 20 ուսանողներին շնորհվում է ավարտական հավաստագիր:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

ԵԹԿՊԻ ինքնավերլուծության և փորձագիտական այցի հանդիպումների համաձայն՝ վարչական աշխատակիցները մշտապես հասանելի են ուսանողների համար օժանդակություն և ուղղորդում ստանալու նպատակով, չնայած ԵԹԿՊԻ-ն առանձին ժամանակացույց չի սահմանել վարչական աշխատակիցներին դիմելու համար:

Ֆակուլտետների ցուցատախտակներին և բուհի կայքէջում տեղակայված են ուսանողներին վերաբերող կարգերն ու կանոնակարգերը՝ սահմանված հստակ ժամկետներով: Դեկանատները, ամբիոնները և մյուս աշխատակիցները տրամադրում են համապատասխան տեղեկատվություն ուսման վարձավճարի զեղչերի համար դիմումների լրացման, ընթացիկ և եզրափակիչ ստուգումների գնահատականների բողոքարկման, փոխանակման ծրագրերի դիմելու, ինչպես նաև միջազգային փառատոններին մասնակցելու վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ ուսանողները համատեղ աշխատելու, փորձերի և բեմադրություններին պատրաստվելու համար կարիք ունեն դասերի ավարտից հետո մնալու բուհում, երեկոյան ժամերին վերահսկողություն ապահովելու նպատակով ներդրվել է ուսումնական տեսուչի հաստիքը:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ԵԹԿՊԻ-ում դասավանդող դասախոսները նաև պրակտիկ գործող մասնագետներ ու գործատուներ են, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել ուսանողների կարիերային նպաստող մի շարք միջոցառումներ, մասնավորապես լրացուցիչ պրակտիկաներին մասնակցելը, ստեղծագործական խմբերում ներառվելու

հնարավորությունը: Դասավանդող գործատուները ևս անում են իրենց առաջարկները, քանզի մասնակցում են ավարտական աշխատանքների ներկայացմանը՝ որպես դիտորդներ:

2014 թ.-ից գործում է Կարիերայի կենտրոնը, որն ապահովում է կապը շրջանավարտների հետ: ԵԹԿՊԻ-ն ստեղծել է շրջանավարտների տվյալների բազա, որում ներկայացված է տարբեր տարիների շրջանավարտների մասին տեղեկատվություն: Այդ տվյալների միջոցով գործատուների հետ համագործակցության շրջանակներում թափուր աշխատատեղերի դեպքում շրջանավարտներն ուղղորդվում են համապատասխան մասնագիտական աշխատանքի:

Շրջանավարտների և գործատուների միջև կապերը ամրապնդելու և զարգացնելու համար ինստիտուտը համագործակցում է մի շարք գործատուների, այդ թվում մշակութային կառույցների, ԶԼՄ-երի, արվեստի մասնագիտացված դպրոցների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, հիմնադրամների, կրթական հաստատությունների հետ:

Գործատուների հետ կապը պահվում է նաև մասնաճյուղերում: Գյումրու և Վանաձորի պետական դրամատիկական թատրոնների անձնակազմի գերակշիռ մասը ԵԹԿՊԻ-ի շրջանավարտներն են: Թատրոնի դերասանները դասավանդում են բուհի մասնաճյուղերում՝ իրենց պրակտիկ փորձառությունը փոխանցելով ուսանողներին:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողներին ներգրավելու ինստիտուտի քաղաքականությունը ամրագրված է ԵԹԿՊԻ-ի 2018-2022թթ. զարգացման ռազմավարական ծրագրում, ԵԹԿՊԻ-ի կանոնադրությունում: Ըստ ինքնավերլուծության՝ ԵԹԿՊԻ-ում գիտական հետազոտությունները հիմնականում իրականացնում են մագիստրոսներն ու ասպիրանտները, ովքեր ունեն ոլորտի խոր մասնագիտացված գիտելիք և կարողություններ մասնագիտական գործունեություն և հետազոտություն իրականացնելու և (կամ) ուսումնառությունը շարունակելու համար:

Փորձագիտական դիտարկումների ու դասալսումների ընթացքում պարզ դարձավ, որ ուսումնառության ընթացքում բակալավրիատի ուսանողներին ևս տրվում են ստեղծագործական-վերլուծական միտքը զարգացնող առաջադրանքներ: Դասերի ընթացքում իրականացվում են ընթերցած գրքի, նախօրոք հանձնարարված ֆիլմի կամ ներկայացման վերաբերյալ քննարկումներ և վերլուծական աշխատանքներ, որոնք սակայն երբեմն գրավոր արտահայտում չեն ունենում: Ուսանողները հաճախ ձևավորում են նաև ստեղծագործական խմբեր համատեղ նախագծերի վրա աշխատելու համար:

Ուսանողների հետազոտական կարողությունների ձևավորման համար մագիստրոսական կրթական ծրագրերում ներառել են նաև «Հետազոտության մեթոդաբանություն» առարկան: Ներկայումս ինստիտուտը ունի 2 ասպիրանտներ ու 4 հայցորդներ: Ասպիրանտներին և հայցորդներին աջակցելու և ուղղորդելու նպատակով վերանայվել է նաև հետազոտական թեմաների բազան: Արվեստի պատմության և տեսության ամբիոնի հետ համատեղ մշակվել է նաև մագիստրոսների համար հետազոտական թեմաների բազա:

Փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ քննարկումներից պարզ դարձավ, որ ուսանողներն առաջարկել են նաև Ուսանողական գիտական խորհուրդ ստեղծելու վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա առավել համակարգելու ուսանողների ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներում, այդուհանդերձ առաջարկը դեռևս քննարկման փուլում է:

ԵԹԿՊԻ-ն հետազոտական, ուսումնական և ստեղծագործական գործընթացների իրականացման մեխանիզմ է համարում նաև իր Ուսումնական թատրոնը: ԵԹԿՊԻ-ն խրախուսում է իր ուսանողներին՝ մասնակցելու միջազգային գիտաժողովների, փառատոնների, ուսանողական կլոր սեղանների: Յուրաքանչյուր տարի, որպես ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս, ԵԹԿՊԻ–ում կազմակերպվում է ուսանողական գիտաժողով: Լավագույն ուսանողական աշխատանքները (ընդհանուր՝ 4 աշխատանք) տպագրվել են ԵԹԿՊԻ գիտամեթոդական հոդվածների «Հանդես»-ում: 2018 թ.-ին պարային ցուցադրական ներկայացում են ունեցել Մոսկվայում, որին մասնակցել են և մագիստրոսները և բակալավրի ուսանողները, ինչպես նաև շրջանավարտները: Մասնակցել են նաև Շեքսպիրյան փառատոնին, Սերգեյ փարաջանովին նվիրված գիտաժողովին և այլ միջոցառումների:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Ինստիտուտը բակալավրի, մագիստրոսի, ասպիրանտի կրթական ծրագրերով, ուսուցման առկա և հեռակա ձևով, անվճար ու վճարովի համակարգում սովորող ուսանողների հետ կնքում է պայմանագիր, որտեղ նշվում են ուսումնառության պայմանները, ինստիտուտի, ուսանողի պարտավորությունները, ֆինանսական և լրացուցիչ պայմանները:

ԵԹԿՊԻ-ն ունի ուսանողական խորհուրդ, որն ապահովում է ուսանողական ինքնակառավարման գործընթացները բուհի ուսումնառողների շրջանում, արտահայտում և պաշտպանում է նրանց շահերը, ապահովում է ուսանողների մասնակցությունը բուհի կառավարմանը: Ինստիտուտի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր, իրազեկում է ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին, աջակցում է ուսանողների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, խթանում է ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը, օգնում է ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպում է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը: Ուսանողական խորհուրդը փորձում է իր գործընթացներում ներգրավել նաև մասնաճյուղերի ուսանողներին՝ հրավիրելով գլխամասում իրականցվող միջոցառումներին, ներկայացումների դիտմանը և այլն: ՈւԽ-ն քայլեր է իրականացնում նաև այլ բուհերի ուսանողական կառույցների համագործակցության ուղղությամբ: ՈւԽ-ն իր գործունեության, ծրագրերի և ծախսած ֆինանսական միջոցների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում ռեկտորին:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ իրենց իրավունքներին առնչվող հարցերով ուսանողները դիմում են նաև դեկաններին, Որակի կենտրոնի

ղեկավարին, հնարավորություն ունեն անմիջական հաղորդակցության միջոցով իրենց խնդիրները քննարկել նաև ռեկտորի հետ:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման նպատակով բուհում իրականացվում են հարցումներ, որոնց արդյունքները քննարկվում են ամբիոնների, դեկանատների, հաստատության ղեկավար կազմի հետ: Սակայն, ինչպես պարզ դարձավ փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի ընթացքում, հարցումների արդյունքները ոչ միշտ են ենթարկվում համապարփակ վերլուծության, և թույլ է հետադարձ կապն ու դրանց հիման վրա կայացված որոշումները կրում են իրավիճակային բնույթ: Այսպես, օրինակ, համավարակի ընթացքում առցանց հարցումներ են արվել դասավանդման մեթոդների, կիրառվող հարթակների վերաբերյալ, որի արդյունքում բուհը նախաձեռնել է դասախոսների՝ առցանց հմտությունների կատարելագործմանն ուղղված վերապատրաստումներ, որոնք սակայն պարբերական բնույթ չեն կրել: ԵԹԿՊԻ ինքնավերլուծության համաձայն՝ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների արդյունավետության մասին հարցումներ ևս դեռ չեն կատարվել, սակայն դրանց մասին քննարկումներ են իրականացվում Գիտխորհրդում և ամբիոնային քննարկումներում:

Փորձագիտական հանդիպումների ընթացում պարզ դարձավ, որ ուսանողներն ու շրջանավարտներն ընդհանուր առմամբ բավարարված են իրենց ստացած կրթությունից և այն հնարավորություններից, որ բուհն իրենց ընձեռում է:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԵԹԿՊԻ-ում գործում են ուսանողների հավաքագրման մեխանիզմներ, որոնց շրջանակներում ամրապնդվում է կապը դպրոցների ու մասնագիտական քոլեջների հետ: Դիմորդին տրամադրվում է հստակ տեղեկատվություն քննության անցկացման ու կանոնակարգի վերաբերյալ նաև կայքի միջոցով: Գովելի է մասնավորապես ԵԹԿՊԻ-ի Գյումրու մասնաճյուղի աշխատանքը Շիրակի մարզի համայնքային դպրոցների հետ, ինչը նպաստում է ուսանողների համակազմի աճին:

Հաշվի առնելով բուհի մասնագիտական առանձնահատկությունները և համագործակցությունը տարբեր մշակութային հաստատությունների ու ՁԼՄ-ների հետ՝ փորձագիտական խմբի կողմից առավել կարևորվում է բուհի մասին տեղեկատվության և գովազդային քաղաքականության ընդլայնումը, որը ուսանողների հավաքագրման լրացուցիչ խթան կարող է դառնալ:

Դրական է այն հանգամանքը, որ ուսանողների խնդիրները, հարցերն ու առաջարկությունները լսելի են բուհի կողմից և ստանում են համապատասխան լուծում: Ապահովվում է հարցերի քննարկման ու որոշումների կայացման թափանցիկությունը: Ուսանող-դասախոս կապը ստեղծում է հնարավորություն իրականացնելու ամենօրյա խորհրդատվություններ ինչպես անմիջական շփման արդյունքում, այնպես էլ առցանց հարթակում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև թիմային աշխատանքի խրախուսումը բուհի վարչական կազմի և պրոֆեսորադասախոսական կազմի կողմից, ինչը խթանում է ուսանողների՝ ստեղծագործական խմբերում աշխատելու հմտությունները և կարողունակությունները, ինչպես նաև ստեղծում է ուսանողների միջև փոխհամագործակցային հարաբերություններ:

Առանձնահատուկ նշանակություն ունի նաև Լրացուցիչ և շարունակական կրթության և SS կենտրոնին կից գործող ստուդիան, որտեղ եռամսյա լրացուցիչ դասընթացներ են կազմակերպվում՝ «Դիմահարդարում-գրիմ», «Բեմական հագուստի մոդելավորում», և «Ռեկվիզիտների պատրաստում», ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին նոր հմտություններ ձեռք բերել, իսկ հետագայում նաև ևս մեկ մասնագիտություն ունենալ:

Գովելի է, որ ԵԹԿՊԻ-ն նաև խրախուսում է ուսանողների և ուսանողական խմբերի մասնակցությունը միջազգային փառատոնների՝ Միջազգային հարաբերությունների բաժնի աջակցությամբ: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ուսանողների մասնակցությունը հետազոտական ծրագրերի սահմանափակ է: Բուհը այդ ուղղությամբ կոնկրետ քայլեր չի ձեռնարկում: Միջազգայնացման և հետազոտական ծրագրերում ընդգրկման հարցերում խոչընդոտներից է ուսանողների՝ օտար լեզվի իմացության մակարդակը: Այդ նպատակով փորձագիտական խումբը կարևորում է օտար լեզվի լրացուցիչ դասընթացների իրականացումը ուսանողների համար, ինչը կնպաստի ուսանողների առավել լայն շրջանակի ներգրավմանը միջազգային շարժունության ծրագրերում և փառատոններին մասնակցության աճին:

Դրական է նաև ուսանողների կարիերային նպաստող գործողությունների իրականացումը, մասնավորապես գործատուների ներգրավումը ՊԴ կազմում, կամ հրավիրյալ բեմադրիչ-ռեժիսորների ներգրավումը ավարտական բեմադրություններում: Այս ամենը գործատու-շրջանավարտ ուղիղ կապի նախադրյալներ է ստեղծում ուսանողների՝ մասնագիտական շուկայում իրենց տեղը գտնելու անխոչընդոտ ընթացքն ապահովելու համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների՝ հետազոտական գործընթացներում ներգրավվելուն ուղղված գործիքների բազմազանեցումն ու կիրառվող մեխանիզմների համակարգումը կնպաստի բուհի հետազոտական գործունեության ընդլայնմանը, ինչպես նաև դասախոս-ուսանող համատեղ հետազոտությունների իրականացման աճին:

Փորձագիտական խումբը կարևորում է բուհի պատրաստակամությունը ուսանողների կարիքների վերհանման ու խնդիրներին լուծում տալու առումով, սակայն որակի ապահովման համակարգի կողմից կրթական, խորհրդատվական և այլ գործընթացների վերաբերյալ առավել ամբողջական տվյալների հստակ պարբերականությամբ հավաքագրումը կնպաստի մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատմանը ու հավաստի տվյալների հիման վրա որոշումների կայացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵԹԿՊԻ-ն ունի ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, իրականացնում է

ուսանողակենտրոն կրթություն, որտեղ կարևորվում է ուսանողների կարիքների վերհանումը, ստեղծագործական մտքի ձևավորումը և թիմային աշխատանքի խթանումը, վարչական աշխատակազմը մշտապես հասանելի է ուսանողների համար, ուսանողները ստանում են համապատասխան աջակցություն և խորհրդատվություն՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԿԹԻ-ն բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: ԵԹԿՊԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ԵԹԿՊԻ-ի ՌԾ–ում որպես ռազմավարական խնդիրներ և քայլեր են ամրագրված մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական որակյալ կազմի, կադրային ներուժի զարգացումը և բարելավումը, աշխատակիցների բարեկեցության մակարդակի բարձրացումը:

2021թ.-ին հաստատվել է ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնավարման կանոնակարգը, որով սահմանվում են պրոֆեսորադասախոսական պաշտոնների տեղակալման չափանիշները և ընթացակարգը: ԵԹԿՊԻ-ում պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով, որին նախորդում է պաշտոնի հավակնորդի բաց մրցութային կարգով ընտրությունը, որը կարգավորվում է ՀՀ համապատասխան օրենսդրությամբ և բուհի կանոնակարգերով ու ընթացակարգերով, ինչպես նաև կիրառվում է հրավիրյալ դասախոսի ինստիտուտը: Հարկ է նշել, որ վերջին տարիներին մրցույթներ չեն հայտարարվել: Ոչ մրցութային կարգով աշխատանքի ընդունված դասախոսները հիմնականում ընտրվել և հրավիրվել են մասնագիտական ոլորտներից ու գործատուների շրջանակից՝ նպատակ ունենալով ավելացնել պրակտիկ ոլորտի ներկայացուցիչների քանակը պրոֆեսորադասախոսական կազմում:

Ուսումնաօժանդակ կազմի հաստիքների ձևավորումն իրականացվում է ըստ պաշտոնների անձնագրերի, որոնք սահմանում են աշխատողի գործառույթները, իրավունքները, աշխատանքային պարտականությունները և պատասխանատվությունը:

«ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնավարման կանոնակարգ»-ում սահմանված են հետևյալ տարակարգերը՝ պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս:

Ինստիտուտում մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար դասախոսների հետ կնքվում են աշխատանքային պայմանագրեր մեկ տարով՝ հիմնական, ներքին և արտաքին համատեղության, ժամավճարային հիմունքներով:

Բուհում գործում է կուրսղեկների ինստիտուտ. ամեն կուրս ունի իր ղեկավարը, որը չորս տարի ղեկավարում է կուրսը, համագործակցում է բոլոր մասնագիտական դասախոսների հետ, կազմակերպում է ուսանողների հետ աշխատանքները, գնահատում է պրակտիկան: Կուրսղեկների հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր 4 տարի ժամկետով:

Բուհի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է ուսանողական հարցումների, դասալսումների, վարկանիշային գնահատման հիման վրա, որի ընթացակարգը մշակվել է 2019 թվականին:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Կրթական ծրագրերի մեջ սահմանված չեն պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ, թեև նման խորհրդատվություն տրվել էր 2016թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի զեկույցում: Այնուամենայնիվ, պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը և դրան համապատասխան դասախոսների հավաքագրման ընթացակարգը ապահովում են անհրաժեշտ որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ:

Բուհը հրավիրում է ոլորտի առաջատար մասնագետների՝ գործող դերասանների, ռեժիսորների, բեմադրիչների՝ դասավանդելու մասնագիտական առարկաներ: 2021-2022 ուսումնական տարում ինստիտուտի դասավանդող անձնակազմը կազմում է 161 մասնագետ, որոնցից 15,5%-ը պրոֆեսորներ են, 24,8% -ը՝ դոցենտ, 17,4%-ը՝ ավագ դասախոս և 68 %-ը՝ դասախոսներ:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ԵԹԿՊԻ դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար բուհում սահմանվել են մի շարք ընթացակարգեր՝ ՊԴ կազմի աշխատանքային գործունեության գնահատման և խրախուսման կարգ, որում սահմանված է ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը գնահատման գործընթացներում: Ըստ այդմ, ինստիտուտը ՈԱԿ-ի միջոցով իրականացրել է ՊԴ կազմի գնահատման հարցումներ, ուսանողների կողմից դասընթացի և դասախոսների աշխատանքից գոհունակության հարցումներ՝ դասախոսի մասնագիտական պատրաստվածության աստիճանի և դասավանդվող դասընթացի մեթոդական ապահովման վերաբերյալ: ՊԴ կազմի գնահատումն իրականացվում է ամբիոնի վարիչի կողմից, ինչպես նաև ինքնագնահատման միջոցով: Ուսանողները գնահատում են նաև դեկանի կողմից տարվող աշխատանքի արդյունավետությունը: ՊԴ կազմի գնահատման հարցումների

արդյունքների ուղղությամբ իրականացված քայլերը դեռևս հստակեցված չեն, մասամբ է գործում տարբեր հարցումների արդյունքների համադրման մեխանիզմները, որոնք ձևավորում են ՊԴ կազմի գործունեության արդյունավետության գնահատման արդյունքները:

ԵԹԿՊԻ-ն ունի պրոֆեսորադասախոսական կազմի վարկանիշավորման քաղաքականություն, սակայն գործընթացը իրականացվել է միայն մեկ անգամ՝ համավարակից առաջ, խրախուսումը իրականացվել է 10 դասախոսների պատվոգրերի հանձնմամբ և չի ներառել ֆինանսական բաղադրիչ:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

ԵԹԿՊԻ-ն 2018 թ.-ին մշակել է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացի կազմակերպման կանոնակարգ, ըստ որի բուհը կարևորում է պրոֆեսորադասախոսական կազմի ընդհանուր և մասնագիտական կոմպետենցիաների շարունակական զարգացումը: ԵԹԿՊԻ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացը 5 տարին մեկ շրջափուլով համարվում է պարտադիր ԵԹԿՊԻ դասախոսների համար: Գործընթացի կազմակերպումը իրականացնում է ԵԹԿՊԻ լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնը: ԵԹԿՊԻ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացի հնգամյա բեռնվածությունը կազմում է 30 կրեդիտ, որից 14 հավաքում է պարտադիր մոդուլներից (մանկավարժական մեթոդական կառուցամաս), 14-ը ընտրողաբար (հետազոտական ստեղծագործական կառուցամաս), ևս 2 կրեդիտ հատկացվում է որակավորման բարձրացման գործընթացի ավարտին ներկայացված թղթապանակի համար:

ԵԹԿՊԻ–ի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացի կազմակերպման կանոնակարգի համաձայն 2021թ. փետրվարից մինչև հոկտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել են առցանց վերապատրաստման դասընթացներ գլխամասի և մասնաճյուղերի ՊԴ կազմի համար: Յուրաքանչյուր դասընթացի տևողությունը կազմել է ընդհանուր 32 և 64 ժամ (1 և 2 կրեդիտ): Դասընթացներին, ամբողջական քննաշրջանը հաջողությամբ ավարտած ընդհանուր 67 մասնակցի 07.06.2021թ. շնորհվել է ավարտական հավաստագրեր «Համակարգչային գրագիտություն–1 կրեդիտ», «Լսարանային ցուցադրություն–1 կրեդիտ», «Դասավանդման էլեկտրոնային տեխնոլոգիաներ-2 կրեդիտ»: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերոնշյալ դասընթացների արդյունավետության գնահատման համար հարցումներ չեն իրականացվել:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց նաև, որ 2018-2022 թթ. ՌԾ իրականացման ժամանակահատվածում բուհը չի ունեցել հեռավար ուսուցման փորձ, ինչը նկատելի դժվարություններ է առաջացրել համավարակով պայմանավորված առցանց ուսուցման կազմակերպման գործընթացում: Բուհը հաջողությամբ կատարել է այս ուղղությամբ խնդիրների վերհանում և որպես լուծում 2020 թ. դասախոսական կազմի համար իրականացվել է հեռավար ուսուցման համար անհրաժեշտ հմտությունների

վերապատրաստման դասընթաց, Google Classroom հարթակում տեղադրվել են վերապատրաստման նյութերը, որոնցից օգտվել է պրոֆեսորադասախոսական կազմը:

ԵԹԿՊԻ-ում կազմակերպվում են նաև վարպետության դասեր առաջատար արտասահմանյան բուհերի մասնագետների մասնակցությամբ, միջազգային գիտաժողովներ և փառատոններ, ստեղծագործական մրցույթներ, որոնք նպաստում են պրոֆեսորադասախոսական կազմի որակավորումների բարձրացմանը:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ԵԹԿՊԻ-ի ՊԴ կազմի 80%-ը հիմնական հաստիքային աշխատակիցներ են: Գիտական աստիճան ունեցող դասախոսների թիվը քիչ է, սակայն պրոֆեսորների քանակը կազմում է 15,5%, դոցենտների քանակը 24,8%: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ պրոֆեսորադասախոսական կազմի մեծամասնությունը ԵԹԿՊԻ նախկին շրջանավարտներ են:

ԵԹԿՊԻ-ը ղեկավարությունը խրախուսում է մագիստրոսներին, ասպիրանտներին ծավալել դասախոսական գործունեություն՝ որպես օգնականներ ներգրավվելով դասավանդման գործընթացում: Այս նպատակով մագիստրոսական կրթական ծրագրերում ներառվել է «Դասավանդման մեթոդիկա» դասընթացը՝ 4 կիսամյակ տևողությամբ[8]: Այդուհանդերձ, ՊԴ կազմի քանակական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին երիտասարդ դասախոսների քանակական աճ չի նկատվում: Վերջին տարիներին մինչև 35 տարեկան դասախոսները կազմում են ՊԴ կազմի մոտ 15%-ը:

Կրթական ծրագրերն իրականացնելիս, դասավանդման բարձր որակն ապահովելու նպատակով, համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով աշխատակիցների կարգավիճակով հրավիրվում են գիտությունների դոկտորներ, թեկնածուներ, կրթության և մշակույթի տարբեր ոլորտների առաջատար մասնագետներ:

ԵԹԿՊԻ-ն երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածությունը, ունեն և պատրաստում են փոխարինողների դասախոսակազմ:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԵԹԿՊԻ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման և խրախուսման քաղաքականությունն ամրագրված է ՊԴ կազմի որակավորման բարձրացման գործընթացի կազմակերպման կանոնակարգում և ՊԴ կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագրում, ներքին կարգապահական կանոններում, որոնցում սահմանված են շնորհակալագրերի, պատվոգրերի տեսքով շնորհվող խրախուսումները:

[8] Միտքը վերաձևակերպվել է բուհի դիտարկումների հիման վրա:

ԵԹԿՊԻ-ում ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը ներառում է դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակման խրախուսումը, նաև գիտահետազոտական հոդվածների տպագրումը ԵԹԿՊԻ «Հանդես» գիտամեթոդական հոդվածների ժողովածուում, գիտական կոչումների շնորհմամբ պայմանավորված աշխատավարձի տարբերակումը: Բուհը կարևորում է նաև սկսնակ դասախոսների մասնագիտական առաջընթացը՝ նրանց հնարավորություն տալով աշխատել որպես կուրսղեկների ասիստենտ:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Ռազմավարական նպատակների իրականացման համար բուհն ունի համապատասխան վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ: Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի համալրումն իրականացվում է համաձայն բուհի կանոնադրության: Վարչական և ուսումնաօժանդակ կազմի գործառույթները, պահանջվող հմտություններն ու կարողությունները սահմանվում են համապատասխան ստորաբաժանումների կարգերով:

Համաձայն ինքնավերլուծության՝ մշակվել և հաստատվել են վարչական և ուսումնաօժանդակ կազմի անդամների պաշտոնի անձնագրերը, որտեղ հստակ սահմանված է յուրաքանչյուր աշխատակցի գործառույթների շրջանակը, իրավունքները, պարտականությունները և պատասխանատությունը:

Որոշ բաժիններ՝ «Որակի ապահովման կենտրոնը», «Կարիերայի և պրակտիկայի կենտրոնը», «Գիտական բաժինը», ունեն միայն ղեկավար:

Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության գնահատման մեխանիզմներն են կատարված աշխատանքների վերաբերյալ վարչական, ուսումնաօժանդակ աշխատակազմի և ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները: Հաշվետվությունները քննարկվում են ռեկտորատի անդամների կողմից և գնահատվում: Ուսանողների և դասախոսների շրջանում իրականացվող հարցումների միջոցով գնահատվում է նրանց բավարարվածությունը դեկանատի կողմից իրականացվող աշխատանքներից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԵԹԿՊԻում աշխատում է բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ, և ինստիտուտը փորձում է տարբեր ՄԿԾ-ների շրջանակներում ներգրավել որակյալ կադրեր արվեստի ոլորտից՝ գիտական աստիճան ու կոչում ունեցող հրավիրյալ դասախոսներ՝ նպատակ ունենալով ավելացնել պրակտիկ ոլորտի ներկայացուցիչների քանակը պրոֆեսորադասախոսական կազմում:

Դասավանդողների 80%-ը ԵԹԿՊԻ-ի հիմնական հաստիքային աշխատակիցներ են, ինչն ապահովում է բուհի կայուն ուսումնագիտական, ուսումնամեթոդական և ստեղծագործական գործունեությունը:

Գովելի է, որ դասախոսներ ընտրելիս ՄՈՒՀ-ը հաշվի է առնում թեկնածուների բազային մասնագիտական կրթությունը, տվյալ ոլորտում պրակտիկ աշխատանքի կամ

գործունեության փորձը, մյուս կողմից փորձ է կատարում բուհում սովորող մագիստրոսներին և ասպիրանտներին ներգրավել դասավանդման գործընթացում, ինչը կնպաստի դասախոսական կազմի կայունությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ինստիտուտում առկա է ՊԴ կազմի վերապատրաստման ընթացակարգ, միևնույն ժամանակ նշում է, որ վերապատրաստմների արդյունավետության գնահատումը կնպաստի դասընթացների որակի բարելավմանը, ինչպես նաև աշխատանքների, համակարգմանն ու պարբերականության սահմանմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Covid-19 համավարակի ժամանակ Որակի ապահովման կենտրոնը պրոֆեսորադասախոսակա կազմի կարիքների գնահատման վերլուծությունների արդյունքում իրականացրել է ՊԴ կազմի վերապատրաստում՝ հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման և անցկացման անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման նպատակով, որը նպաստել է տվյալ ժամանակահատվածում ուսումնական գործընթացի պատճաշ իրականացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է դասալսումների իրականացումը ամբիոնի վարիչների և գործընկեր դասախոսների կողմից, սակայն գտնում է, որ անհրաժեշտ է ներդնել դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ սահմանված նպատակներին հասնելու համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ում վարչական և ուսումնաօժանդակ կազմի գործունեության համար անհրաժեշտ կանոնակարգերի և ընթացակարգերի առկայությունը: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհի որոշ ստորաբաժանումների (Կարիերայի և պրակտիկայի կենտրոն, ՈԱԿ) նոր մասնագետներով համալրումը կնպաստի դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵԹԿՊԻ-ն ապահովված է համապատասխան մասնագիտական որակներով օժտված պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով, ձգտում է ներգրավել մասնագիտական ոլորտից գործնական հմտություններ ու բարձր մասնագիտական որակներ ունեցող մասնագետներ, մշակված են նրանց ընտրության, ձևավորման, ազատման համար համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր, ունի համեմատաբար կայուն պրոֆեսորադասախոսական կազմ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԿՊԻ-ն բավարարում է 5-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵԹԿՊԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5–ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ԵԹԿՊԻ-ի 2018-2022 թթ. Ռազմավարական ծրագրի 4-րդ նպատակի ներքո՝ «Հետազոտություն և նորարություն», ձևակերպված խնդիրներն են՝ Հետազոտական-ստեղծագործական աշխատանքների ծավալի, նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնում, հետազոտական-ստեղծագործական ծրագրերի աջակցում, հետազոտական-ստեղծագործական աշխատանքներում համագործակցության ապահովում և զարգացում, ինչպես նաև նորարարական ներդրումներ ԵԹԿՊԻ-ի հետազոտական-ստեղծագործական գործունեության ոլորտում: Վերոնշյալ նպատակների իրականացման համար սահմանված են մի շարք քայլեր և դրանց իրականացման արդյունքների գնահատման ցուցիչներ: Ելնելով իր առանձնահատկություններից՝ բուհը կարևորել է ոչ միայն հետազոտական, այլև ստեղծագործական գործունեությունը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՌԾ-ի մասնավորապես «Հետազոտություն և նորարություն» նպատակը լրամշակվել է՝ հաշվի առնելով իր ֆինանսական և մարդկային ռեսուրսները:

Բացի այդ, հիմնվելով նախորդ փորձագիտական զեկույցի խորհրդատվությունների վրա՝ մշակվել է ԵԹԿՊԻ-ի գիտահետազոտական գործունեության զարգացման ծրագիրը, որտեղ ընդլայնված են ներկայացվում ՌԾ-ում սահմանված քայլերը: Ծրագրի կետերը հիմնականում կարևորում են հետազոտական բաղադրիչի ավելացումը բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերում, ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների խթանումը ուսանողների ներգրավմամբ և հետազոտական աշխատանքների որակի բարձրացումը, գիտաժողովների կազմակերպումը դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը և այլն:

Փորձագիտական այցի շրջանակում կազմակերպված հանդիպումները և փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեցին, որ բուհում գիտահետազոտական գործունեություն հիմնականում իրականացնում են «Արվեստի տեսության և պատմության» և «Հումանիտար գիտությունների» ամբիոնները: Ինստիտուտի մյուս ամբիոններից, օրինակ՝ Արվեստի կառավարման և մշակութային քաղաքականության ամբիոնը, մեկ կամ երկու դասախոս է հոդված հրատարակում կամ զեկույցով հանդես գալիս գիտաժողովներում: Այդ մասին են փաստում նաև ամբիոնների տարեկան պլանները, որտեղ կարևորված է հետազոտական աշխատանքը և գիտաժողովների կազմակերպումը: Պետք է նշել նաև, որ վերոնշյալ երկու ամբիոններում իրականացվող դասընթացների մի մասում առկա է նաև հետազոտական բաղադրիչ՝ ռեֆերատներում, թեմատիկ վերլուծություններում և այլն:

ԵԹԿՊԻ-ի մյուս ամբիոններում կարևորվում է ստեղծագործական գործունեությունը: Ըստ այդմ էլ բուհի ՊԴ կազմը և ուսանողները ավելի հաճախ մասնակցում են միջազգային փառատոնների, վարպետության դասերի, քան գիտաժողովների: ԵԹԿՊԻ-ում գործող «Հանդես» ամսագրում ուսանողները վերջին 5

տարվա ընթացքում տպագրել են 4 հոդված: Քիչ թվով ուսանողներ են մասնակցել միջազգային գիտաժողովների:

Բուհում ներկայացվող հաշվետվությունների, այդ թվում նաև Գիտական մասի հաշվետվությունների մեջ արտացոլված չէ, թե ինչպես են իրականացվում «ԵԹԿՊԻ-ի գիտահետազոտական գործունեության զարգացման ծրագրի» կետերը, որոնք են լիարժեք կատարված, և որոնց դեպքում կան խոչընդոտներ, ինչպիսիք են օտար լեզվի ոչ բավարար իմացությունը, ֆինանսական սահմանափակ ռեսուրսները և այլն:

6.2. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հետազոտության ոլորտում ԵԹԿՊԻ-ի երկարաժամկետ պլանավորումը ներկայացված է 2018-2022 թթ. ՌԾ-ում և «ԵԹԿՊԻ-ի գիտահետազոտական գործունեության զարգացման ծրագրում»: Միջնաժամկետ պլանավորումը ներկայացված է ՌԾ գործողությունների պլանում:

Կարճաժամկետ պլանավորումը իրականացվում է բուհի երկու ամբիոններում՝ «Արվեստի տեսության և պատմության ամբիոն» և «Հումանիտար գիտությունների ամբիոն»:

Վերոնշյալ փաստաթղթերում սահմանված են հետազոտական-ստեղծագործական գործունեությունը խթանող մի շարք գործողություններ: Այնուամենայնիվ, դրանցում հստակ ձևակերպված չեն բուհում հետազոտության կոնկրետ ոլորտներ և ուղղություններ: Ըստ ինքնավերլուծության՝ հետազոտական թեմաների ընտրությունը կատարվում է դասախոսների կողմից՝ ելնելով իրենց նախասիրություններից և հետաքրքրությունների շրջանակից:

6.3. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ բուհը կարևորում է հետազոտական գործունեության մի քանի ուղղություններ: Օրինակ՝ բուհը որդեգրել է մասնավորապես ուսումնամեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման քաղաքականություն: Վերջին 5 տարիների ընթացքում տպագրվել է մոտ 15 գիրք և ուսումնամեթոդական ձեռնարկ՝ ըստ Գիտական բաժնի հաշվետվությունների: Ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրության երաշխավորման համար գործում են հստակ ընթացակարգեր:

«Արվեստի տեսության և պատմության» ամբիոնը կազմակերպում է տարեկան միջազգային գիտաժողով «ՀԱՅՖԵՍՏ»-ի շրջանակում: Նշված գիտաժողովների մասնակիցները թիվը մեծ չէ: Հիմնականում այդ երկու ամբիոնների գիտական ներուժի շնորհիվ տպագրվում է տարեկան 30-35 հոդված, որոնից մի քանիսը՝ արտերկրի ամսագրերում: Հոդվածների մեծ մասը տպագրվում է ԵԹԿՊԻ-ի «Հանդես» պարբերականում:

Նախորդ հավատատարմագրումից հետո ՊԴ կազմը առցանց կամ առկա ձևաչափով մասնակցել է նաև մի շարք գիտաժողովների: Ըստ Ինքնավերլուծության տվյալների՝ տարեկան 20-25 գիտաժողով, որոնց կեսից ավելին միջազգային է:

ԵԹԿՊԻ-ի բյուջեում միջազգային գիտաժողովներին և փառատոներին ՊԴ կազմի մասնակցության համար ֆինանսական միջոցներ նախատեսված չեն: Բուհը ապահովում է հրատարակչական աշխատանքների՝ ոչ միայն «Հանդես» պարբերականի, այլև ուսումնամեթոդական ձեռնարկների ֆինանսավորումը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ փորձ է արվել հայտարարել ներքին դրամաշնորհ գիտահետազոտական ծրագրերի համար, սակայն ՊԴ կազմի կողմից հայտեր չեն ներկայացվել: ՊԴ կազմը չի դիմում նաև Գիտական կոմիտեի շրջանակում հայտարարված մրցույթներին:

ԵԹԿՊԻ-ն կարևորում է նաև ասպիրանտների և հայցորդների թվի ավելացումը: Նախորդ փորձագիտական այցի ընթացքում բուհը ունեցել է 2 հայցորդ, հաշվետու ժամանակահատվածում՝ 2 ասպիրանտ և 4 հայցորդ: Ըստ գիտական բաժնի հաշվետվությունների՝ ինստիտուտը վերամշակել է առկա և հեռակա ասպիրանտուրայի կրթական ծրագրերը, աշխատանք է տանում նաև մագիստրատուրայի ուսանողների հետ՝ խրախուսելով նրանց կրթությունը շարունակել ասպիրանտուրայում: Մշակել են նաև հետազոտական թեմաների բանկ:

6.4. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ԵԹԿՊԻ-ն խրախուսում է ՊԴ կազմի հետազոտական գործունեության միջազգայնացումը, սակայն, բյուջեում այդ նպատակով ֆինանսներ չեն հատկացնում: ՊԴ կազմի ներկայացուցիչները սեփական նախաձեռնությամբ են մասնակցում միջազգային գիտաժողովների՝ Վրաստանում (Թբիլիսի, Բաթումի), Ռուսաստանում (Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ), Ղազախստանում (Ալմա-Աթա), Ռումինիայում (Սիբիու), Մոլդովայում և այլն: Նման գիտաժողովներին մասնակցությունը հնարավորություն է տալիս նաև տպագրելու հոդվածները միջազգային ամսագրերում, որոնք միջազգային շտեմարաններում տեղ գտած հանդեսներ չեն: Պետք է նշել, որ ավելի մեծ թիվ են կազմում ռուսերեն հոդվածները, քան անգլերեն:

Նախորդ փորձագիտական այցից հետո Թերությունների վերացման գործողությունների ծրագրում (2016թ.) բուհի պատասխանատուները հանձնառել են ուսումնասիրել միջազգային դրամաշնորհային ֆոնդերը, որ բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմը դիմի այդ մրցույթներին: Այս ուղղությամբ հաջողություններ արձնագրված չեն: Արվեստի տեսության և պատմության ամբիոնը կազմակերպում է տարեկան հանրապետական կամ միջազգային գիտաժողովներ: Թեև բուհում կազմակերպված միջազգային գիտաժողովների մասնակիցների թիվը մեծ չէ, ինստիտուտը արտերկրից մասնակիցներին հրավիրում է վարպետության դասեր անցկացնելու, այսպիսով՝ համատեղելով հետազոտական և ստեղծագործական բաղադրիչները:

6.5. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ԵԹԿՊԻ-ի բակալավրական կրթական ծրագրերի մասնագրերի և առարկայական նկարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում հետազոտական բաղադրիչ թիրախավորված չէ՝ ոչ ուսումնառության վերջնարդյունքներում, ոչ առանձին դասընթացների հանձնարարականներում: Այնուամենայնիվ, փորձագիտական այցի շրջանակում քննարկումների արդյունքները, ինչպես նաև միջանկյալ և կիսամյական քննական աշխատանքները փաստում են, որ առնվազն որոշ դասընթացների շրջանակում կարևորվում է հետազոտական բաղադրիչը ևս, մինչդեռ մասնագիտական դասընթացների մեծ մասում ուսանողների քննական և վերլուծական մտքի զարգացումը իրականացվում է բանավոր քննարկումների և բանավեճերի միջոցով: Օրինակ՝ ուսումնառության ընթացքում ուսանողները դիտում են ֆիլմեր, այնուհետև իրենց ղեկավարների հետ քննարկում գեղարվեստական և վավեգրական ֆիլմերի իմաստային և տեխնիկական առանձնահատկությունները, դրանցում տրված լուսային, օպերատորական լուծումները:

Ստեղծագործական բաղադիչի գերադասության մասին են փաստում նաև ավարտական աշխատանքները. հիմնական ուշադրությունը դարձվում է բեմադրություններին, նկարահանված ֆիլներին, իսկ կից ներկայացված գրավոր էքսպլիկացիան հաճախ զուտ տեղեկատվական բնույթ է կրում:

ԵԹԿՊԻ-ում առաջարկվող մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի հետ հավասար կարևորություն է տրվում մանկավարժական-մեթոդական պատրաստվածությանը: Նման մոտեցումը ծրագրերի պատասխանատուների կողմից պատճառաբանվում է ՊԴ կազմի նոր կադրեր պատրաստելու անհրաժեշտությամբ: Անհրաժեշտ է նշել, որ որոշ թեզերի թեմաներ ռեֆերատիվ բնույթի են, բացի այդ դրանց կառուցվածքը ոչ միշտ է համապատասխանում մագիստրոսական թեզերի համար ներկայացվող պահանջներին (օրինակ՝ ներածական հատվածում թեմայի արդիականություն, հետազոտության նպատակ, խնդիրներ և այլն):

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ԵԹԿՊԻ-ն ուշադրության կենտրոնում է պահել հետազոտական գործունեությունը՝ շեշտադրելով դրանցից մի քանիսը, ինչպես օրինակ՝ ասպիրանտների և հայցորդների թվի ավելացումը, ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակումը, «Հանդես» պարբերականի հրատարակումը, գիտաժողովներին մասնակցությունը և դրանց կազմակերպումը: Վերոնշյալ ուղղություններում բուհը առաջընթաց է արձանագրել վերջին 5 տարիներին:

Դրական է համարվում նաև այն փաստը, որ նախորդ փորձագիտական զեկույցում տրված խորհրդատվությունների հիման վրա բուհը մշակել և հաստատել է «ԵԹԿՊԻ-ի գիտահետազոտական գործունեության զարգացման ծրագիրը», ինչպես նաև հետազոտության ոլորտը ընդգրկել է Ռազմավարական ծրագրում՝ որպես բուհի գործունեության առաջնահերթություններից մեկը՝ փորձելով սահմանել իրատեսական քայլեր:

2018-2022 թթ ՌԾ-ում և ԵԹԿՊԻ-ի գիտահետազոտական գործունեության զարգացման ծրագրում ձևակերպված քայլերի և հաշվետու ժամանակահատվածում ներկայացված տարեկան հաշվետվությունների համադրումից կարելի է եզրակացնել, որ բուհին հաջողվել է իրականացնել նախանշված աշխատանքների մի մասը:

Այնուամենայնիվ, դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք պետք է ընդգրվեն հաջորդ Ռազմավարական ծրագրում:

Վերոնշյալ խնդիրների թվին կարելի է դասել միջազգային շտեմարաններում հետազոտությունների տպագրությունը, ինչի համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցների հատկացում, ինչպես նաև ՊԴ կազմի օտար լեզվի իմացության բարձրացում:

Մեկ այլ խնդիր է գիտական դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը: Այս առումով դարձյալ անհրաժեշտ է որոշակի ֆինանսական և մարդկային ռեսուրսների ապահովում:

Ընդունելով այն փաստը, որ ելնելով ինստիտուտի առանձնահատկություններից՝ կբուհում արևորում են ստեղծագործական բաղադրիչը և ուսանողների ստեղծագործական մտքի, հմտությունների և կարողությունակությունների զարգացումը, փորձագիտական խումբը գտնում է, որ պետք է մշակել հետազոտական և ստեղծագործական բաղադրիչների միավորման և համադրման մեխանիզմներ, քանի որ հետազոտությունը ստեղծագործական գործունեության անքակտելի մասն է: Այս առումով անհրաժեշտ է խթանել հետազոտական գործունեություն ծավալող ամբիոնների սերտ համագործակցությունը ստեղծագործական ամբիոնների հետ մի քանի մակարդակներում՝ բակալավրական կրթական ծրագրերում հետազոտական և ստեղծագործական, իսկ մագիստրոսական ծրագրերում հետազոտական և մանկավարժական բաղադրիչների միավորման և ներդաշնակման առումով, ինչպես նաև գիտաժողովների այնպիսի ձևաչափի մշակմամբ, որտեղ կմիավորվեն հետազոտականն ու ստեղծագործականը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵԹԿՊԻ-ն մի շարք քայլեր է ձեռնարկել հետազոտական աշխատանքների կանոնակարգման և խրախուսման ուղղությամբ՝ դնելով բուհի ֆինանսական հնարավորությունների սահմաններում իրատեսական նպատակներ, ինչպես նաև դիտարկելով այն փաստը, որ բուհում իրականացվող կրթական ծրագրերի հիմնական մասը միտված է ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինչը նաև պայմանավորում է մասնագիտական ամբիոնների գործունեության հիմնական ուղղությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԿԹԻ-ն բավարարում է 6-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: ԵԹԿՊԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ԵԹԿՊԻ-ն իր ուսումնական գործունեությունը ծավալում է Երևանի գլխամասի, Վանաձորի ու Գյումրիի մասնաճյուղերում: ԵԹԿՊԻ-ում առաջարկվող կրթական

ծրագրերի իրականացման համար ստեղծվել են Ստեղծարար տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն (ՍՏՈՒԿ Փրոդաքշն), Ուսանողական թատրոն-լաբորատորիա, երեք պարային սրահներ, ֆիլմադարան, կինոդահլիճ, մեներգի կաբինետներ, տեսամոնտաժային և ձայնամոնտաժային, մուլտ տաղավարները, մասնագիտական լսարաններ, գրադարան, ընթերցասրահ, կոնֆերանս սրահ, սպորտ դահլիճ, բուժկետ, արհեստանոցներ:

Գրադարանը զբաղեցնում է 165,4 քմ տարածք, որտեղ զետեղված են համակարգիչներ, կուտակիչներ, ցանցային սարքեր և այլն: Գրադարանում առկա գրականությունը հիմնականում ռուսերեն և հայերեն լեզուներով է: ԵԹԿՊԻ-ի գրադարանի ֆոնդի ընդհանուր քանակը, ներառյալ մասնաճյուղերինը, կազմում է 47,692 միավոր (դասագրքեր, մասնագիտական գրքեր, այլ գրականություն): Գրադարանը հիմնականում ապահովում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողներին անհրաժեշտ գրականությամբ: Ինստիտուտի գրադարանը կցված չէ Ազգային գրադարանի բազային կամ այլ էլեկտրոնային շտեմարանների: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ նաև, որ բուհի ֆինանսական ռեսուրսների սղությամբ պայմանավորված գրադարանային ֆոնդը թարմացվում է հիմնականում նվիրատությունների հաշվին:

Գրադարանում են պահվում նաև 500-ից ավելի թղթապանակները, որտեղ զետեղված են ռեժիսորների, դերասանների, գրականության և արվեստի վերաբերյալ նյութեր, հոդվածներ՝ թերթերից և ամսագրերից, որոնց հավաքագրումը սկսվել է 1950-ական թվականներից և շարունակվում է առ այսօր: Թղթապանակներից օգտվում են դասախոսները, ուսանողները, մագիստրանտները, ասպիրանտները, շրջանավարտները: 2019թ. դեկտեմբեր ամսից կատարվում է քարտարանի մուտքագրում համակարգիչ, որը հնարավորություն կտա ընթերցողին օգտվելու նաև համակարգչային քարտարաններից:

Ուսանողների գործնական կարողությունների զարգացման համար ԵԹԿՊԻ-ն ստեղծել է Ստեղծարար տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնը (ՍՏՈՒԿ փրոդաքշն): Կենտրոնը ներառում է տեխնիկական լաբորատորիա, ֆիլմադարան, կինոսրահ, ձայնագրման, մոնտաժային տաղավարներ, հեռուստատաղավար: Ստեղծարար տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնում առկա է վերանորոգված լուսային տեխնիկան (2021 թ.), կանաչ տաղավարը, որտեղ օպերատորական բաժնի ուսանողները իրենց դասերն են անցկացնում: Տեսամոնտաժային լաբորատորան տրամադրվում է ուսանողներին իրենց նկարահանած նյութերը՝ կուրսային և դիպլոմային աշխատանքները մոնտաժելու համար: ԵԹԿՊԻ-ի տեխնիկական լաբորատորիան հագեցած է անհրաժեշտ սարքավորումներով՝ տեսախցիկներ, լուսանկարչական ապարատներ, լույսեր, կռունկ, սայլակ: Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի ուսանողներին տրամադրվում է համապատասխան տեխնիկա՝ կուրսային և դիպլոմային աշխատանքների նկարահանումներն իրականացնելու համար:

Ինստիտուտի ուսանողները հնարավորություն ունեն աշխատելու ձայնային տաղավարում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ սարքավորումները՝ ձայնային աշխատանքի և հնչյունային ձևավորման հետ կապված՝ աղմուկի, ձայնային թերությունների վերացում, երաժշտության կամ ցանկացած ձայնի փոփոխում, հանում,

հետկադրային ձայնի տեղադրում: ԵԹԿՊԻ-ի մոնտաժային տաղավարն ապահովված է համակարգիչներով և համապատասխան մոնտաժային ծրագրերով:

Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի ուսանողները ներկայացնում են դիմումներ, ըստ որոնց կազմվում է աշխատանքային գրաֆիկ, տրամադրվում է համակարգիչ, և ուսանողը հնարավորություն է ստանում աշխատելու կուրսային կամ դիպլոմային աշխատանքի համար նկարահանված նյութերի վրա:

Ֆիլմադարանն ունի խաղարկային, վավերագրական ֆիլմերի և ներկայացումների տեսաերիզներ, շուրջ 4000 ֆիլմ, դասական երաժշտության հավաքածուներ և աուդիոգրքեր:

Ֆիլմադարանին կից գործում է «Անրի Վերնոյ» կինոսրահը: Կինոսրահում դիտումներն իրականացվում են նախապես կազմված ժամանակացույցով: «Անրի Վերնոյ» կինոսրահում ցուցադրվում են կուրսային և ավարտական աշխատանքների նախագծեր: «Կինոարվեստ, «Տեսալսողական արվեստ» մասնագիտությունների ավարտական աշխատանքների ցուցադրումն ու պաշտպանությունը, ընդունելության քննությունները, փառատոնային ֆիլմերի ցուցադրումները նույնպես տեղի են ունենում «Անրի Վերնոյ» կինոսրահում: Կինոսրահում դիտումներ են կազմակերպվում ինչպես առկա և հեռակա համակարգի ուսանողների, այնպես էլ նախապատրաստական բաժնի սովորողների համար: Ուսանողական թատրոն-լաբորատորիայում 2021թ. սկզբից մեկնարկել են շուրջ 20 դիպլոմային ներկայացումների բեմական փորձերը, որոնք ապրիլ, մայիս, հունիս ամիսներին ներկայացվել են ինստիտուտի Թատրոնի ֆակուլտետի ամփոփիչ ատեստավորման հանձնախմբի և հանդիսատեսի դիտմանը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ներկայումս Ուսանողական թատրոնի տարածքը զբաղեցնում է Համազգային թատրոնը, և ուսանողների փորձերի ու ներկայացումների ժամանակցույցը համաձայնեցվում է թատրոնի անձնակազմի հետ: Սակայն որոշ լսարաններում՝ կախված արվեստանոցի առանձնահատկությունից, առկա են բեմեր:

Գյումրու և Վանաձորի մասնաճյուղերը ևս ապահովված են համապատասխան ռեսուրսներով ու ենթակառուցվածքներով ուսումնական գործունեություն ծավալելու համար: Փորձագիտական այցի ընթացքում Վանաձորի մասնաճյուղը գտնվում էր վերանորոգման փուլում՝ թարմացնելու և արդիականացնելու լսարանները, սրահներն ու արվեստանոցները:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Ինստիտուտը յուրաքանչյուր տարվա վերջում նախապես կազմում է հաջորդ տարվա տարեկան նախահաշիվը, որը հաստատվում է Խորհրդի կողմից: Ըստ ինստիտուտի 2018-2022 թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի **«Ժամանակակից ենթակառուցվածք»** բաժնի դրույթների՝ նախատեսված է ֆինանսական միջոցներ հատկացնել ուսումնական և ստեղծագործական-հետազոտական նպատակներով գույքային և նյութատեխնիկական բազայի վերազինումը, համակարգիչների և տեխնիկայի շարունակական համալրման հնարավորությունների ընդլայնումը ապահովելու համար:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ինստիտուտն իր ֆինանսական հնարավորությունների շրջանակում վերազինել է ուսումնական ենթակառուցվածքը, իրականացվել են և հընթացս իրականացվում են վերանորոգման աշխատաքններ, բացի այդ՝ բարելավվում է լսարանային ֆոնդը, կատարվում են վերանորոգման աշխատաքներ: Անհրաժեշտ պարագաները, որոնք կարող են գնել համալսարանի բյուջեի միջոցների հաշվին, գնվում են՝ անխափան ուսումնական գործընթացը ապահովելու համար: Ծախսերը իրականացվում են ըստ պահանջարկի՝ ըստ եղած ֆինանսական հնարավորության, «հեռանկարային և տարեկան պլանների առկայության և կատարողականի» (Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ): Սակայն հանդիպումների ընթացքում պարզ դարձավ նաև, որ «Ռեժիսուրա» բաժնի ուսանողների համար կարիք կա նոր տեսախցիկների, բայց այդ տեսախցիկները շատ թանկ են: Ինստիտուտը իրեն թույլ է տվել գնել մինչև 7000-8000$ արժողությամբ տեսախցիկներ, իսկ ավելի բարձրակարգ տեսախցիկների համար ինստիտուտն արդեն դիմել է ԿԳՄՍ նախարարություն ֆինանսական աջակցություն ստանալու համար:

Մինչև 2014 թ. ինստիտուտի գրադարանը բաժանորդագրված է եղել կինոգիտական մի շարք ռուսալեզու ամսագրերի, սակայն այդուհետ գրադարանը դադարել է բաժանորդագրվել ֆինանսական միջոցների սղության պատճառով, իսկ որոշ դեպքերում՝ դրանց թվային տարբերակները համացանցում ի հայտ գալով պայմանավորված:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ ինստիտուտը դեռևս չի իրականացրել կատարված ծախսերի արդյունավետության վերլուծություն:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Ինստիտուտի բյուջեի հաստատումն ու դրա կատարումը վերահսկում է ԵԹԿՊԻ-ի խորհուրդը: Համաձայն ԵԹԿՊԻ-ի կանոնադրության բյուջեի ընթացիկ ֆինանսական կառավարումն իրականացնում է ռեկտորը: Նախահաշվով ներկայացվում են բուհի ստորաբաժանումների կողմից ուսումնական միջավայրի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսները:

Մասնաճյուղերում կրթական ծրագրերի իրականացման համար ևս բուհի կողմից բավական մեծ ռեսուրսներ են օգտագործվում, որոնք ոչ միշտ են եկամտաբեր լինում բուհի համար, սակայն կարևորելով դրանց մարզային նշանակությունը՝ ԵԹԿՊԻ-ն շարունակում է պահպանել իր մասնաճյուղերը:

Ինստիտուտի 2019-2021թթ. ծախսերի մեծ մասից ավելին՝ միջին հաշվարկով 85.03%-ը, օգտագործվում է անձնակազմի աշխատավարձի, եկամտային, սոցիալական հարկերի, դրոշմանիշային վճարի, արհմիության անդամավճարի համար:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

ԵԹԿՊԻ Երևանի գլխամասում և Գյումրիի ու Վանաձորի մասնաճյուղերում առկա են մասնագիտական պահանջների առանձնահատկություններին համաձայն կահավորված լսարաններ, վարչական գրասենյակային տարածքներ, մարզասրահներ, գրադարաններ ու ընթերցասրահներ:

Ինստիտուտը պարբերաբար գույքագրում է ամբիոններից եկող պահանջները և փորձում վերազինել կիրառվող տեխնիկան: Տարվա ընթացքում կառուցվածքային ստորաբաժանումները, ամբիոնները և ֆակուլտետները, ելնելով կրթական ծրագրերի իրականացման և ընթացիկ գործունեության կազմակերպման պահանջներից, զեկուցագրի հիման վրա ձեռք են բերում գնումների պլանում իրենց ներկայացրած ապրանքներն ու ծառայությունները:

Ամբիոնների կողմից գնահատվում է ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը, ապա անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ ռեսուրսների ձեռքբերման հայտերը հասցեագրվում են գնումների բաժնին: Ռեսուրսների ձեռքբերումն իրականացվում է կենտրոնացված ձևով՝ բոլոր կրթական ծրագրերի համար համատեղ, իսկ դրանց բաշխումը՝ ըստ առանձին ծրագրերի ռեսուրսային կարիքների:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ԵԹԿՊԻ-ն արտաքին փաստաթղթաշրջանառության համար կիրառում է Mulberry համակարգը, իսկ ներհամալսարանական հաղորդակցությունն իրականացվում է ներքին ցանցով, որին միացած են բոլոր ամբիոններն ու ստորաբաժանումները:

Ինստիտուտի ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և տեղեկատվության հասանելիությունն ապահովվում է գլխավորապես ինստիտուտի կայքի միջոցով: Կայքի «Մեր մասին» բաժնում զետեղվում են Գիտական խորհրդի որոշումները, նիստերի արձանագրությունները, կանոնադրությունները, կանոնակարգերը և կարգերը, հայեցակարգերը և այլ նորմատիվ փաստաթղթեր, ռեկտորատի որոշումները, ինստիտուտի գործունեության, ռազմավարական ծրագրի կատարողականի, բյուջեի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունները և այլն:

Ուսումնական գործընթացներին վերաբերող տեղեկատվության հասանելիությունը ներքին և արտաքին շահակիցներին նույնպես ապահովվում է ինստիտուտի պաշտոնական կայքի միջոցով:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ԵԹԿՊԻ բուկետն ապահովված է առաջին բուժօգնության դեղորայքով և բժշկական գործիքներով: Բուժկետը անմիջապես ենթակվում է ռեկտորին, և գործունեությունը կանոնակարգվում է նրա համապատասխան հրամաններով, հրահանգներով:

Ինստիտուտի ապահով և անվտանգ միջավայրը ապահովվում է պահակային ծառայությամբ, հակահրդեհային միջոցներով, տեսահսկմամբ: Փորձագիտական դիտարկումների ընթացքում ինստիտուտի պատերին փակցված էին ցուցանշաններ,

որոնք ապահովվում են արտակարգ իրավիճակներում արագ և անվնաս տարհանելու ուղիները:

ԵԹԿՊԻ շենքային պայմանները հարմարեցված չեն տեղաշարժման սահմանափակումներ ունեցող ուսանողների համար: Հարկ է նշել նաև, որ բուհը հնարավորություն է ընձեռել սովորելու նաև խուլ ու համր 6 ուսանողների՝ ստեղծելով նրանց համար համապատասխան պայմաններ ու միջավայր:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ըստ ԵԹԿՊԻ ինքնավերլուծության՝ ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության և արդյունավետության գնահատման հիմնական միջոցը հարցումն է, որի միջոցով վեր հանվում են առկա խնդիրները: Հարցաթերթիկներում տեղ գտած հարցերով երևան են գալիս ռեսուրսների ապահովվածության հետ կապված խնդիրները: Այդուհանդերձ, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ռեսուրսների վերաբերյալ իրականացված հարցումները խորը վերլուծության չեն ենթարկվում, և կայացվելիք որոշումները հիմնվում են քննարկումների արդյունքների հիման վրա:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԵԹԿՊԻ-ն կարևորում է ռեսուրսների ու ենթակառուցվածքների շարունակական համալրումը իր սահմանած ռազմավարական նպատակների իրականացման, կրթական ծրագրերի վերջնարդյունքների ապահովման համար: Թեպետ ֆինանսական հնարավորությունները սուղ են, բուհը փորձում է ելքեր գտնել շարունակաբար զարգացնելու ու հարստացնելու ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ միջավայրը:

Փորձագիտական այցի ընթացքում ուսումնական միջավայրի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ԵԹԿՊԻ-ն հիմնականում կարողանում է ապահովել համապատասխան նյութատեխնիկական ռեսուրսներ՝ կրթական ծրագրերի արդյունավետությունը ապահովելու համար: Թեև Երևանի մասնաշենքի առաջին հարկի մի հատվածը հատկացված է «Համազգային թատրոնին», բուհն ունի բավարար լսարանային ֆոնդ ապահովելու բոլոր խմբերին և արվեստանոցներով, և անհրաժեշտ այլ լսարաններով: Բուհի ոչ բոլոր լսարաններն են լավ վերանորոգված, սակայն ուսանողների համար ստեղծված է ազատ ստեղծագործելու միջավայր, որը նրանց հնարավորություն է տալիս կուրսի ղեկարների հետ ընտրելու լսարանի կահավորմանը ձևը ըստ իրենց կարիքների:

Դրական է, որ ինստիտուտում մեծ պահանջարկ ունեցող գրքերը թվայնացվում են և առավել հասանելի են դառնում ուսանողների և դասախոսների համար: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ այլընտրաքային ֆինանսական միջոցներ հայթայթելու դեպքում, գրադարանը անգլալեզու ժամանակակից գրականությամբ վերազինելը կնպաստի կրթական ծրագրերում արդի պահանջների ներառմանը և ուսանողների ու դասախոսների անգելերենի իմացության լավացմանը:

Դրական է, որ ինստիտուտի գրադարանում են պահվում թղթապանակներ, որտեղ զետեղված են ռեժիսորների, դերասանների, գրականության և արվեստի վերաբերյալ

նյութեր, որը բուհի հաջողությունների արձանագրման ու պահպանման հնարավորություն է տալիս:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Գյումրու մասնաճյուղը ապահովված է նյութատեխնիկական անհրաժեշտ ռեսուրսներով, միևնույն ժամանակ գտնում, որ Վանաձորի մասնաճյուղի ռեսուրսային ապահովվածությունը ևս անհրաժեշտ է դիտարկել որպես առաջնային քայլ բուհի համար:

Գովելի է, որ բուհի բյուջեից գումար է հատկացնում նաև ավարտական աշխատանքների համար անհրաժեշտ ռեկվիզիտներ կամ տեխնիկական միջոցներ ձեռք բերելու համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև բուհում ֆիզիկական խնդիրներ ունեցող ուսանողների կարիքների կարևորումը, հատկապես խուլ և համր ուսանողների համար առաձին խմբի ստեղծումը, 44-օրյա պատերազմի մասնակիցներին հոգեբանական օգնության տրամադրումը: Այնումենայնիվ, կարևոր է համարում նաև հետաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող ուսանողների համար պայմանների ստեղծումը:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ բուհին հաջողվում է սուղ ֆինանսական միջոցների պայմաններում ապահովել անհրաժեշտ ուսումնական միջավայր ուսանողների համար, միևնույն ժամանակ կարևոր է համարում բուհի կողմից միջոցառումներ ձեռնարկելը այլընտրանքային ֆինանսական միջոցներ գտնելու ուղղությամբ, ինչը կնպաստի բուհի ֆինանսական կայունությանը:

Բուհում ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատումը իրականացվում է հարցումների միջոցով, սակայն դրանց արդյունքների հիման վրա կատարված փոփոխությունների օրինակներ չկան, ինչը կարող է խոչընդոտել ռեսուրսների շարունակական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհը հիմնականում ապահովված է կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներով, վարում է նյութատեխնիկական բազան պարբերաբար համալրելու քաղաքականություն իր ֆինանսական հնարավորությունների շրջանակում, կարևորում է առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների ներառումը ուսումնառության գործընթացում, առկա են ռեսուրսային կարիքների գնահատման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԿՊԻ-ն բավարարում է 7-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵԹԿՊԻ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7–ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ԵԹԿՊԻ-ի հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Կրթության մասին ՀՀ օրենքով», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքով», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության մի շարք որոշումներով, ինչպես նաև ԵԹԿՊԻ կանոնադրությամբ:

Ըստ ինքնավերլուծության՝ բուհն ունի հաշվետվողականության ներքին մեխանիզմներ, ապահովում է գործընթացների թափանցիկությունը և հետադարձ կապը:

Օրենքով սահմանված կարգով ԵԹԿՊԻ-ը նաև հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ ԿԳՄՄՆ-ին, Գիտության կոմիտեին, Պետական եկամուտների կոմիտեին, Վիճակագրական կոմիտեին և այլ պետական գերատեսչությունների:
ԵԹԿՊԻ-ի հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Շահակիցներին հաշվետվողականության քաղաքականության իրականացման ընթացակարգ»-ով: Ինստիտուտն իր հաշվետվողականության համակարգում ներառում է հետևյալ հիմնական ուղղությունները՝ ռեկտորի հաշվետվությունը՝ բուհի խորհրդին, ֆակուլտետների, ստորաբաժանումների և ուսանողական խորհրդի հաշվետվությունները՝ ԵԹԿՊԻ գիտական խորհրդին:

Ռեկտորը հաշվետվություն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդին ստորաբաժանումների աշխատանքների վերաբերյալ: Փորձագիտական խմբին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ռեկտորի հաշվետվությունը, ինչպես նաև ստորաբաժանումների հաշվետվությունները ամբողջությամբ չեն արտացոլում, թե ՌԾ-ի որ կետերն են իրականացվում տվյալ տարվա ընթացքում: Խորհրդում ռեկտորի տարեկան հաշվետվությունները քննարկվում են շահակիցների լայն կազմի հետ և հրապարակվում՝ տեղադրվելով ԵԹԿՊԻ–ի պաշտոնական կայքէջում հայալեզու տարբերակով:

Բուհը մշակել է հաշվետվողականության գնահատման ցուցանիշներ և մեխանիզմներ, սակայն դրանք դեռ չեն գործում: Չնայած այն հանգամանքին, որ ինստիտուտը գործում է թափանցիկության սկզբունքով՝ հաշվետվությունները ներբեռնվում են բուհի կայքում, սակայն տրամադրված տեղեկատվությունը հիմնականում կրում է տեղեկատվական բնույթ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ինստիտուտում դասախոսների, միջին օղակի ղեկավարների և բարձր օղակի ղեկավարների միջև ֆորմալ և ոչ ֆորմալ բնույթի հանդիպումները կրում են հաճախակի բնույթ, ինչը ապահովում է տեղեկատվության արագ փոխանցումը բուհի տարբեր մակարդակների պատասխանատուների միջև:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

ԵԹԿՊԻ–ն ՌԾ–ում նպատակ է սահմանել. «Զնավորել արտաքին և ներքին շահակիցների հետ մասնակցային համագործակցության և հաշվետվողականության մշակույթ՝ նպաստելով հասարակությանը մատուցվող կրթական և այլ ծառայությունների թափանցիկությանը»: ԵԹԿՊԻ-ում իրականացվող բարեփոխումների մասին տեղեկատվությունը հիմնականում արտացոլվում է կայքէջի նորություններ բաժնի,

ինչպես նաև ֆեյսբուքյան և ինստագրամի էջերի միջոցով: Բուհի կայքը ներկայացնում է բուհի մասին ընդհանուր տեղեկատվություն, մասնավորապես առկա են հիմնադիր փաստաթղթեր, որակի ապահովման մասին տեղեկատվություն, ներկայացված են ֆակուլտետները, ամբիոնները, ուսումնական մասը, գրադարանը և ֆիլմադարանը, վարպետության դասերի, կարճաժամկետ վերապատրաստումների, միջազգային համագործակցության մասին տեղեկություն, որոնցից օգտվում են ինչպես ուսանողները, այնպես էլ դասախոսները և այլ շահակիցներ: Կայքում տեղեկատվությունն առկա է միայն հայերեն լեզվով:

Բեմադրությունները և բաց դիտումները լուսաբանվում են «Միջոցառումներ» բաժնում: Փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ շահակիցներն առավել ակտիվ հետևում են Ֆեյսբուքյան էջին, քան կայքէջին: Բուհը նաև հնարավորինս ակտիվացնում է համագործակցությունը ԶԼՄ-ների հետ, կարևորվում է սեփական գովազդային նյութերի հրատարակումը ամենատարբեր ազդագրերի միջոցով և մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող մշակութային միջոցառումներին, մասնավորապես Հայ Ֆեստ փառատոնին:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ԵՊԿԹԻ-ում հետադարձ կապի միջոցներ են բուհի պաշտոնական կայքէջը, ֆեյսբուքյան և ինստագրամի, թելեգրամի էջերը, էլեկտրոնային և թղթային փոստերը: Ֆեյսբուքյան էջն ունի 9500 հետևորդ, մինչդեռ ինստագրամն ունի 16 հետևորդ, թելեգրամը ունի 135 հետևորդ: Նշված էջերում հիմնական հրապարակումները վերաբերում են աշխատանքային հանդիպումներին, գիտաժողովներին, խորհրդի նիստերին, միջազգային թատերական փառատոններին, միջոցառումներին՝ բեմադրություններ, գրքերի և ժողովածուների շնորհանդեսներ: Բավականին ակտիվ է նաև Վանաձորի մասնաճյուղի գործունեության լուսաբանումը սոցիալական ցանցերում: Ինստիտուտն ունի նաև իր պաշտոնական ալիքը Youtube-ում, սակայն այս հարթակում թե՛ ԵԹԿՊԻ-ը, թե՛ հնարավոր շահակիցները դեռևս պասիվ են:

ԵԹԿՊԻ–ն ՌԾ–ում սահմանել է. «ԵԹԿՊԻ-ն ձգտում է բազմակողմանի կապեր ստեղծել իր շրջանավարտների հետ՝ այն նպատակաուղղելով իր զարգացմանն ու շրջանավարտների շարունակական կրթության ապահովմանը:» Բուհ-գործատու-շրջանավարտ կապը ապահովելու համար ժամանակ առ ժամանակ կազմակերպվում են հանդիպումներ, հարցումներ, սեմինարներ, աշխատաժողովներ, քննարկումներ գործատուների դիրքորոշումը պարզաբանելու նպատակով:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ԵԹԿՊԻ-ն հասարակությանը գիտելիքներ փոխանցելու նպատակով կատարում է գիտահետազոտական և հրատարակչական աշխատանքներ, հրատարակում է գիտական «Հանդես» պարբերականը, որը տեղադրվում է նաև բուհի կայքում: Բացի այդ բուհի ՊԴ կազմի և ուսանողների ջանքերով հրատարակվում է «Կինո/Թատրոն» հանդեսը, որը նույնպես տեղադրվում է կայքում:

ԵԹԿՊԻ-ն կազմակերպում է մշակութային միջոցառումներ: ԵԹԿՊԻ ունի ուսանողական թատրոն, որը հանդես է գալիս տարբեր ներկայացումներով, ոչ միայն Երևանում, այլև մարզերում: Ուսանողական թատրոնը բեմադրել է դիպլոմային, ինչպես նաև շրջանավարտների ուժերով այլ բարեգործական ներկայացումներ և հանգանակության արկղի միջոցով կազմակերպել է դրամահավաք՝ 2020թ. Արցախյան պատերազմում ԵԹԿՊԻ զոհված ուսանողների և շրջանավարտների, վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին նյութական աջակցություն ցուցաբերելու նպատակով: Այս առումով ակտիվ գործունեություն է ծավալում նաև Գյումրիի մասնաճյուղը՝ կազմակերպելով ներկայացումների ցուցադրություններ համայնքներում:

Հասարակական գործունեություն է ծավալում նաև Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնին կից գործող ստուդիան, որտեղ ուսանողների և ՊԴ կազմի ուժերով պատերազմի օրերին ցանցեր են գործել, քնապարկեր են կարել ռազմաճակատի համար:

Բացի լրացուցիչ պարապմունքների կազմակերպումից, ստուդիան նաև ռեքվիզիթներ է պատրաստում Համազգային և Մալյան թատրոնների համար:

ԵԹԿՊԻ-ն հնարավորություն է տալիս նաև արտաքին շահակիցներին օգտվելու իր գրադարանի հնարավորություններից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ ԵԹԿՊԻ-ում առկա է ներքևից վերև և վերևից ներքև հաշվետվողականության համակարգ, որն ամփոփվում է ռեկտորի տարեվերջյան հաշվետվությամբ: Այն բավականին ծավալուն է և ներառում է տեղեկություն մագիստրատուրայի, բակալավրիատի և հեռակա բաժինների ընդունելության, պրոֆեսորադասախոսական կազմի, ֆակուլտետների գործունեության, ուսումնակրթական և ստեղծագործական կառույցների, ուսանողական խորհրդի գործունեության մասին, սակայն փորձագիտական խումբը կարևորում է, որ հաշվետվություններում արտացոլվի նաև ռազմավարական ծրագրի գործողությունների տարեկան պլանի կատարումը:

Փորձագիտական խմբի գնահատմամբ, չնայած տարբեր ստորաբաժաններում գործող հաշվետվությունների ձևաչափի, դեռևս վերջնական չէ հաշվետվողականության այնպիսի մեկ միասնական համակարգի առկայությունը, որի շնորհիվ միանգամից կբացահայտվի, թե որտեղ են թերացումները, դրանց պատճառները, ինչպես նաև դրանց վերացման ուղիները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհի քայլերը հաշվետվողականության ապահովման ուղղությամբ, որն իրականացվում է պաշտոնական կայքէջի և ԶԼՄ-ների միջոցով՝ ինստիտուտի գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ տեղեկատվության տարածմամբ: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ լիարժեք եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) կայքէջի առկայությունը կարևոր է բուհի համար, հատկապես միջազգայնացման համատեքստում: Իսկ ԵԹԿՊԻ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության, հաշվետվությունների և ընդունելության վերաբերյալ եռալեզու հրապարակումները կմեծացնեն արտաքին շահակիցների հետաքրքրվածությունը, և վստահությունը ինստիտուտի նկատմամբ: Բուհի կողմից օտարալեզու գովազդային և տեղեկատվական

նյութերի մշակումը կարող է նաև նպաստել օտարերկրյա ուսանողների ներհոսքին ու շարժունության մեծացմանը: Կայքի անգլերեն տարբերակի համալրումը միջազգային ծրագրերի, փոխանակումների և միջազգային գործունեության մասին տեղեկությամբ կնպաստի բուհի հաջողությունների ներկայացմանը միջազգային ասպարեզում:

Դրական է նաև վերջին տարիներին ԵԹԿՊԻ-ի ակտիվ համագործակցությունը շրջանավարտների և գործատուների հետ տարբեր միջոցառումների և հանդիպում-քննարկումների շրջանակներում՝ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները բարելավելու նպատակով:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԵԹԿՊԻ-ի ներգրավվածությունը հասարակությանը գիտելիք փոխանցելու տարբեր գործընթացներում՝ հրատարակումների, փորձի փոխանակման միջոցով: Այս համատեքստում, կարևորվում է մասնավորապես Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնին կից գործող ստուդիայի դերը լրացուցիչ դասընթացների և հանրային գործունեության իրականացման առումով, ինչպես նաև Ուսանողական թատրոնի գործունեությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ բաց դիտումների մասին տեղեկատվության հանրայնացումը կնպաստի հասարակության առավել լայն շերտերի իրազեկմանը բուհի գործունեության մասին, ինչպես նաև հանրության հետ կապերի ամրապնդմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհն ունի հաշվետվողականության մեխանիզմներ, առկա է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հաշվետվողականություն, բուհն ապահովում է գործընթացների հասանելիությունը արտաքին և ներքին շահակիցներին, գործում են հետադարձ կապն ապահովող մեխանիզմներ, ինչպես նաև նպաստում է կարևոր արժեքների փոխանցմանը հասարակությանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԿՊԻ-ն բավարարում է 8-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵԹԿՊԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8–ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԵԹԿՊԻ-ի 2018-2022 թթ. ՌԾ-ում կարևորվել է ինստիտուտի միջազգայնացմանը նպաստող քաղաքականության մշակումը, միջազգային կապերի ընդլայնումը, դասախոսների և ուսանողների շրջանում փորձի փոխանակման իրականացումը, ինչպես նաև ԵԹԿՊԻ-ի կրթական ծրագրերն ու դասընթացները՝ Եվրոպական չափանիշներին համահունչ դարձնելը:

Ըստ ինքնավերլուծության՝ նախորդ փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա ինստիտուտը մշակել է Միջազգայնացման քաղաքականությունը, որի հիմքում հաշվի է առնվել Իռլանդիայի, ՌԴ, Անգլիայի և Ուելսի արվեստի բուհերի օրինակները: Ըստ հաստատված քաղաքականության բուհը նախանշել է միջազգայնացման մի շարք ուղղություններ, ինչպես օրինակ՝ արտագնա և ներգնա ուսանողական շարժունության խթանում, ուսումնական պլանների և կրթական միջազգայանացում, հետազոտության միջազգայնացում և միջազգային համագործակցության ընդլայնում, միջազգային փառատոններին և մրցույթներին բուհի ուսանողների մասնակցության խթանում և այլն:

Կարևորելով բուհի միջազգայնացման խնդիրները՝ բուհում իրականացրել են ենթակառուցվածքային փոփոխություններ. Միջազգային հարաբերությունների բաժինը դարձել է առանձին ստորաբաժանում՝ իր կանոնակարգությամբ և գործառույթներով:

Ներկայացված փաստաթղթերի և հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բուհին հաջողվել է իրականացնել ՌԾ-ում միջազգայնացման նպատակի ներքո սահմանված քայլերի մեծ մասը, ինչպես օրինակ՝ ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության հնարավորությունների ընդլայնումը, արտերկրի տվյալ ոլորտի բուհերի հետ համագործակցության շրջանակի ընդլայնումը, միջազգային փառատոններին ՊԴ կազմի և ուսանողների մասնակցության ապահովումը և այլն:

Նախորդ հավատարմագրումից հետո կնքվել են տարբեր բուհերի հետ հուշագրեր հետագա գործունեությունը խորացնելու համար: Այս համատեքստում կազմակերպվել են դասախոսների և ուսանողների փոխադարձ այցեր: Նկատվում է նաև փառատոների և գիտաժողովների մասնակցության և անցկացման առումով աճի միտում: Մինչև 2017 թ. տարեկան մեկ փառատոնի են մասնակցել, ապա այժմ այդ թիվը հասնում է տարեկան մինչև 10-15-ի: Միջազգային հարաբերությունների բաժինը աջակցություն է տրամադրում ՊԴ կազմին և ուսանողներին՝ փառատոնների մասին տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև փաստաթղթերի ձևակերպման հարցերով: Հարկ է նշել, որ փառատոններին մասնակցության հայտերը քննարկվում են արդ նպատակով ստեղծված հանձնաժողովները՝ նպատակ ունենալով ընտրության գործընթացը դարձնել թափանցիկ:

Փորձագիտական այցի ընթացքում հանդիպումներից պարզ դարձավ, որ բուհի ղեկավարությունը հնարավորության դեպքում փորձում է համատեղել մի քանի միջոցառումներ, օրինակ՝ կազմակերպել վարպետության դասեր՝ հրավիրելով փոխանակման ծրագրերի, միջազգային փառատոնների և գիտաժողովների շրջանակում ժամանած մասնագետներին:

Ինստիտուտի ստորաբաժանումների հետ հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ քայլեր են ձեռնարկվում փոխանակման ծրագրերի քանակը ընդլայնելու ուղղությամբ: Փորձ է արվում նաև դրամաշնորհների հայտեր մշակել ՀՀ այլ բուհերի հետ համատեղ, թեև դրական արդյունքներ այս ուղղությամբ դեռևս գրանցված չեն:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ԵԹԿՊԻ-ում արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման հարցերի համակարգմամբ զբաղվում է Միջազգային հարաբերությունների բաժինը, որը հաշվետու

է Միջազգային և հանրային կապերի գծով պրոռեկտորին: Բաժնի գործառույթներն են՝ համակարգել և իրականացնել ԵԹԿՊԻ-ի միջազգային համագործակցությունը, համագործակցել ինստիտուտի համապատասխան բաժինների հետ ծրագրերի իրականացման ուղղությամբ, ստեղծել և զարգացնել գործընկերային հարաբերություններ արտերկրի առաջատար կրթագիտական կենտրոնների հետ, կազմակերպել տեղեկատվական սեմինարներ միջազգայնացման հարցերի շուրջ, տրամադրել տեղեկությունների բոլոր շահակիցներին ինստիտուտի միջազգայնացման գործընթացների վերաբերյալ և այլն:

Միջազգային հարաբերությունների բաժինը համալրված է երկու մասնագետով (ղեկավար և մասնագետ), որոնք տիրապետում են ռուսերենին և անգլերենին: Բաժնի մասնագետները մասնակցել են վերապատրաստումների:

Միջազգային հարաբերությունների բաժնի ջանքերի շնորհիվ համագործակցության պայմանագրեր են կնքվում ՀՀ և արտերկրի բուհերի հետ: ՌԴ և եվրոպական հաստատությունների հետ համագործակցության շրջանակում, յուրաքանչյուր տարի ուսանողները հնարավորություն են ստանում իրենց աշխատանքները ներկայացնել 8-10 թատերական և կինո փառատոների:

Նախորդ հավատարմագրումից հետո Միջազգային հարաբերությունների բաժինը մեծամասամբ իրականացրել է իր առջև դրված խնդիրները, բացառությամբ մի քանիսի, ինչպես օրինակ՝ ԵԹԿՊԻ-ի կրթական ծրագրերի միջազգայնացումը, համատեղ կրթական ծրագրերի ստեղծումը, իննտիտուտի ՊԴ կազմի և ուսանողների շարժունությունը խթանելու նպատակով անգլերեն դասընթացների կազմակերպումը:

Միջազգային հարաբերությունների բաժինն ունի իր Facebook-յան էջը, որի տեսանելիությունը էականորեն աճել է մինչև 4000 օգտատեր: Այդուհանդերձ, ինստիտուտի կայքէջում միջազգային հարաբերությունների բաժնի գործունեությունը մանրամասն ներկայացված չէ, առկա են միայն ընդհանուր տեղեկություններ և տեղադրված է տարեկան հաշվետվությունը:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ԵԹԿՊԻ-ի Միջազգային հարաբերությունների բաժինն ակտիվորեն աշխատում է տեղական և միջազգային հաստատությունների հետ կապերի ստեղծման և ընդլայնման ուղղությամբ:

Միջազգային հարաբերությունների բաժինը համագործակցում է միջազգային ծրագրեր իրականացնող գրասենյակների (Էրազմուս+, Creative Europe Armenia, DAAD և այլն) հետ: Նշված համագործակցությունների շրջանակում տարեկան 35-60 ուսանող մասնակցում է կարճաժամկետ շարժունության, փորձի փոխանակման տարատեսակ ծրագրերի: Ըստ ինքնավերլուծության՝ երեք տարվա ընթացքում գրեթե 150 ուսանող հնարավորություն է ստացել մասնակցելու միջազգային շարժունության՝ փորձի փոխանակման, փառատոների և մրցույթների (ֆիլմերի ցուցադրում, ներկայացումներ ընդգրկվածություն): 2018-2022 թթ. ուսանողները իրենց ղեկավարների հետ մասնակցել են Չեխիայի, Սլովակիայի, Մոլդովայի, Իսպանիայի և այլ երկրների միջազգային փառատոների, սեմինարների և ֆորումների:

Հարկ է նշել նաև, որ միայն մեկ ուսանող է մասնակցել շարժունության 6-ամսյա ծրագրի, սակայն փորձագիտական հանդիպման ժամանակ պարզվեց, որ ևս երեք ուսանողների փաստաթղթեր նախապատրաստվում են նման ծրագրի համար:

ԵԹԿՊԻ-ն փորձում է համագործակցության եզրեր գտնել ոչ միայն ՀՀ արվեստի ոլորտի բուհերի հետ, այլև այլ համասարանների հետ, ինչպես օրինակ՝ ԵՊՀ, Հայ-ռուսական համալսարան, Հայաստանում ֆրանսիական համալսարան: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերոնշյալ բուհերի հետ համատեղ դրամաշնորհային ծրագրերի մասնակցելու հայտեր են մշակվել, սակայն դրանք հաջողություն չեն ունեցել:

Բուհը համագործակցում է նաև տեղական կազմակերպությունների, թատրոնների և կինոստուդիաների հետ (Ազգային առաջին ալիք, 5-րդ ալիք և այլն), մասնավորպես՝ պրակտիկանների կազմակերպման շրջանակում: ԵԹԿՊԻ-ի ՊԴ կազմն ու ուսանողներն ակտիվորեն մասնակցում են ՀՀ-ում մշակութային միջոցառումներին, ինչպես նաև դրանց կազմակերպմանը, մասնավորապետ «ՀԱՅ ՖԵՍՏ» թատերական փառատոնի, որի շրջանակում բուհը կազմակերպում է նաև գիտաժողով:

Նախորդ հավատարմագրումից հետո հուշագրեր են կնքվել մի շարք արտասահմանյան բուհերի հետ, ինչպես օրինակ՝ Սորբոնի համալսարանի, որի հետ համատեղ անցկացվել է Ս. Փարաջանովին նվիրված միջազգային փառատոն, Իռլանդիայի արվեստի, դիզայնի և տեխնոլոգիաների ինստիտուտի, որտեղի դասախոսները պարբերաբար այցելում են ԵԹԿՊԻ՝ կազմակերպելու դասախոսություններ և վարպետության դասեր, Գերմանիայի Մութեզիուսի դիզայնի և կերպարվեստի համալսարանի, Լեհաստանի Լոձի կինոդպրոցի հետ: Էրազմուս+ շրջանակում ՊԴ կազմի և ուսանողների կարճատև շարժունության ծրագրեր են իրականացվում նաև Մալտայի արվեստի, գիտության և տեխնոլոգիայի ինստիտուտի, Ավստրիայի Կրեմս ան դեր Դոնաույի Դանուբի համալսարանի, Լեհաստանի Կրակովի կերպարվեստի ակադեմիայի, Խորվաթիայի համալսարանների հետ:

Սերտ համագործակցություն է իրականացվում նաև ռուսաստանյան բուհերի, մասնավորապես Ռուսաստանի թատերական արվեստի ինստիտուտի, Մոսկվայի Գերասիմովի անվան կինեմատոգրաֆիայի համառուսական պետական ինստիտուտի (այսուհետ՝ ՎԳԻԿ), Եկատերինբուրգի պետական թատերական ինստիտուտի հետ: ՊԴ կազմը և ուսանողները մասնակցում են այդ բուհերում կազմակերպված գիտաժողովներին և փառատոններին՝ վերադառնալով մրցանակներով և պատվոգրերով: ՎԳԻԿ-ի դասախոսները և ուսանողները ևս այցելել են ԵԹԿՊԻ՝ վերապատրաստումների և մշակութային միջոցառումների լայնածավալ ծրագիր:

ԵԹԿՊԻ-ի մի շարք դասախոսներ ևս մեկնել են արտերկրի բուհեր՝ հայ կինոյի վերաբերյալ դասախոսություններով: Այդուհանդերձ, բուհի կողմից միջազգային ծրագրերի մասնակցության և միջազգայնացմանն ուղղված գործընթացների արդյունավետության գնահատում տեղի չի ունեցել:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ԵԹԿՊԻ-ի ինքնավերլուծության համաձայն՝ ինստիտուտի դասավանդողների 100%-ը, վարչական աշխատակիցների՝ 85 %, ուսանողների 98-100 %

տիրապետում են օտար լեզուների: Սակայն չի նշվում, թե որ օտար լեզվի իմացության տվյալներն են ներկայացած, քանի որ ըստ SWOT վերլուծության՝ ուսանողների և դասախոսների շրջանում լեզվի իմացությունը ցածր մակարդակի վրա է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայացված բարձր տոկոսը վերաբերում է ռուսերենին, իսկ ցածր իմացությունը՝ անգլերենին:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ բակալավրիատի ուսանողներն անգլերեն անցնում են առաջին կուրսում[9], իսկ մագիստրատուրայում՝ առաջին և երկրորդ կուրսերում: Փորձագիտական հանդիպումների ընթացքում շահակիցների կողմից ևս նշվել է, որ անգլերենի ժամերը քիչ են, առկա չեն անգլերեն սովորելու լրացուցիչ հնարավորություններ: Ըստ շահակիցների՝ օտար լեզուների չիմացությունը երբեմն խոչընդոտում է ուսանողների՝ միջազգային փառատոներին և ծրագրերին մասնակցությանը: Մյուս կողմից, նման միջազգային փառատոնների և շարժունության ծրագրերի առկայությունը ուսանողների որոշակի շրջանակում օտար լեզու սովորելու մոտիվացիա է ստեղծել, և նրանք պատրաստ են բարելավել օտար լեզվի իմացությունը սեփական նախաձեռնությամբ:

Օտար լեզվի իմացության ցածր մակարդակը խոչընդոտում է նաև ՊԴ կազմի մի մասին մասնակցելու շարժունության ծրագրերին: Այդ մասին են փաստում նաև շարժունության ծրագրերի մասնակիցների ցանկի ուսումնասիրությունը. դրանց մասնակցում են հիմնականում նույն դասախոսները, որոնք տիրապետում են անգլերենին:

Ըստ ինքնավերլուծության՝ Միջազգային հարաբերությունների բաժինը մշակել է անգլերեն լեզվի լրացուցիչ դասընթացի ծրագիր, որը քննարկվել է թե՛ դասախոսների, թե՛ շահակիցների հետ: Այդուհանդերձ, փորձագիտական այցի շրջանակում հանդիպումներից պարզ դարձավ, որ վերոնշյալ դասընթացները դեռևս չեն պլանավորվում անցկացնել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԵԹԿՊԻ-ի ձեռնարկած միջոցառումները միջազգայնացման և արտաքին կապերի ընդլայնման ուղղությամբ, մասնավորապես միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածքային փոփոխությունը՝ Միջազգային հարաբերությունների բաժնի՝ որպես առանձին կառույցի ստեղծումը և համապատասխան մասնագետներով համալրումը: Այդ մասին է փաստում արձանագրված ակնհայտ առաջընթացը՝ միջազգային փառատոներին մասնակցության աճը և շարժունության ծրագրերի հնարավորությունների ընդլայնումը: Փորձագիտական խումբը համարում է, որ համատեղ հուշագրերի ստորագրումը կարևոր հիմք է հետագա գիտական և ստեղծագործական համագործակցությունների համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Միջազգային հարաբերությունների բաժնի բավականին ակտիվ գործունեությունը մի շարք ուղղություններով՝ միջազգային ծրագրերի հայաստանյան գրասենյակների հետ կապի ստեղծումը, միջազգայնացմանը վերաբերող տեղեկատվության շրջանառությունը, ուսանողներին տրամադրված օժանդակությունը՝ միջազգային ծրագրերին դիմելիս և այլն:

[9] Միտքը վերաձևակերպվել է բուհի դիտարկումների հիման վրա:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև միջազգայնացմանն ուղղված գործընթացների արդյունավետության գնահատումը, ինչը կնպաստի խնդիրների վերհանմանը և զարգացման ուղղությունների պլանավորմանը:

Գնահատելով նկատելի առաջընթացը միջազգայնացման մի շարք ուղղություններով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը պետք է աշխատանքներ ծավալի նաև այլ ուղղություններով: Մասնավորապես, լրացուցիչ դասընթացների տրամադրմամբ ՊԴ կազմի և ուսանողների անգլերենի իմացության մակարդակի բարձրացումը կխթանի ներքին շահակիցների ավելի լայն շերտերի մասնակցությունը շարժունության ծրագրերին, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների միջազգայնացմանը:

Միջազգայնացման համար մեկ այլ կարևոր գործոն է օտար լեզվով կրթական ծրագրերի տրամադրումը, որոնք համադելի են արտերկրի բուհերի նմանատիպ ծրագրերի հետ: Նման ծրագրերի առկայությունը արտասահմանցի ուսանողների ներգրավման հնարավորություն կստեղծի: Տվյալ ուղղությամբ աշխատանքները կարող են սկսվել մի շարք դասընթացների մակարդակում, ինչը հնարավորություն կտա ուսանողներ ընդունել արտերկրի բուհերից շարժունության ծրագրերի շրջանակում: Այս առումով կարևոր է նաև բուհի կայքէջի անգլերեն բաժնի գործարկումը:

Եվս մեկ կարևոր ուղղություն է դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը, ինչը կարող է նաև հավելյալ ֆինանսական միջոցների աղբյուր լինել բուհի համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը պետք է շարունակի արդեն ձեռնակված քայլերի իրականացումը, ինչպես նաև ՊԴ կազմի և ուսանողների շրջանում կազմակերպի վերապատրաստումներ՝ դրամաշնորհների դիմելու անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ փոխանցելու նպատակով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵԹԿՊԻ-ն միջազգայնացումը և արտաքին կապերի ստեղծումը սահմանել է որպես առաջնահերթություն, ձեռնարկել է հստակ քայլեր այդ ուղղությամբ, ստեղծել է առանձին ստորաբաժանում՝ համապատասխան մարդկային ռեսուրսով, գրանցել է ՊԴ կազմի և ուսանողների շարժունության, փառատոններին մասնակցության աճ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԿՊԻ-ն բավարարում է 9-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵԹԿՊԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9–ի պահանջներին գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմնվելով նախորդ փորձագիտական զեկույցում մատնանշված թերությունների վրա, որոնք հիմնականում վերաբերում էին որակի ապահովմանն առնչվող փաստաթղթերի թերություններին, ոչ հստակ ձևակերպումներին՝ ԵԹԿՊԻ-ն նախորդ հավատարմագրումից հետո լրամշակել և հաստատել է ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման քաղաքականությունը, ԵՊԿԹԻ-ի կրթության որակի ապահովման հայեցակարգը, ԵԹԿՊԻ-ի կրթության որակի ապահովման ընթացակարգերը: Վերոնշյալ երեք փաստաթղթերը ամփոփված են ԵՊԿԹԻ-ի Որակի ապահովման ձեռնարկում:

Որակի ապահովումը կարևորված է նաև 2018-2022 Ռազմավարական ծրագրում՝ որպես 8-րդ ռազմավարական ուղղություն, որի շրջանակում առանձնացված են խնդիրներ համապատասխան քայլերով և ԳԱՑ-եր: Որպես որակի ապահովման մշակույթի ձևավորման և ամրապնդման համար անհրաժեշտ քայլերն են սահմանված հարցումների անցկացումը՝ կրթության արդյունավետության և դրանից բավարարվածության նպատակով, ստացված տվյալների վերլուծությունը, ՊԴ կազմի վարկանիշավորումը, ԵԹԿՊԻ-ի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի մշտադիտարկումն ու լրամշակումը, առաջատար բուհերի որակի ապահովման համակարգերի ուսումնասիրությունը և այլն:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում ԵԹԿՊԻ-ի Որակի ապահովման կենտրոնը, որը հիմնվել է 2011թ.-ին ունեցել է ղեկավար և մեկ մասնագետ: Ըստ տրված խորհրդատվությունների հիման վրա բուհի կողմից ներկայացված բարելավման պլանի՝ նախատեսվում էր գնահատել ՈԱԿ կարիքները անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ տրամադրելու նպատակով: Այնուամենայնիվ, ՈԱԿ մասնագետների թիվը չի ավելացել, այլ կրճատվել է՝ 2018թ.-ին կառուցվածքային փոփոխությունների հիման վրա կենտրոնի գործառույթը իրականացնում է միայն ՈԱԿ-ի ղեկավարը, որն ունի նյութատեխնիկական ապահովվածությամբ առանձնասենյակ: Ինքնավերլուծության համաձայն՝ ՈԱ կենտրոնի աշխատակիցները ակտիվորեն մասնակցել են տարբեր վերապատրաստումների, միևնույն ժամանակ իրականացնելով բուհի դասախոսական կազմի վերապատրաստման դասընթացներ: Հստակեցվել են ՈԱ կենտրոնի աշխատակիցների պարտականությունների շրջանակը, և մշակվել պաշտոնի անձնագրերը: Այդուհանդերձ, փորձագիտական այցի արդյունքները ցույց տվեցին, որ գործառույթները չեն կրճատվել, սակայն դրանք իրականացվում են մեկ աշխատակցի կողմից:

Վերոնշյալ կրճատման արդյունքում ենթադրելի է, որ ՈԱԿ-ի ղեկավարը պետք է միանձնյա իրականացնի մոտ 11 գործառույթներ, ինչպիսիք են՝ կազմակերպել և իրականացնել ԵԹԿՊԻ-ի ինքնավերլուծության գործընթացը, ինքնավերլուծության զեկույցի պատրաստումը, կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացների կազմակերպումը, ԵԹԿՊԻ-ի գործունեության, դրա արդյունավետության գնահատման կազմակերպումը և արդյունքների վերլուծությունը տարբեր ուղղություններով, ԵԹԿՊԻ-ում որակի ապահովման համակարգի արդյունավետության վերլուծությունը, եվրոպական և հայաստանյան այլ բարձրագույն ուսումնական

հաստատություններում ներդրված կրթության որակի ապահովման լավագույն մոդելների վերլուծությունը և ներդրման հնարավորությունների գնահատումը, կրթության որակի ապահովման ոլորտում պրոֆեսորադասախոսական կազմի ներքին պատասխանատուների վերապատրաստումը, կրթության որակի ապահովման գործընթացի աշխատանքային խմբերի ձևավորումը և դրանց աշխատանքի համակարգումը, որակի ապահովման բնագավառում եվրոպական և հայաստանյան այլ բուհերի հետ փորձի փոխանակումը և այլն:

Անհրաժեշտության դեպքում, ըստ ինքնավերլուծության, Որակի ապահովման կենտրոնի նախաձեռնությամբ և ԵԹԿՊԻ-ի ռեկտորի համաձայնությամբ և հրամանով ձևավորվում է Որակի ապահովման փորձագիտական խումբ (խմբեր), ինչպես նաև գործընթացներին աջակցում են նաև ԵԹԿՊԻ-ի ռեկտորը, պրոռեկտորները, ստորաբաժանումների ներկայացուցիչները, ուսանողները:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման քաղաքականությունը սահմանում է այն հիմնական սկզբունքները, մոտեցումները և ձևերը, որոնցով ներքին և արտաքին շահակիցները պետք է ներգրավվեն որակի ապահովման մի շարք գործընթացներում, ինչպիսիք են՝ կառավարման, վարչական և ուսումնական գործընթացների շրջանակներում կրթական ծրագրերի մշտադիտարկումն ու գնահատումը, հարցումներին մասնակցությունը, խորհուրդներում, տարբեր նպատակներով ստեղծված հանձնաժողովներում և ինքնավելուծության խմբերում ընդգրկվածությունը:

Փորձագիտական այցի շրջանակում հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ներքին շահակիցների՝ ՊԴ կազմի և ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում արտահայտվում է հիմնականում հարցումներին մասնակցությամբ: Քննարկումները ցույց տվեցին, որ որակի ապահովման գործընթացներին տեղյակ են ստորաբաժանումների ղեկավարները, ամբիոններում որակի պատասխանատուները, մինչդեռ դասախոսները տեղյակ չեն կրթական ծրագրերի և առարկայական նկարագրերի մշակման մոտեցումներից ու չափանիշներից, մասնավորապես՝ վերջնարդյունքների ձևակերպումներից: Ի դեպ, այս մասին նշված է նաև ԵԹԿՊԻ-ի Ինքնավերլուծության 5-րդ չափանիշի SWOT վերլուծության թերությունների հատվածում:

Արտաքին շահակիցները ևս մասնակցում են հարցումներին, իսկ ինչ վերաբերում է կրթական ծրագրերին, դրանց վերջնարդյունքների ձևակերպմանը և տրված որակավորումների որակի գնահատմանը, ապա նրանց մասնակցությունը ապահովվում է այնքանով, որքանով որ որոշ գործատուներ ներգրավված են այդ կրթական ծրագրերում որպես կուրսղեկներ, կամ հրավիրվում են որպես ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահներ:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայումը նախատեսվում է ԵԹԿՊԻ-ի 2018-2022թթ. ՌԾ-ով՝ մասնավորապես առաջադեմ բուհերի

փորձին ծանոթանալու, արտաքին և ներքին բենչմարքինգ իրականացնելու միջոցով: Վերոնշյալը ամրագրված է նաև ՈԱԿ-ի գործառույթներում, և ըստ ինքնավերլուծության, այդ գործառույթն իրականացվում է: Հարկ է նշել, սակայն, որ առկա չեն նման համեմատական վերլուծության ամփոփված արդյունքներ և հանդիպումների ընթացքում չեն մատնանշվել դրանց հիման վրա կատարված փոփոխություններ կամ բարելավումներ:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ԵԹԿՊԻ-ի 2018-2022թթ. Ռազմավարական ծրագրի 8-րդ ուղղության համաձայն՝ նախանշվում էր իրականացնել բուհի գործունեության պարբերական ինքնավերլուծություններ: Այնուամենայնիվ, նման ինքնավերլուծություններ չեն իրականացվել, փորձագիտական խմբին տրվել է ՌԾ-ի միայն մեկ միջանկյալ վերլուծություն՝ հաշվետվություն, որը ամբողջական պատկեր չի տալիս:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման համար ներկայացված ինքնավերլուծության տեքստը ևս հստակ պատկերացում չի տալիս բուհի գործունեության տարբեր ուղղությունների վերաբերյալ: Մի կողմից, տրված տեղեկատվությունը խիստ ընդհանրական բնույթ է կրում, բացի արտաքին կապերին և միջազգայնացմանը վերաբերող չափանիշի և ևս մի քանի չափոփոշիչների, որոնց շրջանակում ներկայացված են ավելի կոնկրետ փաստեր:

Անհրաժեշտ է նշել նաև, որ յուրաքանչյուր չափանիշից հետո տրված է SWOT վերլուծությունը, որը իրատեսական պատկեր է տալիս ինստիտուտի մասին: Այնուամենայնիվ, թվարկված թերությունները հիմնականում չեն բխում ինքնավերլուծության տեքստից:

Ինքնավերլուծությանը կից ներկայացված փաստաթղթերի մի մասը, հիմնականում կանոնադրությունները, ընթացակարգերը, հաշվետվությունները, հավելյալ տեղեկատվություն են ապահովում: Մյուս կողմից, արձանագրությունները, տարեկան պլանները և որոշ այլ փաստաթղթեր անհրաժեշտ տեղեկատվություն չեն պարունակում:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման գործընթացների մասին տեղեկատվությունը ներկայացված է ինստիտուտի կայքում: ՈԱԿ-ի էջում ներբեռնված է Որակի ապահովման ձեռնարկը, ներկայացված է ՈԱԿ-ի գործառույթները: ՈԱԿ-ի էջից կան հղումներ ԵԹԿՊԻ-ի Որակի ապահովման քաղաքականությանը, ընթացակարգերին, հայեցակերպին: Ինչպես արդեն նշվել է, դրանք մեկտեղված են նաև Որակի ապահովման ձեռնարկում: ՈԱԿ-ի էջում կարելի է գտնել նաև «Հաշվետվություններ» հղումը, որտեղ ներկայացված է 2021թ-ի հաշվետվությունը, իսկ «Հարցումներ» հղման ներքո ներբեռնված է «ԵԹԿՊԻ-ուսանողների բավարարվածությունը 2019-2020 ուստարում իրականացված առցանց ուսուցումից-վերլուծությունը»: Հղումներ կան նաև տարբեր ուղեցույցների և ՈԱԱԿ փաստաթղթերի համար:

ՈԱԿ-ը հարցումների մասին տեղեկատվությունը տրամադրում է նաև ԵԹԿՊԻ-ի ստորաբաժանումներին, համագործակցում ամբիոնների որակի ապահովման պատասխանատուների հետ: ՈԱԿ-ը Լրացուցիչ, շարունակական կրթության և ՏՏ կենտրոնի հետ համատեղ նաև պատասխանատու է դասախոսների վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման քաղաքականության, հայեցակարգի և ընթացակարգերի համապատասխան փաստաթղթերի մշակման և լրամշակման փաստը: Այնուամենայնիվ, վերոնշյալ քաղաքականության և ընթացակարգերի լիարժեք իրականացման համար բուհը չի տրամադրում բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսներ: Ավելին, կրճատվել է Որակի ապահովման կենտրոնի մասնագետի հաստիքը: Փորձագիտական խումբը գտնում է, որ կենտրոնի ղեկավարը չի կարող իրականացնել բոլոր գործառույթները, որոնք ենթադրում են մի շարք հարցումներ, տվյալների հավաքագրումներ և վերլուծություններ, համեմատական վերլուծություններ՝ բենչմարքինգ, ֆոկուս խմբերի հետ հանդիպումներ, ՊԴ կազմի վերապատրաստումներ, այդ թվում նաև ԵԹԿՊԻ-ի Գյումրիի և Վանաձորի մասնաճյուղերի հետ աշխատանք և այլն:

Գովելի է, որ ՈԱԿ ղեկավարը իրականացնում է հարցումներ, կազմակերպում է ՊԴ կազմի վերապատրաստումներ: Սակայն առկա չեն այդ հարցումների տվյալների մանրամասն վերլուծություններ և դրանց հիման վրա կատարված առաջարկություններ, բացառությամբ Covid-19 համավարակից հետո իրականացված ՏՏ վերապատրաստումը: Առկա չեն նաև ՊԴ կազմի համար կազմակերպվող վերապատրաստումների արդյունավետության վերաբերյալ հարցումներ և վերլուծություններ, որոնք թույլ կտային բուհին ամբողջական պատկեր ստանալ իրականացված գործընթացների արդյունքում տեղի ունեցած բարելավումների և դեռևս առկա խնդիրների մասին:

Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհի կառավարման, վարչարարության, կրթական ծրագրերի իրականացման գործընթացներում վերհանված խնդիրները, ինչպիսիք են ըստ տարեկան պլանների և հաշվետվությունների՝ Ռազմավարական ծրագրի իրականացման պարբերաբար գնահատման բացակայությունը, կրթական ծրագրերի մասնագրերի և առարկայական նկարագրերի բովանդակության թերի ներկայացումը, պայմանավորված են որակի ապահովման մեխանիզմների ոչ լիարժեք կիրառմամբ: Որակի ապահովման գործընթացներում ՊԴ կազմի հնարավոր լայն շրջանակի ներառումը լրացուցիչ խթան կարող է լինել կրթական ծրագրերի բարեփոխումների ընթացքն արագացնելու համար:

Փորձագիտական այցի շրջանակում անցկացված հանդիպումների ընթացքում ակնհայտ դարձավ, որ բուհում դեռևս չի ձևավորվել որակի ապահովման մշակույթ, քանի որ մյուս ներքին շահակիցները՝ ուսանողները, ևս հաճախ տեղեկացված չեն որակի ապահովման համակարգից և ընդգրկված չեն շատ գործընթացներում, անգամ կրթական ծրագրերի մշակման գործընթացում: Արտաքին շահակիցների առավել ակտիվ ներգրավվածությունը կնպաստի որակի ապահովման գործընթացների լավարկմանը:

Փորձագիտական խումբը շեշտադրում է ՊԻԳԲ շրջափուլի կիրառման անհրաժեշտությունը՝ բուհի ռեսուրսներին համապատասխան՝ գործընթացների հստակ պլանավորման, այնուհետ դրանց արդյունավետ իրականացման համար: Նաև կարևոր է համարում գնահատման համար կիրառվող մեխանիզմների անընդհատ կատարելագործումը՝ հետագա բարելավման ընթացքը կանխորոշելու տեսանկյունից:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵԹԿՊԻ-ին չի տրամադրում համապատասխան ռեսուրսներ կառավարման, վարչարարական և ուսուցման գործընթացներում բուհի որակի ապահովման քաղաքականությունը լիարժեք գործարկելու համար, բուհի գործունեության մի շարք ուղղություններում որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլը մասնակի է իրականացվում, տվյալների հավաքագրման մեխանիզմներն անկատար են, սահմանափակ է արտաքին և ներքին շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԿՊԻ-ն չի բավարարում է 10-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: ԵԹԿՊԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԷԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

Լիլիթ Բաղալյան
Փորձագիտական խմբի ղեկավար

Դեկտեմբերի 15, 2022 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Լիլիթ Բաղալյան՝ 1992-1997 թթ. սովորել է Երևանի պետական լեզվաբանական համալսարանի Ռոմանագերմանական լեզուների ֆակուլտետում: 2008 թ.-ի սեպտեմբերին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Անգլերենի «ավերման» բայերի բառակազմական հնարավորությունները՝ հայերենի զուգադրությամբ» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1997-2019 թթ. աշխատել է Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի Անգլերենի ամբիոնիում որպես դոցենտ: 2019 թ. դեկտեմբերից Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի ամբիոնի վարիչն է:

Նազիրա Մուկուշևա՝ Ղազախստանի արվեստի ազգային համալսարանի Արվեստաբանության ամբիոնի պրոֆեսոր է, արվեստագիտության թեկնածու: Ղազախստանի կինեմատոգրաֆների միության անդամ է: Հեղինակել է 5 գիրք և 140-ից ավելի հոդվածներ: Որպես ժյուրիի անդամ հանդես է եկել մի շարք հանրապետական և միջազգային փառատոններում:

Տիգրան Միմյան՝ 2005 թվականին ստացել է Բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան, 2005-2008 թթ. եղել Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի Արտասահմանյան գրականության ամբիոնի ասիստենտ, 2008-2015 թթ.՝ նույն ամբիոնի դոցենտ: 2015 թ.-ին ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան, 2016 թ.-ին՝ պրոֆեսորի կոչում: 2011թ.-ից անդամակցում է Նշանագիտության գերմանական միությանը, «Համեմատական ուսումնասիրություններ» (Լատվիա, Դաուգավպիլս), «Նշանագիտություն և քննադատություն» (Scopus), «Պրաքսեմա. տեսողական նշանագիտության խնդիրներ» (Scopus) գիտական հանդեսների խմբագրական խորհրդի անդամ է, «Urbis et Orbis». Микроистория и семиотика города» հանդեսի համախմբագիրն է:

Հայկուհի Մուկոյան՝ 1986-1991 թթ. սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, Հաշվողական տեխնիկա ֆակուլտետում: 2011թ.-ի փետրվարին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Սովորողների գեղարվեստական հետաքրքրությունների ձևավարումը համակարգչային դիզայնի ուսուցման գործընթացում» թեմայով և ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2012 թ. սեպտեմբերից աշխատում է Հայկական պետական մանկավարժական համալսարանի, Գեղարվեստական կրթության ֆակուլտետի, Կերպարվեստի ամբիոնիում որպես դոցենտ:

Լիլյա Գրիգորյան՝ 2019 թ. սովորում է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում: Գեղարվեստական կրթության ֆակուլտետի «Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում» բաժնի 4-րդ կուրսի ուսանող է:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

26.09.22 թ. – 29. 09. 22 թ.

N.	26.09.2022 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ԵԹԿՊԻ ռեկտորի պարտականությունները կատարողի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում պրոռեկտորի հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	11:30	12:20	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Հանդիպում ԵԹԿՊԻ խորհրդի անդամների հետ	13:40	14:30	50 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	14:40	15:40	60 րոպե
7.	Հանդիպում շրջանավարտների հետ	15:50	16:50	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	18:30	90 րոպե

N.	27.09.2022 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դեկանների, մասնաճյուղերի ղեկավարների հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների (8-10	11:50	12:50	60 րոպե

	ներկայացուցիչ) հետ			
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողների (8-10 ներկայացուցիչ) հետ	14:10	15:10	60 րոպե
6.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ	15:20	16:00	40 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:10	18:00	110 րոպե

N.	28.09.2022 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Զուգահեռ հանդիպում «Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուների հետ	Զուգահեռ հանդիպում «Ռեժիսուրա» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուների հետ	Զուգահեռ հանդիպում «Կինոարվեստ» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Զուգահեռ հանդիպում «Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում» մասնագիտության կրթական	Զուգահեռ հանդիպում «Ռեժիսուրա» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Կինոարվեստ» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	10:35	11:35	60 րոպե

	ծրագրի դասախոսների հետ					
3.	Զուգահեռ հանդիպում «Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Ռեժիսուրա» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Կինոարվեստ» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:00	14:00	60րոպե
5.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Ուսումնական գործընթացի համակարգման, Միջազգային կապերի, Հեռակա, Նախապատրաստական, Անձնակազմի հաշվառման, Ընդհանուր բաժիններ, Գիտական մաս, Լրացուցիչ, շարունակական կրթության և տեղեկատվական տեխնոլոգիաների, Կարիերայի և պրակտիկայի, Ստեղծարար տեխնոլոգիաների ուսումնական կենտրոններ, Գրադարան, Ֆիլմադարան, Ուսանողական թատրոն-լաբորատորիա, Հաշվապահություն, Արխիվ) ղեկավարների հետ			14:10	15:30	90 րոպե
6.	Բաց հանդիպում			15:40	16:20	40 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:30	19:00	150 րոպե

N.	29.09.2022 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Որակի ապահովման կենտրոնի ղեկավարի և պատասխանատուների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	10:40	12:40	120 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
4.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:20	15:20	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	15:30	17:30	120 րոպե
6.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Ամբիոնների, ստորաբաժանումների տարեկան պլաններ	2
2.	Ամբիոնների հաշվետվություններ	2
3.	Նիստերի արձանագրություններ	2
4.	Ռազմավարական պլանի կատարողականի վերաբերյալ միջանկյալ զեկույց	2
5.	Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր	2
6.	Ամբիոնների կողմից իրականացված ընդունելության տվյալների, աշխատաշուկայի պահանջների, գործատուների կարծիքների, ուսանողական հարցումների արդյունքների, շրջանավարտների զբաղվածության տվյալների բենչմարքինգ, վերլուծություններ	2
7.	Ծանրաբեռնվածության նորմատիվներ և նմուշներ	2
8.	Մասնագիտական կրթական ծրագրերի զարգացման և մշտադիտարկման ընթացակարգ	2
9.	Բուհի գործունեության ընթացիկ գնահատման արդյունավետության ցուցանիշներ	2
10.	Պաշտոնների անձնագրեր և հաստիքացուցակ	2
11.	Լրացուցիչ, շարունակական կրթության և SS կենտրոնի հաշվետվություն	2
12.	Ռեկտորատի, ֆակուլտետի, մասնագիտական ամբիոնների նիստերի քաղվածքները, վերլուծությունները և քննարկումները	2
13.	Մատյաններ, պրակտիկայի մատյաններ	3
14.	Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի շրջանավարտների դիպլոմային ֆիլմեր	3
15.	Ավարտական աշխատանքներ	3
16.	Դասալսումների մատյաններ	3
17.	Արվեստի տեսության և պատմության կառավարման բաժնի ռեֆերատներ	3

18.	Աշխատանքային պլաններ	3
19.	Պրակտիկաների լրացրած օրագրեր	3
20.	Կրթական ծրագրերի բենչմարքինգ	3
21.	Մագիստրատուրայի ընդունելության նոր կանոնակարգ	4
22.	Ընդունելության գործընթացի նախապատրաստման և կազմակերպման միջոցառումների ծրագիր	4
23.	Ուսանողների շարժունության հիմքեր և տվյալներ	4
24.	Erasmus+ ծրագրին մասնակցած ուսանողների ցանկ	4
25.	Շրջանավարտների տվյալների բազա	4
26.	Ավարտական աշխատանքներ և թեզեր	4
27.	Վարչական մասին, ֆակուլտետներին և ամբիոններին, ուսումնաօժանդակ մասին և այլ ենթակառուցվածքների աշխատանքներն առնչվող իրականացված հարցումների լրացված օրինակներ	4
28.	Որակավորման բարձրացման և մասնագիտական կատարելագործման (ՈԲՄԿ) ծրագիր	5
29.	Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ինքնագնահատման ընթացակարգ և գործիքակազմ	5
30.	Վարկանիշավորման փաթեթներ	5
31.	Ուսանողների հարցման թերթիկ, ամբիոնի վարիչի դասալսումների գրառումներ, անմիջական ղեկավարի և գործընկեր դասախոսների կողմից գնահատումը և ինքնագնահատումը հավաստող հիմքեր	5
32.	Գիտաժողովներին մասնակցության հավաստող հիմքեր	6
33.	Ուսանողների մասնակցությամբ հրատարակված հետազոտությունների ցանկ	6
34.	Բյուջե և նախահաշիվ՝ վերջին երեք տարիների համար	7
35.	Ազդագրեր, պարբերականներ	8

36.	Կայքի և սոցցանցերի դիտումների վիճակագրություն	8
37.	Սորբոնի համալսարանի հետ անցկացված գիտաժողովին առնչվող նյութեր	9
38.	Միջազգային հարաբերությունների ստորաբաժանման տարեկան գնահատում	9
39.	Որակի ներքին ապահովման համակարգի հանձնաժողովի նիստերի արձանագրություններ	10
40.	Որակի ապահովման համակարգի կողմից իրականացված հարցումների վերլուծություններ	10
41.	ԵԹԿՊԻ-ի գործունեության, դրա արդյունավետության գնահատման կազմակերպում և արդյունքների վերլուծություն տարբեր ուղղություններով	10
42.	Դասընթացի և կրթական ծրագրի գնահատումների լրացրած ձևանմուշներ ներքին և արտաքին շահակիցների կողմից	10
43.	Որակի ապահովման համակարգի առաջավոր փորձի ուսումնասիրություններ, վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. արվեստանոցներ,
3. պարասրահներ,
4. տեսասրահներ,
5. Ստեղծարար տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն,
6. «Անրի Վեռնոյ» կինոսրահ,
7. ստորաբաժանումներ,
8. գրադարան,
9. ընթերցասրահ,
10. ֆիլմադարան,
11. արխիվ,
12. պահոց,
13. դահլիճ,
14. հանդերձարան,
15. բուժկետ։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԱԱՑ- գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ
ԵԹԿՊԻ-Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ
ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր
ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ- որակի ապահովում
ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ
ՊԴ կազմ-պրոֆեսորադասախոսական կազմ
ՌԾ- ռազմավարական ծրագիր
ՈՒԳԸ- ուսանողական գիտական ընկերություն
ՈՒԽ- ուսանողական խորհուրդ
ՈՒՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ